

Հիմնային

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱԿԱՐԱԳՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խոմբագրական

— խորհուրդ՝

Գաղղիկ Հարովեյտյան
Երևան Հարովեյտյան
Վահե Մովսիսյան
Լևոնյա Հովհաննիսյան
Վարերի Պողոսյան
Ռաֆայել Պապյան
Առուշան Տալրյան

Գլխավոր խմբագիր՝

Գ. Ռիազ Ռ-շատինի

Խոմբագրաւթյան նասգեն
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(45)
2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒՑԱԿԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԳ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՐՆ

*ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՅՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ
8. ԳՐԻԳՈՐՅԱՆ 4

II. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (692-703)

* ՍԴՈ-692-2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏՆԻՒԻ 9-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎԱՍՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՊԱՐԾՎԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՎԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎԱՍՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՊԱՐԾՎԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՎԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՀԻՍՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ ՓՈԽԸՆՔՈՒՄԱՆ ՀՈՒԾԱԳԻՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՐՏԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 11

* ՍԴՈ-693-2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏՆԵՐԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՌՈՒՄՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏԵՍՄԱԿԱՆ ԿԱՊԻՐԻ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍՊԱՐԾՎԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏՆԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՍՊԱՏԱՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 13

* ՍԴՈ-694-ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ՝ «ԲՈԼՈՐ ՀԱՄԱԳԱՅՆԱՔՆԵՐՈՒՄ ՍԱՀԱՊԱՏՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՍԱՍԻՆ» ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 16

* ՍԴՈ-695-2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄՐԵՐԻ 6-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽԱՏՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՏՄՓԵԼ ԿԱՄԽԵԼՈՒ ՍԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 19

* ՍԴՈ-696-2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏՆԵՐԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՌՈՒՄՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐԱՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ» ՀԱՍՊԱՅԱԿՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 22

* ՍԴՈ-697-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՌԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՏՄՓԵԼ ԿԱՄԽԵԼՈՒ ՍԱՍԻՆ ՀԱՍՊԱՅԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 25

* ՍԴՈ-698-2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄՐԵՐԻ 16-ԻՆ ԲԵՌԵՆԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐԱՍԱՆԻՅԻ ԴԱՇՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՍՆՅԱՅ ԹՈՒՅԵԼԸ ՎԱՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ ԱՆՁԱՅՆ ՀԵՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱՆՅԻԿ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ (ՀԱՍՊԱՅԱԿՐԻ ՀԵՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ) ՀԱՍՊԱՅԱԿՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԸ ՀԱՍՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ 28

* ՍՈՒ-699-1979 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԲԵՇՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՊԵՏԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	33
* ՍՈՒ-700-ՔԱՂԱՔԱՅԻ ՈՈՒԹԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 24 ԳԼԽԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	36
* ՍՈՒ-701-ՔԱՂԱՔԱՅԻ ԻՐԻՆԱ ԵԴԻԿԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 68 ՀՈԴՎԱԾԻ 15-ՐԴ ՍԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 230 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 4.1. ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 231.2. ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 1-3 ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	42
* ՀԱՏՈՎ ԿԱՐԾԻՔ	48
* ՍՈՒ-702-ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԱՐԱՅԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 231.2. ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 3-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ, ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	50
* ՍՈՒ-703-«ԻՄՊԻՉՄԵՆՏ» ԴԱՅԻՆՔԻ, «ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ», «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԵՎ «ՀԱՆՐԱՊԵՏԵՈՒԹՅՈՒՆ» ԿՈՆՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՅԻՆ 19-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՍԱՍՏԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՍՊՈՐՆԵՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՍԱՍԻՆ» ԹԻՎ 149-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	60
III. ՏԵՂԵԿԱՏՈՒԹՅՈՒՆ	
* ԵՐԵՎԱՆՅԱՆ 12-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՔ գ. ԱՇՏՈՒՆԻՒ	88
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	91



Տիգրան ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ դատական դեպարտամենտի
դատական պրակտիկայի ամփոփման
վարչության մասնագելիք*

**ՔԱՂԱՔԱՅՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱԲԱՆ ԴԻՄԵԼՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ**

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Այս դրույթի կարևորությունն այն է, որ ըստ ՀՀ Սահմանադրության 114-րդ հոդվածի՝ այն փոփոխման ենթակա չէ: Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխին, ապա այն ամբողջությամբ նվիրված է մարդու իրավունքներին: Միաժամանակ, տեղին է նշել, որ սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հոչակեն մարդու սահմանադրական իրավունքները, այլև՝ առավելագույնս հստակ, սահմանեն դրանց իրացման երաշխիքները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ անկախ սահմանադրական վերահսկողությունն իրականացնող համակարգի բնույթից, հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ ֆիզիկական անձն իր սահմանադրական իրավունքները պաշտպանելու և նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը բարձրացնելու ու դատական կարգով լուծում ստանալու հնարավորություն ունենա:

Այս առումով, մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում իր ուրույն տեղն ունի սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինը: Իհարկե, նշվածը չի վերաբերում բոլոր պետություններին, քանի որ ոչ բոլոր երկրներում է, որ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինն նման լիազորություն է վերապահված, սակայն, չի կարելի ժխտել նաև այն փաստը, որ նման երկրների թիվն աստիճանաբար ընդլայնվում է:

Վերջին տասնամյակների փորձը վկայում է այն մասին, որ անհատական դիմումների հիմն վրա սահմանադրական վերահսկողությունը սովորաբար արմատավորվում է սահմանադրական դատարանի կազմակորումից որոշ ժամանակ անց: Ավստրիայում անհատական դիմումների հիմն վրա սահմանադրական դատարանի կողմից քաղաքացու իրավունքների պաշտպանության կարգն արմատավորվեց միայն 1975թ.-ից հետո: Այն, հետագայում, արմատավորվեց նաև Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում և այլ պետություններում: Կարելի է ասել, որ այստեղ բա-

ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ցառություն չէր նաև ՀՀ-ն, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների հիման վրա իրավունքների պաշտպանությունն իրականացվում է սկսած 2006թ. հուլիսի 1-ից՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանը կազմավորվել է վերոհիշյալ լիազորությամբ օժտվելուց դեռ տաս տարի առաջ:

ՀՀ- ում սահմանադրական դատարանի կողմից ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա գործերի քննությունը սահմանվել է 2005թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Ըստ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի, որտեղ սահմանվում են, թե ովքեր կարող են ՀՀ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ սահմանադրական դատարան, 6-րդ կետում ամրագրում է ստացել նաև այն դրույթը, ըստ որի՝ ՀՀ սահմանադրական դատարան կարող է դիմել նաև յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Այս կարևորագույն դրույթի ամրագրումը ՀՀ Սահմանադրության մեջ արդեն իսկ թույլ է տալիս խոսել իրավակիրառ պրակտիկայում մարդու իրավունքների պաշտպանության հնարավորությունից ոչ միայն եռաստիճան դատական համակարգի, այլև սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Ուսումնասիրելով սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի իրավասությունները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում՝ ուշադրության է արժանի նաև միջազգային փորձը: Այստեղ կարելի է առանձնացնել մի քանի հիմնական մոտեցումներ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի վերահսկողություն: Առաջին խմբի մեջ են մտնում այն երկրները, որտեղ քաղաքացիներն առանց որևէ նախապայմանների սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին դիմելու իրավունք ունեցող սուրյեկտներ են:

Հաջորդ խումբն իր հերթին կարելի է բաժանել երկու ենթախմբի. նախ, եթե մարդու սահմանադրական իրավունքի հարցը կոնկրետ վերահսկողության շրջանակներում միջնորդավորված ձևով դառնում է սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի քննության առարկա և, եթե հարցը քննության առարկա է դառնում վերացական վերահսկողության ճանապարհով:

Սուաջին ենթախմբի լավագույն օրինակ է Խոտական, որտեղ քաղաքացին նախ պետք է հայցադիմում ներկայացնի ընդհանուր իրավասության դատարան: Եթե կողմերը կամ նրանցից մեկը գտնում են, որ հարցն առնչվում է նորմատիվ ակտի սահմանադրականության խնդրին, ապա ժամանակավորապես դադարեցվում է գործի քննությունը և դիմում է ներկայացվում սահմանադրական դատարան: Ինչ վերաբերում է հաջորդ ենթախմբին, ապա դրա վառ օրինակ կարող է հանդիսանալ Ավստրիան, որտեղ ի տարբերություն Խոտականի սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին դիմելու իրավունք ունեն միայն երկրորդ աստիճանի և

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

բարձրագույն դատական ատյանները: Այս դեպքում, արդեն, գործ ունենք մասնակի կոնկրետ և մասնակի վերացական խառը համակարգի հետ:

Հստ էության առաջին տարրերակն առավել ընդունելի է, քանի որ, եթե որևէ օրենք պարունակում է հակասահմանադրական դրույթ, ապա առավել նպատակահարմար է նրա մեջ շտկում մտցնել միանգամից, քանի որ, եթե գործը հենց ամենացածր դատական ատյանում էլ լուծվի և չբողոքարկվի առավել բարձր դատական ատյան, (թեկուզ վերջինս իր հերթին հնարավորություն ունի դիմելու սահմանադրական դատարան), ապա փաստացի Սահմանադրությանը հակասող նորմը կգործի, նրանով կկարգավորվեն հասարակական հարաբերություններ: Ծիշտ է, հնարավոր է, որ տվյալ ուղղումը որևէ օրենքէ լուրջ հետևանքներ չառաջացնի, բայց չի բացավում նաև իրերի այնպիսի դասավորություն, որի ժամանակ հակասահմանադրական իրավահարաբերությունները շտկելը կամ անհնարին լինի, կամ էլ առաջացնի բազմարիկ խնդիրներ:

Մարդու իրավունքների պաշտպանության մասին խոսելով անհրաժեշտ է նշել, որ մարդու իրավունքները, այդ մարդու վարքագծի թույլատրելի չափն է, որն ապահովում է պետության կողմից, և ինչպես նշված է ՀՀ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում, սահմանադրական դատարանը կարող է գործերը քննել միայն համապատասխան դիմումի հիման վրա: Այսինքն, անկախ նրանից, թե մարդու իրավունքները խախտվել են թե ոչ, միևնույն է, մարդն ինքը պետք է որոշի, թե կարիք կա՝ արդյոք, որ իր իրավունքները պաշտպանվեն, և այստեղ արդեն ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու չէ ինքնուրույն, իր հայեցողությամբ միջամտել և կատարել գործի քննություն:

Միաժամանակ, միջազգային փորձը վկայում է այն մասին, որ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից քննված նորմատիվ ակտերի սահմանադրականությանը վերաբերող գործերի ճնշող մեծամասնությունը քննվում է ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա: Օրինակ՝ Սլրվենիայում նորմատիվ ակտի սահմանադրականության հարցով քննվող գործերի շուրջ 80%-ը քննության է ընդունվում ֆիզիկական անձանց դիմումների հիման վրա, 20%-ը՝ պետական մարմինների: Այս տեսակետից ուշագրավ է նաև ՀՀ-ի օրինակը: Մասնավորապես, ըստ ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. թիվ 1 տեղեկագրում տպագրված «ՍԴ 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ» հաղորդման՝ ՀՀ սահմանադրական դատարանում 2006 թ-ին մուտքագրվել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 287 դիմում, ինչպես նաև այդպիսի իրավասություն չունեցող սուբյեկտների 381 դիմում: ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կողմից փաստացի դիմումների պատկերն այսպիսին է՝ ՀՀ Նախագահ՝ 47 դիմում, ՀՀ Ազգային ժողով՝ 0 դիմում, պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ՝ 2 դիմում, կառավարություն՝ 0 դիմում, տեղական ինքնակառավարման մարմիններ՝ 0 դիմում, ֆիզիկական անձինք՝ 221 դիմում, իրավաբանական անձինք՝ 13 դիմում, դատարաններ՝ 1 դիմում, գլխավոր դատախազ՝ 1 դիմում, մարդու իրա-

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

փունքների պաշտպան՝ 2 դիմում, Հանրապետության նախագահի թեկնածուներ՝ 0 դիմում և պատգամավորության թեկնածուներ՝ 0 դիմում:

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ ՀՀ սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու քանակով ամենից շատ դիմումներ են ներկայացրել ֆիզիկական անձինք: Ընդ որում, ուշագրավ է այն հանգամանքը, որ 2006թ.-ին 4 անհատական դիմումներով ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել տվյալ դիմումներում նշված համապատասխան օրենքների վիճարկվող դրույթները:

Այս առումով հատկանշական է նաև 2007թ. հուլիսի 24-ին ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշումը, որի համաձայն ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի դրույթները: Նույն որոշմանը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև 292 հոդվածի 5-րդ կետը, 297 հոդվածը, 363 հոդվածի 2-րդ մասը, 394 հոդվածի 5-րդ մասը, 398 հոդվածի 6-րդ մասը 421 հոդվածի 3-րդ մասի դրույթները եւ 419 հոդվածի 2-րդ կետի լրացուցիչ նախաքննություն նախապետող դրույթը:

Նշվածը կարևորվում է հայրեական այն դեսանկյունից, որ իրավակիրառ պրակիկան ինքնին ապացուցում է, որ քաղաքացիներին նման հնարավորություն ընձեռելն իր դրական ազդեցությունն է բռնում Հանրապետության իրավական համակարգի ձևավորման գործընթացում:

Ինչպես տեսանք, ընդամենը մի դիմումի հիմնան վրա ՀՀ սահմանադրական դատարանը հակասահմանադրական և անվավեր է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, որոնք լինելով օրենսգրքի բաղկացուցիչ մասեր երկար տարիներ պարտադիր ուժ են ունեցել և դրանցով կարգավորվել են իրավահարաբերություններ: Մինչդեռ պարզվում է, որ վերոնշյալ դրույթները եղել են հակասահմանադրական, չնայած այն հանգամանքին, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք հնարավորություն են ունեցել վիճարկելու դրանց սահմանադրականությունը՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու միջոցով: Միայն ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելուց հետո, երբ քաղաքացիներին հնարավորություն ընձեռվեց սեփական դիմումների հիմնան վրա ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկել օրենքների սահմանադրականությունը՝ իրավիճակը փոխվեց և վերոնշյալ նորմերը, որոնք մինչ այդ հիմք էին հանդիսացել քրեական դատարանություններ կարգավորելու համար, ճանաչվեցին հակասահմանադրական:

Հարկ է նշել նաև, որ անհատական դիմումների հիմնան վրա քննված քաղաքի գործերով ՀՀ սահմանադրական դատարանը օրենքի վիճարկվող նորմերը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Սակայն, դատարանն իր որոշումների պատճառաբանական մասում արձանագրել է նաև իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են մարդկանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը:

ԳԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Միաժամանակ, որպեսզի սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմիններն ամբողջությամբ կարողանան կատարել իրենց առաքելությունը, անհրաժեշտ է, որպեսզի երկրում ապահովվի սահմանադրականություն:

Սահմանադրությունից մինչև իրական սահմանադրականություն հաստատելու ճանապարհը խելամիտ անցնելու համար բավարար չեն միայն արժեհամակարգային նոր կողմնորոշումները և հին մտայնության հաղթահարումը: Որպես պարտադիր նախադրյալներ անհրաժեշտ են որ՝ երաշխավորված լինի իրավունքի գերակայությունը, ապահովվի իշխանությունների հստակ տարանջատումն ու հավասարակշռումը, ժողովրդականությունը սահմանադրական սկզբունքից դառնա գործուն իրողություն, ապահովվի իշխանության ինստիտուտների լեզվիմությունը, Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգը լինի ամբողջական ու կենտրոնակ, երաշխավորվի դատական համակարգի գործունակությունն ու անկախությունը¹:

Բնականարար, այս ամենը փաստում է բուն իրականությունը, որը մեկ անգամ ևս հիմնավորում է այն կոտ տեսակետների ճշմարտացիությունը, առանց որոնց հնարավոր չեն պահովել հասարակական հարաբերությունների բնականոն զարգացումը: Իսկ այն դեպքում, եթե երաշխավորված չլինի իրավունքի գերակայությունը, եթե բացակայեն իշխանության թևերի միջև հստակ տարանջատումն ու հավասարակշռումը, բնական է, որ ժողովրդականությունը կլինի զուտ ձևական, իսկ նման դեպքում անհմաստ կլինի խոսել Սահմանադրության գերակայությունից ու դատական իշխանության անկախությունից:

Խոսելով քաղաքացիների դիմումների հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի կողմից օրենքների սահմանադրականությունը պարզելու մասին, միաժամանակ, անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ միայն օրենքների սահմանադրականությունը պարզելը դեռևս չի նշանակում, որ իրականացվում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանություն: Չե՞ որ, քաղաքացիները մասնակցում են քաղմարիկ իրավահարաբերությունների, որոնք միայն օրենքներով չեն որ կարգավորվում են:

Սահմանադրության պաշտպանությունը միայն սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի պարտականությունը չեն: Սահմանադրության իրավական պաշտպանությունը բոլոր պետական մարմինների և պաշտոնատար անձանց խնդիրն է և պարտականությունը, որն իրականացվում է նրանց կողմից տարբեր իրավական միջոցների կիրառմամբ՝ իրենց իրավասության սահմաններում²:

Մարդկի ստեղծում են պետությունը, որպեսզի այն ծառայեցնեն իրենց և այս առումով պետական բոլոր մարմինների ու տեղական ինքնակառա-

¹ Տես՝ Գ. Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և Ժամանակի մարտսահրավերները, -Երևան 2005, էջ 253-254.

² Տես՝ Юдин Ю. Л., Модели конституционного правосудия /Сравнительное конституционное право/ Овт. ред. В. Е. Чиркин. - М., 1996. - С. 158.

վարման մարմինների կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելը: Սակայն պրակտիկայում հաճախ վերոնշյալ մարմինները ոչ միայն չեն պաշտպանում, այլև՝ տարբեր շարժառիթներից ելնելով, իրենց գործողություններով ուսնահարում են այդ իրավունքները:

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ մարդկանց իրավունքներն ու ազատությունները միայն օրենքների կիրառման ժամանակ չեն, որ կարող են խախտվել, դրանք կարող են խախտվել նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց հակասահմանադրական ակտեր ընդունելով արդյունքում:

Այդ խնդիրը կարևորվում է հատկապես նրանով, որ նման իրավիճակ առաջանալու դեպքում քաղաքացիներն ուղղակիորեն զրկված են անմիջականորեն իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Միաժամանակ չի բացառվում, որ վերջիններս ընտրեն իրավունքների պաշտպանության դատական ձևը, որի ժամանակ դատարանը տեսնելով, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձինք համապատասխան ակտն ընդունել են դեկավարվելով այնպիսի օրենքով կամ օրենքներով, որոնք հնարավոր են, որ հակասում են երկրի Սահմանադրությանը՝ ՀՀ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո, կասեցնեն գործի քննությունը և դիմեն՝ ՀՀ սահմանադրական դատարան՝ տվյալ օրենքի սահմանադրականությունը պարզելու խնդրանքով: Սակայն չի բացառվում նաև այնպիսի իրավիճակ, եթե այս ամենը տեղի չունենա այն պարզ պատճառով, որ տվյալ գործը քննող դատարանն այդ գործում ոչ մի հակասահմանադրական երևոյթ չնկատի և օրենքով նախատեսված կարգով չփոխի՝ ՀՀ սահմանադրական դատարան:

Նշվածը հատկապես կարևորվում է այնքանով, որքանով գործող համակարգը չի կարող առավել արդյունավետ լինել, քանի դեռ հստակ ամրագրում չի ստացել այն դրույթը, որի համաձայն յուրաքանչյուր ոք հնարավորություն ստանա վիճարկելու նաև իր նկատմամբ կայացված ցանկացած ենթաօրենսդրական ակտի սահմանադրականությունը: Միայն տվյալ դրույթի ամրագրմամբ կարելի է ամբողջացնել քաղաքացու սահմանադրական դատարան դիմելու իրավունքի արդյունավետությունը, քանի ոք քաղաքացու իրավունքները կարող են խախտվել ոչ միայն հակասահմանադրական օրենքների, այլև՝ հակասահմանադրական այլ իրավական ակտերի հետևանքով:

Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ սահմանադրական փոփոխությունների արդյունքում քաղաքացիներին ընձեռված այն հնարավորությունը, որի համաձայն վերջիններս հնարավորություն են ստացել դիմելու՝ ՀՀ սահմանադրական դատարան՝ ամբողջությամբ արդարացնում է իր վրա դրված առաքելությունը: Տվյալ դեպքում առաջ է գալիս մի հարց՝ ինչո՞ւ քաղաքացիներին հնարավորություն չընձեռել, որպեսզի նրանք իրենց իրավունքներն ու ազատությունները կարողանան պաշտպանել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

պաշտոնատար անձանց այն իրավական ակտերից, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Կարծում ենք, որ առաջարկը ոչ միայն արդարացի է, այլև բխում է մարդու իրավունքների ու ազատությունների առավել արդյունավետ և ամբողջական պաշտպանական համակարգ ստեղծելու տեսանկյունից:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանության հարցը դարձել է սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից մեկը, և այն հաջողությամբ կարելի է իրականացնել առաջին հերթին անհատական դիմումների հիման վրա: Այս հարցի կարևորությունն այն է, որ անհատական դիմումներն առաջինն են ի ցույց դնում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ուսնահարումը, ինչու չեն, նաև հետագայում նման իրողությունները բացառելու ճիշտ և արդյունավետ ճանապարհները:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐված՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՎԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՎԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՓՈԽԸՆԹԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՔԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

17 ապրիլի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (գեղկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիջանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հունիսի 9-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության միջեւ Երեւանում Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության գրասենյակ հիմնելու մասին փոխմբոնման հուշագրի լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետագործելով լրացուցիչ արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության միջեւ Երեւանում ԵԱՀԿ գրասենյակի հիմնելու մասին փոխարժեումնան հուշագրի լրացուցիչ արձանագրությունն ստորագրվել է 2006 թվականի հունիսի 9-ին՝ Երեւանում:

Լրացուցիչ արձանագրությամբ նախատեսվում է Սյունիքի մարզում բացել ԵԱՀԿ ծրագրերի իրականացման առանձին գրասենյակ՝ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կողմից Սյունիքի մարզում իրականացվող տնտեսական եւ բնապահպանական ուսումնասիրությունների, ինչպես նաև տարրեր ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով:

2. ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակների վրա տարածվում են փոխարժեումնան հուշագրով Գրասենյակի համար նախատեսված արտոնություններն ու անձեռնմխելիությունը:

ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակների գործողության ժամկետը եւ գործունեության շրջանակը որոշվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության եւ Գրասենյակի միջեւ փոխադարձ համաձայնությամբ:

3. Լրացուցիչ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը չի ստանձնում ֆինանսական պարտավորությունները:

4. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2006 թվականի հունիսի 9-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության միջեւ Երեւանում Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության գրասենյակի հիմնելու մասին փոխարժեումնան հուշագրի լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17 ապրիլի 2007 թվականի
ՍՊԸ-692



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
Ո-ՈՒՄՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱԾՆՏԵՍԱԿԱՆ
ԿԱՊԵՐԻ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» 1991 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
ՀԱՄԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ.Հովհաննիսյանի (նախագահող), Կ.Բալայանի, Ֆ.Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հոկտեմբերի 4-ին Երեւանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռումինիայի կառավարության միջեւ առեւրատանտեսական կապերի եւ գիտատեխնիկական համագործակցության մասին» 1991 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված համաձայնագիրը փոփոխող արձանագրության մեջ ամրագրված պարտավիրությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արդի է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 19-ի դիմումը սահմանադրական դատարան:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Վ. Շմարիտյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

Արձանագրությունն ստորագրվել է 2006թ. հոկտեմբերի 4-ին՝ Երեւանում, 1991 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռումինիայի կառավարության միջև առեւտրատնտեսական կապերի եւ գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

Նշված համաձայնագրում փոփոխություններ կատարելը, իր հերթին, նպատակ ունի ընդլայնել եւ ամրապնդել Պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեցող կապերը տնտեսական, արդյունաբերական եւ գիտատեխնիկական համագործակցությունը մասին անհրաժեշտությունը պայմանավորված է Ռումինիայի՝ 2007 թվականի հունվարից Եվրոպական միությանն անդամակցելու հանգամանքով:

Արձանագրությունը վերոհիշյալ համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում: Այն նախատեսում է համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ ուղղված, մասնավորապես, երկու երկրների միջև տնտեսական, արդյունաբերական, գիտական եւ տեխնոլոգիական համագործակցությունը համակարգող համատեղ խառը հանձնաժողովի խնդիրների շրջանակի ընդլայնմանը՝ կապված տնտեսական կապերի զարգացման եւ հեռանկարների ուսումնասիրության, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում Պայմանավորվող կողմերի ընկերությունների միջև կապերը եւ համագործակցությունը դյուրացնելու եւ խրախուսելու, ներդրումային դաշտում բարենպաստ պայմաններ ստեղծելու, տեխնոլոգիաների փոխանակման, ինչպես նաև վերը թվարկված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ կազմակերպչական բնույթի գործառույթներ իրականացնելու հետ:

Հայկական կողմը պարտավորվում է կիրառել համաձայնագրի դրույթները՝ առանց խախտելու այն պարտավորությունները, որոնք բխում են Եվրամիությանը Ռումինիայի անդամակցությունից, ԵՄ կամ ԵՄ եւ նրա անդամ պետությունների եւ, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև կնքված ցանկացած համաձայնագրից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. 2006 թվականի հոկտեմբերի 4-ին Երեւանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև առեւտրատնտեսական կապերի և գիտատեխնիկական համագործակցության մասին» 1991 թվականի հոկտեմբերի 4-ին ստորագրված համաձայնագիրը փոփոխող արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**17 ապրիլի 2007 թվականի
ՍՊԸ-693**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
«ՔՈԼՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԳՐԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Դոկիմյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների եւ իիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հաճախատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տաթղերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

1. Արձանագրությունն ստորագրման համար բացվել է 2002 թվականի մայիսի 3-ին Վիլնյուսում՝ 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար՝ Կոնվենցիայով երաշխավորված՝ կյանքի իրավունքի պաշտպանության ամրապնդման եւ բոլոր հանգամանքներում մահապատիժը վերացնելու ուղղությամբ վերջնական քայլերի ձեռնարկման նպատակով:

Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ին:

Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությունն ստորագրել է 2006 թվականի մայիսի 19-ին:

2. Ըստ ՀՀ արտաքին գործերի նախարարության տեղեկանքի՝ 2007 թվականի հունվարի 22-ի դրությամբ Արձանագրությունն ստորագրել են 44 եւ վավերացրել 37 պետություններ: Արձանագրությունը չեն ստորագրել ԵԽ անդամ երկու պետություններ (Ադրբեյջանը եւ Ռուսաստանի Դաշնությունը): Հայաստանի Հանրապետությունից զատ՝ քննության առարկա Արձանագրությունը չեն վավերացրել Եվրախորհրդի անդամ եւս 5 պետություններ (Իսպանիան, Իտալիան, Լատվիան, Լեհաստանը եւ Ֆրանսիան):

3. Արձանագրությունն ստորագրելիս՝ ԵԽ անդամ պետությունները հաշվի են առել այն հանգամանքը, որ Կոնվենցիայի՝ 1983թ. ապրիլի 28-ին Ստրաֆուրգում ստորագրված 6-րդ արձանագրությունը, որը վերաբերում է մահապատիժ վերացմանը, չի բացառում մահապատիժը պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի վտանգի պայմաններում կատարված արարքների դեպքերում:

Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 2002 թվականի մարտի 20-ին, իսկ Կոնվենցիայի՝ 1983 թվականի ապրիլի 28-ին Ստրաֆուրգում ստորագրված՝ մահապատիժ վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2003թ. սեպտեմբերի 9-ին:

4. Արձանագրությունն ստորագրելիս կամ դրանով պարտավորված լինելու մասին համաձայնությունն արտահայտելիս 5 պետություններ համապատասխան հայտարարություններ են արել (Մեծ Բրիտանիա, Դանիա, Նիդեռլանդներ, Վրաստան եւ Մոլդովա):

Հատկանշական են Վրաստանի եւ Մոլդովայի հայտարարություններն առ այն, որ «Վրաստանը հայտարարում է, որ մինչեւ Արխազիայի եւ Ցիխինվալիի շրջանի նկատմամբ Վրաստանի ամբողջական իրավագործության վերականգնումը, այն չի կարող պատասխանատվություն կրել այդ տարածքներում թիվ 13 Արձանագրության դրույթների խախտման համար», եւ որ «Մոլդովան հայտարարում է, որ մինչեւ Մոլդովայի Հանրապետության տարածքային ամբողջականության լիակատար վերականգ-

«ՍԱՀՄԱՆԱՊՐՎԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նումը, թիվ 13 Արձանագրության դրույթները կիրառվելու են միայն Սոլյու-
վայի Հանրապետության իշխանությունների կողմից արդյունավետ վե-
րահսկվող տարածքների նկատմամբ»:

5. «Բոլոր հանգամանքներում մահապատճի վերացման մասին» թիվ 13 արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Վերացնել մահապատճեղ եւ երաշխսվորել, որպեսզի ոչ ոք չդատապարտվի կամ ենթարկվի նման պատժի,
 - բացառել Արձանագրության դրույթների նկատմամբ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի կիրառումը («Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում»),
 - Արձանագրության դրույթների վերաբերյալ չանել Կոնվենցիայի 57-րդ հոդվածով նախատեսված որևէ վերապահում,
 - Արձանագրության 1-4-րդ հոդվածների դրույթներն ընդունել որպես Կոնվենցիայի լրացուցիչ հոդվածներ:

Սույն Արձանագրությունը հանդիսանում է փոխվացնող գործոն՝ ՀՀ Սահմանադրության 15 հոդվածի ամբողջական իրացման համար:

Ելեկով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

1. Մարդու իրավունքների եւ իիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության:

2. Հայատանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ.ՀԱՎԵՍՆԻՍՅԱՆ

17 ապրիլի 2007 թվականի
ՍՊԸ-694

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ
ՍՈՒՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌՎՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌՎՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ
ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ
ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻՎՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝**

Քաղ. Երեւան

17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ.Հովհաննիսյանի (նախագահող), Կ.Բալյայանի, Ֆ.Թոխյանի, Զ.Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 6-ին Աստանայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության արդի է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացարությունները, հետագութելով կոնվենցիան, կից արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

Կոնվենցիան ստորագրվել է 2006 թվականի նոյեմբերի 6-ին՝ Աստանյում, եւ նպատակ ունի զարգացնել ու ամրապնդել տնտեսական, գիտական եւ տեխնիկական հարաբերությունները երկու երկրների միջև, մասնավորապես՝ Վերջիններիս ռեզիդենտ հանդիսացող անձանց եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու, ինչպես նաև հարկումից խուսափելը կանխելու միջոցով:

Ստորագրելով կոնվենցիան եւ դրան կից արձանագրությունը, Հայկական կողմը պարտավորվում է առանց խորականության բացառել կրկնակի հարկումը ՀՀ ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ՝ կապված, մասնավորապես.

- անշարժ գույքից (ներառյալ օժանդակ գույքը) ստացված եկամուտների,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթի,
- միջազգային փոխադրումներից ստացված եկամուտների,
- ասոցիացված ձեռնարկությունների գործունեությունից ստացված շահույթների,
- ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող կողմի ռեզիդենտին վճարված շահարաժենների,
- Հայաստանի Հանրապետությունում առաջացող եւ Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտին վճարվող տոկոսների,
- Հայաստանի Հանրապետությունում առաջացող եւ Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտին վճարվող ռոյալթիի,
- գույքի օտարումից ստացված եկամուտների,
- վարձու աշխատանքից ստացված եկամուտների,
- տնօրենների հոնորարների,
- արտիստների եւ մարզիկների կողմից իրականացված անհատական գործունեությունից ստացված եկամուտների,
- կենսարոշակների եւ համանման այլ վճարումների,
- պետական ծառայությունների դիմաց վճարված՝ կենսարոշակից տարբերվող աշխատավարձի, ոռջիկի եւ համանման այլ վարձատրությունների,
- ուսանողների կամ պրակտիկաների՝ բացառապես վերջիններիս կողմից ուսանելու կամ պրակտիկա անցնելու համար ստացված այնպիսի վճարումների հետ, որոնք առաջանում են ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից,
- անշարժ եւ շարժական գույքի եւ դրա տարրերի հարկման, ինչպես նաև այլ եկամուտների հետ:

Հայկական կողմը նաև երաշխավորում է, որ Պայմանավորվող մյուս կողմի անձանց չի ենթարկի ավելի ծանր հարկման, քան այն հարկումը,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որին ենթարկվում կամ կարող են ենթարկվել ՀՀ ռեզիդենտները մյուս Կողմի տարածքում միեւնույն հանգամանքներում, եւ նրանց համար՝ կոնվենցիայով իր կողմից ստանձնված պարտավորությունների շրջանակներում չի ստեղծի ավելի պակաս բարենպաստ պայմաններ, քան ՀՀ ազգային անձանց համար:

Հայկական կողմը կրկնակի հարկումը կրացառի՝ նվազեցնելով Հայաստանի ռեզիդենտի կողմից ստացված եկամուտների կամ տնօրինած գույքի հարկերն այն չափով, ինչ չափով որ դրանք ենթակա են հարկման Դաշտայստանում:

Հայկական կողմը պարտավորվում է նաեւ կոնվենցիայի դրույթները չկիրառել Պայմանագրովող մյուս կողմի՝ Հայաստանում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Կոնվենցիայի անքաժանելի մասն է կազմում կից արձանագրությունը, որը մեկնարանում եւ հստակեցնում է կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի եւ 8-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունը:

Կոնվենցիան նախատեսում է վերջինիս դրույթների մեկնարանման կամ կիրառման հետ կապված վեճերի լուծման, տեղեկատվության փոխանակման, ինչպես նաեւ ուժի մեջ մտնելու եւ գործողության դադարեցման կարգն ու ժամկետները:

Ելնելով գործի բննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2006 թվականի նոյեմբերի 6-ին Աստանայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելու կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**17 ապրիլի 2007 թվականի
ՍԴԱ-695**



ՀԱՆՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2006 թվականի Հոկտեմբերի 4-ին Երեվանում ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1994 թվականի
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԲՈՒԽԱՐԵՍՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄՆ ԵՎ
ՓՈԽՎԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁՅՆԱԳՐԻ
ԼՐԱՑՈՒՑՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՎՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (զեկուցող), համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հոկտեմբերի 4-ին Երեւանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև 1994 թվականի սեպտեմբերի 20-ին Բուխարեստում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:
Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է
ՀՀ սահմանադրական դատարան:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կ. Շշմարիտյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագրի լրացուցիչ արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Յ**.

1. Լրացուցիչ արձանագրությունն ստորագրվել է 2006 թվականի հոկտեմբերի 4-ին՝ Երևանում: Լրացուցիչ արձանագրության նպատակն է փոփոխել 1994 թվականի սեպտեմբերի 20-ին Բուխարեստում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի (ՀՀ ԱԺ-ի վավերացրել է 11.10.1995թ.) այն դրույթները, որոնք առնչվում են Եվրոպական միությանը Ուսմինիայի անդամակցության հետ ծագող պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև կարգավորել Ուսմինիայում հայաստանյան ներդրումների իրավական ռեժիմը:

2. Հիշյալ Համաձայնագրի մի շարք դրույթներ լրացուցիչ արձանագրությամբ վերաձեւակերպվել են, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է նոր պարտավորություններ, մասնավորապես.

- չխախտելով Եվրոպական միության ընդունած միջոցառումները՝ յուրաքանչյուր Պայմանագրովող կողմ պետք է պաշտպանի իր տարածքում մյուս Պայմանագրովող կողմի ներդրողների կատարած ներդրումները,
- բարենպաստության ռեժիմների վերաբերյալ դրույթները չեն կիրառվի բոլոր առկա կամ ապագա առավելությունների նկատմամբ՝ ելնելով Եվրոպական միությանը Ուսմինիայի անդամակցությունից կամ մասնակցությունից,
- չխախտելով Եվրոպական միության ընդունած միջոցները՝ յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողներին կտրամադրի ներդրումների եւ վճարումների փոխընդունելի փոխանցումներ:

3. Ուսմինիայի անդամակցությունից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու համար լրացուցիչ արձանագրությունը հնարավորություն է տալիս Կողմերի համաձայնությամբ փոփոխել նշված Համաձայնագրի դրույթները, իսկ համաձայնության չգալու դեպքում Ուսմինիան միակողմանիորեն կարող է սահմանված կարգով այն դադարեցնել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Բ Ո Շ Ե Յ.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. 2006 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռումինիայի կառավարության միջև 1994 թվականի սեպտեմբերի 20-ին Բուխարեստում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռումինիայի կառավարության միջև ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**17 ապրիլի 2007 թվականի
ՍՊԸ-696**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՖԻՆԱՆՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ
ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՉԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԸ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

17 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի,
Զ. Նուկայանի (գեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դոնքաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆինաննիայի Հանրապետության կառավարության միջեւ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելով կանխելու նասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ցատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Քննության առարկա համաձայնագիրը Կողմերն ստորագրել են 2006թ. հոկտեմբերի 16-ին՝ Երեւանում:

Համաձայնագրի նպատակը Կողմերի ռեգիստրատուրայի եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու միջոցով երկու պետությունների միջեւ տնտեսական, գիտական, տեխնիկական եւ մշակութային հարաբերությունները զարգացնելն է:

Գույքի եւ եկամուտների կրկնակի հարկումը բացառելու ընթացակարգը սահմանված է համաձայնագրի 23 հոդվածում: Կողմերի ռեգիստրատուրայի նկատմամբ այն իրականացվում է անխտրականության սկզբունքով:

2. Համաձայնագրի շրջանակներում կիրառման ենթակա հարկատեսակները եւ հարկվող սուրյեկտները սահմանված են 2 եւ 4 հոդվածներում:

Համաձայնագիրը կիրառելի չէ դիվանագիտական առաքելությունների եւ հյուպատոսական հիմնարկների անդամների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների, դրանց մարմինների, պաշտոնատար անձանց նկատմամբ:

3. Համաձայնագրի մի շարք հոդվածներում սահմանված են հարկման հետեւյալ օրյեկտները.

- անշարժ գույքից ստացված եկամուտը /ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը/,
- ձեռնարկատիրական գործունեությունից, ինչպես նաև փոխկապակցված ձեռնարկություններից ստացված շահույթը,
- միջազգային փոխադրումներից՝ նավերի կամ օդանավերի շահագործման արդյունքում, ստացված շահույթը,
- շահաբաժնները, տոկոսները, ռոյալինն,
- անկախ եւ կախյալ անհատական ծառայությունները, ռեգիստրատուրայի դիսացող ընկերությունների տնօրենների հոնորարները,
- արտիստների եւ մարզիկների գործունեությունից ստացված եկամուտը,
- կենսաբռշակները, պետական ծառայության դիմաց վճարված աշխատավարձը,
- ուսանողին կամ պրակտիկանտին տրված վճարումները, ինչպես նաև այլ եկամուտներ՝ 20 եւ 21 հոդվածներում սահմանված կարգով:

4. Բացի համաձայնագրի կիրառումն ապահովող վերոհիշյալ հիմնական պարտավորություններից, Հայաստանի Հանրապետությունը նաև պարտավորվում է.

- մյուս Կողմի ռեգիստրատուրայի կամ մինչեւ Հայաստանի Հանրապետություն ժամանելը մյուս Կողմի ռեգիստրատուրայի կամ պրակտիկանտին ազատել ապրելու, ուսանելու, վերապատրաստվելու համար ստացած վճարումների հարկումից (20 հոդված),

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- կրկնակի հարկումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեգիդենտի՝ մյուս Կողմում հարկվող եկամուտ ստանալիս թույլատրել այդ եկամտի կամ գույքի հարկի նվազեցում մյուս Կողմում վճարված հարկին հավասար գումարի չափով (23 հոդված),
- համաձայնագրի 26 հոդվածում նախատեսված պայմաններին համապատասխան մյուս Կողմի իրավասու մարմիններին ապահովել այնպիսի տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է համաձայնագրի եւ դրանում ընդգրկված հարկերի վերաբերյալ ներպետական օրենսդրության նորմերի կիրառման համար:

5. Համաձայնագրում նախատեսված են Կողմերի պարտականությունների համաձայնեցված կատարման առնչությամբ ծագած խնդիրների լուծման, համաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ գործողությունը դադարեցնելու ընթացակարգեր (25 եւ 29 հոդվածներ):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 3, 8, 9 հոդվածների դրույթներին, քանի որ կոչված են զարգացնելու Կողմերի միջև բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները, ինչպես նաև ստեղծելու բարենպատ պայմաններ տնտեսական գործունեության ազատության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունն ապահովելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ֆինլանդիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելով կանխելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**17 ապրիլի 2007թվականի
ՍՊԸ-697**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2006 թվականի նոյեմբերի 16-ին ԲԵՌԼԵՆՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԱՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՏՆՎՈՂ
ԱՆՁԱՑ ՀԵՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽՎՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԵՏ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ) ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳԱՅՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԳԱՅՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

27 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեղուցող), Ֆ. Թոխյանի, Զ. Դուկայանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 16-ին ԲԵՌԼԵՆՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ միջեւ առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու եւ տարանցիկ փոխադրելու մասին (Համաձայնագիր հետ ընդունելու մասին) համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիբջանյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է աճօրինական միգրացիայի դեմ արդյունավետ պայքարի ոլորտում համագործակցությունն ամրապնդելու նպատակով:

2. Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում հինգ հավելվածները, որոնցով ներկայացվում են համաձայնագրով նախատեսված փաստաթղթերի ցանկը եւ կողմերի իրավասու մարմինները:

Համաձայնագրով տրվում են քաղաքացի, երրորդ երկրի քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, առանց թույլտվության գտնվող անձ, կացության թույլտվություն, բազմակի մուտքի վիզա եւ այլ հասկացությունների սահմանումները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադրձության հիման վրա, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

- որպես հայցվող **Պայմանավորվող կողմ**, առանց պաշտոնականության հետ ընդունել հայցող գերմանական կողմի տարածքում առանց թույլտվության գտնվող անձին՝ պայմանով, որ հաստատված է, որ այդ անձը **ՀՀ քաղաքացի** է,
- որպես հայցվող **Պայմանավորվող կողմ**, գերմանական կողմի դիմումով, առանց այլ, քան համաձայնագրով նախատեսված պաշտոնականությունն է, ընդունել հայցող գերմանական կողմի տարածքում առանց թույլտվության գտնվող անձին՝ պայմանով, որ կարող է *prima facie* փաստերի հիման վրա հավաստի կերպով ենթադրվել, որ այդ անձը **ՀՀ քաղաքացի** է,
- դիմումին տրվող դրական պատասխանի դեպքում, որպես հայցվող կողմ, հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում բատ համաձայնագրի 2-րդ կետի հետ ընդունելու նմթակա անձին տրամադրել վերապարձի համար պահանջվող ճամփորդական փաստաթուղթ, որը վավերական կլինի առնվազն 30 օր,
- հնարավորին չափ շուտ, բայց ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում տրամադրել 30-օրյա վավերականության ժամկետով նոր ճամփորդական փաստաթուղթ, եթե իրավական կամ փաստական պատճառներով համապատասխան անձին հնարավոր չի լինի փոխադրել նախկինում տրված ճամփորդական փաստաթղթերի վավերականության ժամկետի ընթացքում,
- որպես հայցվող **Պայմանավորվող կողմ** նոյն պայմաններով հետ վերցնել վերադարձված անձին, եթե հետազա ստուգումների արդյունքում երեք ամսվա ընթացքում հաստատվի, որ **ՀՀ տարածքից մեկնելու**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պահին այդ անձը չի ունեցել հայցվող գերմանական կողմի պետության քաղաքացիություն կամ ՀՀ տարածքում ունեցել է կացության իրավունք,

- որպես հայցվող Պայմանավորվող կողմ, գերմանական կողմի դիմումի հիման վրա, առանց այլ, քան համաձայնագրով նախատեսված պաշտոնականությունն է, հետ ընդունել այն անձին, որը հայցող գերմանական կողմի տարածք նուտք գործելուց հետո կորցրել է ՀՀ քաղաքացիությունը և ճեռք չի բերել որեւէ պետության քաղաքացիություն կամ գերմանական կողմից չի ստացել հավաստիացում, որ կստանա նրա քաղաքացիությունը, եթե այդ անձը չի բավարարում կամ այլեւս չի բավարարում գերմանական կողմի տարածք նուտք գործելու և այնտեղ գտնվելու համար գործող պայմանները,
- որպես հայցվող Պայմանավորվող կողմ, գերմանական կողմի դիմումի հիման վրա, առանց այլ, քան համաձայնագրով նախատեսված պաշտոնականությունն է, հետ ընդունել երրորդ երկրի յուրաքանչյուր քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի, որոնք չեն բավարարում կամ այլեւս չեն բավարարում գերմանական կողմի տարածք նուտք գործելու և այնտեղ գտնվելու համար գործող պայմանները, եթե ապացուցվել է կամ հավաստի է դարձել, որ այդ անձն ունի ՀՀ կողմից տրված կացության վավերական թույլտվություն, եթե ապացուցվել է կամ հավաստի է դարձել, որ այդ անձն անօրինական ճենով գտնվելու փաստը պարզելու պահին ունեցել է ՀՀ կողմից տրված կացության վավերական թույլտվություն, և անօրինական ճենով գտնվելու փաստը պարզելու պահից անցել է ամենաշատը վեց ամիս, եթե ապացուցվել է, որ այդ անձը գերմանական կողմի տարածք նուտք գործելու պահին ունեցել է ՀՀ կողմից տրված կացության վավերական թույլտվություն, և մուտք գործելու պահից անցել է ամենաշատը վեց ամիս, եթե ապացուցվել է կամ հավաստի է դարձել, որ անձն ունի ՀՀ կողմից տրված վավերական բազմակի մուտքի վիզա, եթե անձն անօրինական մուտք է գործել գերմանական կողմի տարածք անմիջապես ՀՀ տարածքից,
- առանց հետագա պաշտոնականության, ճանաչել երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ ընդունելու պայմանների առկայությունն ապացուցող ցանկացած ապացույց համաձայնագրի 3-րդ հավելվածի հիման վրա,
- հայցող գերմանական կողմի դիմումի հիման վրա՝ ՀՀ-ն անհրաժեշտության դեպքում հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում տրամադրել նույն վավերականության ժամկետով նոր ճամփորդական փաստաթուղթ, եթե իրավական կամ փաստական պատճառներով համապատասխան անձին հնարավոր չի լինի փոխադրել տրված ճամփորդական փաստաթուղթի վավերականության ընթացքում,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- հետ ընդունելու ենթակա անձի՝ համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներում նշված պարտավորություններից որեւէ մեկի հիման վրա փոխադրման դեպքում հետ ընդունելու վերաբերյալ դիմումը ներկայացնել հայցվող գերմանական կողմի իրավասու մարմնին՝ բացառությամբ համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի,
- երրորդ երկրի քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ ՀՀ-ում առանց բույլտվության բնակության հայտնաբերման դեպքում, որպես հայցող կողմ, հետ ընդունելու դիմումը հայցվող գերմանական կողմի իրավասու մարմնիներին ներկայացնել հայտնաբերումից հետո վեց ամսվա ընթացքում,
- հետ ընդունելու դիմումին պատասխան տալ հնարավորինս շուտ, բայց ոչ ոչ, քան երեք ամսվա ընթացքում,
- հետ ընդունելու դիմումի մերժման դեպքում, որպես հայցվող կողմ տեղեկացնել հայցող գերմանական կողմին մերժման ընդհանուր պատճառների մասին,
- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինն անձին հետ ընդունելու դիմումի վերաբերյալ համաձայնության հիման վրա և ճամփորդական փաստարդի տրամադրումից հետո հայցվող գերմանական կողմի իրավասու մարմնին ուղարկի ծանուցում անձի վերադարձի մասին ոչ ոչ, քան նախատեսվող վերադարձի օրվանից 7 օր առաջ,
- եթե փոխադրումը չի կարող իրականացվել իրավական կամ փաստական խոչընդուների պատճառով, ապա որպես հայցող կողմ, այդ մասին տեղեկացնել հայցվող գերմանական կողմին,
- հայցող գերմանական կողմի դիմումի հիման վրա բույլ տալ երրորդ երկրի քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց տարանցում ՀՀ տարածքով, եթե հետագա ուղեւորությունը տարանցնան այլ հնարավոր պետություններ և հետ ընդունելը վերջնակետ հանդիսացող պետության կողմից երաշխավորված է,
- գործադրել ջանքեր երրորդ երկրի քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց տարանցումն իրականացնել միայն այն դեպքերում, եթե այդ անձինք չեն կարող անմիջապես վերադարձվել վերջնակետ հանդիսացող երկիր,
- ապահովել, որպեսզի գերմանական կողմի հետ փոխադարձ խորհրդակցությունների հիման վրա, որպես հայցվող կողմի իրավասու մարմնին, ՀՀ իրավասու մարմինն աջակցի տարանցման իրականացմանը,
- Համաձայնագրի համաձայն՝ հոգալ հետ ընդունելու առնչությամբ փոխադրման բոլոր ծախսերը մինչեւ հայցվող գերմանական կողմի սահման, եւ համաձայնագրի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն վերադարձի հետ կապված բոլոր ծախսերը,
- որպես հայցող կողմ, հոգալ տարանցման հետ կապված բոլոր ծախսերը մինչեւ վերջնական նպատակակետ հանդիսացող պետության սահման եւ վերադարձի հետ կապված բոլոր ծախսերը,
- անձնական տվյալները հավաքել միայն համաձայնագրի հստակ,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որոշակի եւ օրինական կիրառման նպատակով եւ չօգտագործել ոչ փոխանցողի, ոչ էլ ստացողի որեւէ եղանակով, որը համատեղելի չէ այդ նպատակների հետ,

- ապահովել, որպեսզի փոխանցված անձնական տվյալները ոչնչացվեն այն պահից, եթք այլեւս անհրաժեշտ չեն լինի այն նպատակի համար, որի համար փոխանցվել են,
- ապահովել, որպեսզի փոխանցող մարմնի խնդրանքով ՀՀ ստացող մարմինը տեղեկացնի փոխանցած տվյալների օգտագործման եւ օգտագործումից ստացված արդյունքների մասին,
- փոխանցել անձնական տվյալները միայն իրավասու մարմիններին, իսկ դրանց հետագա փոխանցումն այլ մարմիններին իրականացնել փոխանցվող մարմնի նախնական համաձայնությամբ,
- համաձայնագրի իրականացման ընթացքում առաջացող խնդիրները լուծել գերմանական կողմի հետ փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև համաձայնագրի իրականացման մանրամասները կարգավորել փորձագետի միջոցով, որի նպատակով ստեղծել փորձագետների հանձնախումբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. 2006 թվականի նոյեմբերի 16-ին Բեռլինում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ առանց բույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու եւ տարանցիկ փոխադրելու մասին (Համաձայնագիր հետ ընդունելու մասին) համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

27 ապրիլի 2007 թվականի
ՍՊԸ-698



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**1979 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԲԵՌՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐՈՊԱՅԻ ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿՎԱՅԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՂՎԵՆՑԻԱՅՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

27 ապրիլի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի (գեկուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1979 թվականի սեպտեմբերի 19-ին Բեռնում ստորագրված՝ Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուստմնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Վ. Այվազյանի գրավոր բացադրությունները, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հանրապետության Նախագահի դիմումում կոնվենցիան վերնագրված է «Եվրոպայի կենդանական աշխարհի եւ բնական միջավայրի պահպանության մասին» միջազգային կոնվենցիա: Սակայն գործը քննության նախապատրաստելիս Նախագահի պաշտոնական ներկայացուցչի եւ ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական թարգմանությամբ քննության առարկա Կոնվենցիայի անվանումը ճշգրտվել է՝ 1979 թվականի սեպտեմբերի 19-ին Բեռնում ստորագրված՝ «Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա:

2. Կոնվենցիան ընդունվել է 1979 թվականի սեպտեմբերի 19-ին՝ Բեռնում, եւ ուժի մեջ մտել 1982 թվականի հունիսի 1-ին: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան ստորագրել է 2006 թվականի մարտի 13-ին:

Կոնվենցիայի նպատակն է պահպանել կենդանական ու բուսական աշխարհը եւ տեսակների բնական ապրելավայրերը:

3. Կոնվենցիայի անդամ պետություններն անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցներ պետք է ձեռնարկեն՝ 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված տեսակների եւ վտանգված բնական միջավայրի պահպանությունն ապահովելու համար:

Կոնվենցիայի 3-րդ հավելվածում սահմանված են կենդանական աշխարհի պահպանվող տեսակները, իսկ 4-րդ հավելվածում՝ կենդանիների սպանության, որսի եւ շահագործման այլ ձևերի արգելված միջոցները եւ մեթոդները:

4. Կոնվենցիայի կողմերը պետք է երաշխավորեն նաեւ, որ արգելման սեղոնները եւ վայրի բնության օգտագործումը կարգավորող ընթացակարգերը լինեն համարժեք եւ բաշխվեն համապատասխանաբար:

5. Կոնվենցիայի նպատակների իրականացնան համար հիմնվել է Մշտական կոմիտե:

6. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ կենդանական եւ բուսական աշխարհի պոպուլյացիաները, հատկապես՝ բնապահպանական, գիտական եւ մշակութային պահանջներին համապատասխան մակարդակով պահպանելու համար,
- անհրաժեշտ քայլեր ձեռնարկել կենդանական, բուսական աշխարհի եւ բնական միջավայրի պահպանությանն ուղղված ազգային քաղաքականությունը խթանելու համար,
- Հայաստանի բնապահպանական ոլորտի քաղաքականությունը ծրագրելիս ու մշակելիս, ինչպես նաեւ աղտոտման դեմ ուղղված միջոցառումներ իրականացնելիս՝ հաշվի առնել կենդանական, բուսական աշխարհի եւ բնական միջավայրի պահպանությունը,
- հատուկ ուշադրություն դարձնել չփող տեսակների համար կարեւոր ուղիների պահպանությանը,
- բուսական աշխարհի տեսակների հատուկ պահպանության համար արգելել հավելված 1-ում նշված բույսերը դիտավորությամբ պոկելը,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- հավաքելը, կտրելը կամ արմատախիլ անելը, ինչպես նաև արգելել այդպիսի տեսակների ձեռքբերումը կամ վաճառքը,
- խրախուսել կենդանական, բուսական աշխարհի և բնական միջավայրի տեղական տեսակների վերաբուղբությունը,
 - սահմանված ժամկետներում Մշտական կոմիտեին ներկայացնել հաշվետվություններ,
 - Մշտական կոմիտեին տեղեկացնել Կոնվենցիայի 1-ին և 2-րդ հավելվածներում շընդգրկված տեսակների մասին,
 - նշանակել արքիտրաժային դատարանի մեկ միջնորդ դատավոր:

Ելնելով գործի քննության արդյունքներից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. 1979 թվականի սեպտեմբերի 19-ին Բեռնում ստորագրված՝ Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**27 ապրիլի 2007 թվականի
ՍՊԸ-699**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՅԻ ՈՋԻՔԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝

**ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻ Ազգային կուսակցության օրենսգրքի 24 գլուխ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

8 մայիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմող Ռ. Թորոսյանի, գործով որպես պատասխանող կողմն ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1 կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրնաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացի Ռ. Թորոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլուխ դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ռ. Թորոսյանի՝ 09.04.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմողի գրավոր փաստարկները, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին: Հանրապետության Նախագահի կողմից այն ստորագրվել է 1998թ. օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ին:

2002թ. փետրվարի 6-ին ՀՀ Ազգային ժողովն օրենք է ընդունել «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին», ըստ որի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի վերնագիրը վերաշարադրվել է. «Ընտրություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների եւ կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընտրական իրավունքների պաշտպանության եւ տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության վարույթը»:

Նույն օրենքին համապատասխան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի վերաշարադրված 153 հոդվածը սահմանում է.

«Քաղաքացին, կուսակցությունը (կուսակցությունների միավորումը)` գտնելով, որ պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձանց կամ ընտրական հանձնաժողովի որոշմամբ, գործողությամբ (անգործությամբ) խախտվել է ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքը, կարող է դիմել քաղաքացիական գործեր քննող դատարան:

Տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով քաղաքացիական գործեր քննող դատարան կարող են դիմել տեղական հանրաքվեն նախաձեռնող խումբը եւ տեղական ինքնակառավարման մարմինը: Որպես պատասխանող կողմ կարող է հանդես գալ տեղական հանրաքվեի արդյունքներն ամփոփող պետական մարմինը»:

Վերաշարադրված 154 հոդվածը սահմանում է.

«1. Նույն օրենքի 153 հոդվածի առաջին մասում նշված դիմումը պետք է քննվի այն ստանալու օրվանից հեգորյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ընտրությունների օրը, իսկ ընտրությունների օրն ստացված դիմումը՝ անհապաղ:

Տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճի մասին դիմումը պետք է քննվի ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում:

2. Դատարանը դիմումը քննում է դիմողի եւ համապատասխան ընտրական հանձնաժողովի, պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ: Դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին պատշաճ տեղեկացված անձանց չներկայանալն արգելվ չէ գործի քննության եւ լուծման համար»:

155 հոդվածը սահմանում է.

«1. Դատարանի վճիռը, որով հաստատվել է քաղաքացու կամ կուսակցության (կուսակցությունների միավորման) ընտրական իրավունքի խախտումը, հիմք է ընտրողների ցուցակում ուղղումներ կատարելու, թեկնածուին գրանցելու կամ կուսակցությանը (կուսակցությունների միավորմանը)

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ընտրություններին կամ հանրաքվեին մասնակցող կազմակերպությունների թվում ներառելու, ինչպես նաև ընտրելու եւ ընտրվելու իրավունքի այլ խափառումները վերացնելու համար:

2. Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա չէ բողոքարկման:

3. Դատարանի վճիռը պատշաճ ձեւով ուղարկվում է համապատասխան պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին կամ ընտրական հանձնաժողով»:

2. Ըստ վերջնական դատական ակտի՝ 04.02.2007թ. «Արմենիա» հեռուստաթերությունը ընդարձակ հարցազրույց է կազմակերպել ՀՀ պաշտպանության նախարարի հետ: Դիմող կողմը գտնելով, որ այդ հաղորդումը «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի պահանջների ուղղակի եւ կոպահի խախտում է, այն է՝ «ընտրությունների քարոզությանը նախորդող ժամանակահատվածում արգելվում է ՀՀ-ների կողմից հեռարձակել քաղաքական եւ այլ քարոզական նյութ...», եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը, ըստ դիմողի, խախտելով ՀՀ ընտրական օրենսգրքի 20 հոդվածի 9-րդ կետի, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58 հոդվածի եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 71 եւ 72 հոդվածների պահանջները, միջոցներ չի ձեռնարկել այդ իրավականության հետեւանքների վերացման ուղղությամբ, որի արդյունքում խախտվել է ՀՀ Սահմանադրության 30 եւ Սարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3 հոդվածներով սահմանված՝ ազատ ընտրություններին մասնակցելու իր իրավունքը, դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի պահանջներով, 05.02.2007թ. դիմել է Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ պահանջելով Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անգործությունը ճանաչել անվավեր եւ պարտադրել նրան միջոցներ ձեռնարկել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման հետեւանքների վերացման ուղղությամբ:

Դատարանը 07.02.2007թ. որոշում է ընդունումը մերժելու մասին», գտնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված կարգով չի կարող քննության առնվել դիմումի պահանջը:

Դիմելով ՀՀ վճռաբեկ դատարան, դիմող կողմը խնդրել է վերացնել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի 07.02.2007թ. որոշումը՝ «Դիմումի ընդունումը մերժելու մասին»:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ տնտեսական գործերով պալատն իր՝ 02.03.2007թ. որոշմամբ բավարարել է բողոքը՝ վերացնելով առաջին ատյանի դատարանի վիճարկող որոշումը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ըստ էության քննության առնելով դիմումը, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարշալ համայնքների առաջին ատյանի դատարանն իր՝ 27.03.2007թ. վճռով մերժել է պահանջը, պատճառաբանելով, որ որևէ ապացույց չի ներկայացվել, թե ինչում է կայանում դիմող կողմից ընտրելու իրավունքի խախտումը, իսկ «...միայն այդ մասին դիմումում նշելը չի կարող բավարար հիմք հանդիսանալ դիմողի ընտրելու իրավունքը խախտված լինելու փաստը հաստափած համարելու եւ այդ հիմքով այն բավարարելու համար»: Սերժելով դիմումը, դատարանը միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155 հոդվածը՝ նշել է, որ «... վճիռն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից եւ ենթակա չել բողոքարկման»:

3. Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 19 եւ 30 հոդվածների՝ համապատասխանաբար «Յուրաքանչյուր որ ունի իր խախտված իրավունքները վերականգնելու ... արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ... իր գործի իրապարակային քննության իրավունք» եւ «... կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը ... նաև անկանոն իրավունք» դրույթներին, եւ դրանք անհրաժեշտ է անվավեր ճանաչել: Դիմողի կարծիքով, իրավակիրառական պրակտիկայում խառնաշփորի եւ կամայական դրսեւորումների պատճառ են դառնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված՝ «...քաղաքացիների եւ կուսակցությունների ընտրական իրավունքի պաշտպանություն» եւ «գտնելով, որ ... խախտվել է ընտրելու կամ ընտրվելու իր իրավունքը...» արտահայտությունները, որոնք, ըստ դիմումատուի, հավանաբար, շփոթեցնում են դատավորներին եւ ըստ նրա՝ իրավացիորեն բացակայում են ՀՀ ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 8-րդ կետում: Դիմումը կողմը գտնում է նաև, որ օրենսգրքի վեճի առարկա դրույթները հնարավորություն չեն տալիս հատակորեն երաշխավորել ընտրական գործընթացի հետ առնչվող բոլոր տիպի վեճերի դատական քննությունը:

4. Պատասխանող կողմը, ընդունելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 19 եւ 30 հոդվածներով հստակ երաշխավորված են դատական պաշտպանության եւ ընտրական իրավունքների իրականացման հիմքերը: Եվ եթե ՀՀ Սահմանադրության 19 հոդվածին համապատասխան, յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները դատարանի կողմից վերականգնելու իրավունք, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթներն ապահովում են այդ գործընթացը եւ սահմանում դրա կարգը: Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 30 հոդվածին հակասությանը, ապա տարբեր հարաբերություններ կարգավորող հիշյալ դրույթների միջեւ այդպիսի անհամապատասխանության մասին խոսք ընդհանրապես չի կարող լինել:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի դրույթները կարգավորում են ընտրություններին, հանրաքվեներին մասնակցող քաղաքացիների եւ կուսակցությունների (կուսակցությունների միավորումների) ընտրական իրավունքների պաշտպանության եւ տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերի վերաբերյալ դիմումների քննության վարույթը: Նկատի ունենալով, որ ընտրությունները ժամկետային գործընթաց են, օրենսդիրը սահմանել է այդ բնույթի դիմումների քննության հնարավոր կրծատ ժամկետներ: Մասնավորապես, օրենսգրքի 154 հոդվածը դատարանին պարտավորեցնում է ընտրական վեճերի վերաբերյալ գործերը քննության առնել դիմումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան ընտրությունների օրը, իսկ ընտրությունների օրն ստացված դիմումը՝ անհապաղ: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի 155 հոդվածն ամրագրում է, որ ընտրական իրավունքի պաշտպանության վեճերով դատարանի վճիռը վերջնական է, ենթակա չէ բողոքարկման եւ օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Օրենքի այս պահանջը նպատակ է հետապնդում վերացնել ընտրական իրավունքի խախտումները մինչեւ ընտրությունների ավարտը, այլապես խախտված իրավունքի վերականգնման վերաբերյալ դատարանի վճիռը կկորցնի իր խմաստը՝ դիմողը չի կարող մասնակցել ընտրություններին, ընտրել կամ ընտրվել: Հենց այս առանձնահատկությունը նկատի առնելով է, որ օրենսդիրն օրենսգրքի վիճարկվող գլուխը գետեղել է «Առանձին տեսակի գործերով վարույթների առանձնահատկությունները» բաժնի «Հատուկ հայցային վարույթներ» ենթաբաժնում:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի ընձեռում է իր խախտված իրավունքները վերականգնելու համար դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող գլխի կանոնները, սահմանելով նման բնույթի գործերի քննության սեղմ ժամկետներ եւ բացառելով վճիռի բողոքարկումը, դատարանին հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում վերականգնել յուրաքանչյուր քաղաքացու, կուսակցության (կուսակցությունների միավորումների) ընտրական խախտված իրավունքները:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի (հոդվ. հոդվ. 153-155) դրույթները մեծ կարեւորություն ունեն ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության եւ Սահմանադրության 4 հոդվածում ամրագրված հիմնարար սկզբունքների ու 30 հոդվածում ամրագրված իրավունքների երաշխավորման համար: Ընտրական իրավունքի պաշտպանության առումով այդ դրույթները հավասարապես վերաբերում են ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ ընտրական իրավունքին: Նյութական իրավունքի ապահովումը երաշխավորող դատավարական այս նորմերն իրենց բնույթով ու առկա խմբագրությամբ չեն խոչընդոտում հատուկ հայցային վա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բույրի կարգով ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությանը՝ ընտրական գործընթացի ցանկացած փուլում:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 24 գլուխը միայն ընդհանուր գծերով է կարգավորում տվյալ իրավահարաբերությունները՝ առանց հստակեցնելու հատուկ հայցային վարույթի ընթացակարգով ընտրական վեճերի լուծման կոնկրետ առանձնահատկությունները: Դրա հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում տեղ են գտել տարաբնույթ մոտեցումներ, թե՛ դիմումի քննության ենթակայության եւ թե՛ դատական ակտի բողոքարկման կարգի առնչությամբ: Առկա է նաև անհամապատասխանություն ՀՀ ընտրական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերի դրույթների (մասնավորապես՝ համապատասխանարար՝ 40 եւ 153 հոդվածներ) միջեւ, որը դժվարություններ է առաջացնում ընտրական իրավունքի դատական պաշտպանության՝ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի իրացման հարցում: Նման իրավիճակը կարող է հաղթահարվել օրենսդրական հստակեցումներ կատարելու, իսկ մինչ այդ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխի նորմերի մեկնաբանման եւ միասնական իրավակիրառական պրակտիկա ապահովելու ճանապարհով՝ երաշխավորելու համար ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը: Ինչ վերաբերում է վեճի առարկա դրույթների սահմանադրակիրավական բնույթին, ապա այդ դրույթները դիմումատուի հարցադրումների շրջանակներում՝ իրենց իրավական բովանդակության եւ իրավակարգավորման առարկայի առումով, սահմանադրականության խնդիր չեն առաջացնում եւ դրանց քացակայությունը կամ կասեցումը, ընդհակառակը, կվտանգի ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 մայիսի 2007 թվականի
ՍԴՈ-700**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ԻՐԻՆԱ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՄՆ ՎՐԱ
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
68 ՀՈԴՎԱԾԻ 15-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՖԻ 230
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 4.1. ԵՆԹԱԿԵՏԻ ԵՎ 231.2. ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ
ԿԵՏԻ 1-3 ԵՆԹԱԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

11 մայիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Նուկասյանի, Հ. Նազարյանի, Ո. Պապյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ դիմող Ի. Եղիկարյանի, նրա ներկայացուցիչ Ա. Չոհրաբյանի, պատասխանող կողմի ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 32, 60 եւ 69 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Ի. Եղիկարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին»» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ի. Եղիկարյանի՝ 31.01.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմողի լիազոր ներկայացուցիչի եւ պատասխանող կողմի գրավոր բացատրություննե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ըլ, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահն այն ստորագրել է 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի, 231.1. եւ 231.2. հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թվականի ապրիլի 9-ին կայացրել է ՍԴ-Ն- 690 որոշումը:

Նկատի ունենալով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասը, 60 հոդվածի 1-ին մասը եւ հիմք ընդունելով ՍԴ-Ն- 690 որոշումը, ինչպես նաև դիմող կողմից ներկայացուցչի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածների մասով հարցը քննարկման առարկա չդարձնելու գրավոր խնդրանքը, «Քաղաքացի Ի. Եղիգարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի եւ 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետների մասով ենթակա է **Կ Ա Ր Թ Մ Ա Ն :**

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքն ընդունել է ՀՀ Ազգային ժողովը՝ 2006 թվականի հունիսի 1-ին, Հանրապետության Նախագահն այն ստորագրել է 2006թ. հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2006թ. հուլիսի 1-ից:

4. Քաղաքացի Ի. Եղիգարյանը, հիմք ընդունելով իր դիմումի հիման վրա նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական գործերով վերաբենիչ դատարանի՝ 08.08.2006թ. վճիռը, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 09.11.2006թ. որոշումը, վիճարկում է իր նկատմամբ կիրառված՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության սահմանադրականությունը:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբենիչ դատարանը 08.08.2006թ. քննելով Ի. Եղիգարյանի հայցադիմումը՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վերաբերյալ, վճռել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաբենիչ դատարանի 07.09.2004թ. վճիռը թողենել ուժի մեջ եւ նոր հանգամանքներով վճիռը վերանայելու մասին դիմումը՝ առանց բավարարման:

Դիմումը մերժելիս վերաբենիչ դատարանը կիրառել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 08.08.2006թ. վճոյի դեմ 19.10.2006թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք, որի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը 09.11.2006թ. կայացրել է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում:

Դիմող կողմը գտնում է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.1., 241.2., 241.3. հոդվածների, սահմանադրական դատարանի ուժի մեջ մտած որոշումը հիմք է խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրազործման համար՝ վերանայման համար նոր հանգամանքներն առաջանալու օրվանից եռամսյա ժամկետում:

Ըստ դիմողի, վերաքննիչ դատարանի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը կիրառելու հետեւանքով ինքը զրկվել է իր խախտված իրավունքները պաշտպանելու հնարավորությունից, քանի որ վերաքննիչ դատարանը չի անդրադարձել քաղաքացիական գործին, այլ մերժել է՝ պատճառաբանելով միայն, որ նորմատիվ ակտերը, որոնք սահմանադրական դատարանի որոշմամբ հակասահմանադրական են ճանաչվել, դեռևս ուժի չեն կորցրել եւ համարվում են Սահմանադրությանը համապատասխանող:

Վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի՝ քննության առարկա դրույթը, դիմողը գտնում է, որ դրա գործողության պարագայում ինքն ուղղակի զրկվել է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներով երաշխավորված՝ խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից:

Դիմողի կարծիքով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում վկայակոչված Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասն օրենսդրին իրավունք չի տվել սահմանելու «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթը, ըստ Էռլյան, բացառելով սահմանադրական դատարանի որոշման «պարտադիրությունը եւ ճանաչելիությունը», քանի որ Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացությունները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Դիմողը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասին համապատասխան՝ սահմանադրականության հարցերով որոշումները ընդունելիս սահմանադրական դատարանը պետք է հաշվի առնի նաև մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների եւ ազատությունների ապահովումը եւ պաշտպանությունը: Այս տեսանկյունից «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը հակասում է նաև Սահմանադրության 3-րդ հոդվածին:

Ըստ դիմողի՝ այդպիսի իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեք հոչակելն ինքնանպատակ չեն սահմանափակում է պետության ցանկացած գործողություն, ներառյալ՝ օրինաստեղծ, գործադիր եւ դատական իշխանության նարմինների գործողությունները:

5. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ քննության առարկա դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրության՝ դիմող կողմի հիշատակած հոդվածներին: Ըստ պատասխանող կողմի՝ «... ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասով ՀՀ սահմանադրական դատարանին վերապահված իրավասությունը չի կարող տարածվել այն դեպքերի վրա, եթե հնարավոր է մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությանը ամրագրված իրավունքների եւ ազատությունների ապահովման եւ պաշտպանության բացառումը»: Պատասխանող կողմը բավարար հիմք չի տեսնում քննության առարկա դրույթը՝ ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչելու համար, քանի որ դիմու կողմն իր սահմանադրական իրավունքների պաշտպանության նոր հմարավորություն ստանում է (նոր հանգամանքներով վճրուների եւ որոշումների վերանայման հիմքով) իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի դրույթները, համակարգային առումով փոխվապահցված լինելով նոյն հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերի դրույթների հետ, երաշխավորում են Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարումը: Սահմանադրությունը լիազորում է սահմանադրական դատարանին Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանել: Այս դրույթի՝ թեկուզ դրանում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ եթե սահմանվել է ավելի ուշ ժամկետ, ապա սահմանադրական դատարանի որոշման ընդունման եւ հրապարակման պահից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտը (դրույթը) իրավական ուժը չի կորցնում: Հակառակ պարագայում, ինչպես ցույց է տալիս նաև միջազգային պրակտիկան, սահմանադրական դատարանի նման լիազորությունը կիմաստագրելի է: Սահմանադրությունը կարեւութելով սահմանադրական դատարանի որոշման հետեւանքով առաջացող հնարավոր իրավիճակների սահմանադրականությունը, նկատի ունենալով, որ հասարակական հարաբերությունների դիմանմիկ գործընթացում իրավակարգավորման կտրուկ փոփոխությունները կարող են առաջացնել տարաբնույթ հակասահմանադրական իրավիճակներ, դրանք հաղթահարելու համար նախատեսելով սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կամ դրա մի մասի ուժը կորցնելու տարաժամկետման հնարավորություն, միաժամանակ օրենսդիրը խստորեն սահմանափակել է սահմանադրական դատարանի հայեցողական մոտեցման շրջանակները: Սահմանադրության 100 հոդվածում հստակ ամրագրելով, որ սահմանադրական դատարանն իր լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված կարգով, օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասում ամրագրել է, որ. «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի՝ սահմանադրական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, որոնք կիսաբարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ապա սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ դեպքում մինչեւ ակտի իրավաբանական ուժը կորցնելն ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող»:

Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ մասը նախատեսում է, որ «Նորմատիվ իրավական ակտի ուժը կորցնելու հետաձգումը պետք է համարժեք լինի այն ժամանակահատվածին, որի ընթացքում հնարավոր եւ անհրաժեշտ է ձեռնարկել սույն հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւանքները կանխելուն ուղղված միջոցառումները»: Բացի դրանից, նոյն հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ «Հետաձգման մասին որոշումը պետք է ընդունվի այն հաշվարկով, որպեսզի դրանով իրապես կանխվեն անխուսափելի եւ ծանր հետեւանքները հանրության եւ պետության համար, եւ ավելի էական վենաս չպատճառվի նարդու եւ քաղաքացու իիմնական իրավունքներին եւ ազատություններին»:

Այս համատեքստում, հակասահմանադրական ճանաչված իրավական ակտը կամ դրա դրույթը շարունակում է գործել սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության 102 հոդվածի հիմքով դրանց գործողությունը հիմնավորված կերպով տարածամկետելու շնորհիվ: Ուստի, վիճարկվող դրույթի իրավական բովանդակությունն ածանցյալ է եւ անհրաժեշտաբար բխում է Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթներից: Հետեւարար, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության դրույթի ձեւակերպումն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնարանվի Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի համատեքստում, որ Սահմանադրությունը հնարավոր է դարձնում սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը չհամապատասխանող նորմի ժամանակավորապես կիրառումը: Ինչ վերաբերում է նոր հանգամանքներով քաղաքացու իրավունքների պաշտպանության հնարավորությանը, ապա այն առաջ է գալիս սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի իրավական ուժը կորցնելու, այսինքն՝ հետաձգման ժամկետը լրանալու պահից՝ օրենքով սահմանված կարգով:

Այսուհետեւ, ինչպես վկայում են նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերի պահանջները, հակասահմանադրական ճանաչված նորմի հետագա գործողությունը միայն այն նպատակն է հետապնդում, որպեսզի դրանով կանխվեն իրավական անվտանգության սպառնալիքները, չառաջանան անխուսափելի եւ ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, ավելի էական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վեաս չպատճառվի մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներին եւ ազատություններին: Ընդ որում, եթե Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերության դրույթները սահմանադրական դատարանի համար հիմք են իրավական ակտի կամ դրա առանձին հակասահմանադրական դրույթի ուժը կորցնելու տարաժամկետման համար, ապա պետական իշխանության ու տեղական ինքնականավարման նարմինները (հատկապես իրավաստեղծ) պարտավոր են այդ ժամանակահատվածում այնպիսի հնարավոր եւ անիրաժեշտ միջոցառումներ իրականացնել, որոնցով կկամխվեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի առաջին պարբերությունում նշված հետեւանքները: Հետեւարար, հակասահմանադրական ճանաչված եւ տարաժամկետված իրավական նորմերի հետագա կիրառմանը չպետք է մեխանիկական մոտեցում ցուցաբերվի, այլ այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տարաժամկետման հիմքում ընկած եւ օրենքով նախատեսված վերոհիշյալ գերակայություններից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից բխող՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, բացառելով նաև հակասահմանադրական ճանաչված դրույթների վերարտադրությունը ցանկացած իրավական ակտում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. «Քաղաքացի Ի. Եղիգարյանի դիմումի հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի, 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230 հոդվածի 1-ին կետի 4.1. ենթակետի, 231.2. հոդվածի 1-ին կետի 1-3 ենթակետերի մասով՝ կարծել:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 1 5-րդ մասի երկրորդ պարբերությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի կողմից ներկայացրած իրավական դիրքորոշման շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**11 մայիսի 2007 թվականի
ՍՊ.Օ-701**

ՀԱՏՈՒԿ ԿԱՐՏԻՔ

**Քաղաքացի Ի. Եղիգարյանի դիմումի հիման վրա՝
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ
պարբերության եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի
230 հոդվածի առաջին կետի 4.1 ենթակետի եւ 231.2. հոդվածի առաջին
կետի 1-3 ենթակատերի՝ ՀՀ Սահմանադրության
համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով
Սահմանադրական դատարանի ՄԴ-701 որոշման վերաբերյալ**

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածի 7 կետով եւ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 35 հոդվածով, ներկայացնում եմ հատուկ կարձիք:

Նշված գործով Սահմանադրական դատարանը ՄԴ-701 որոշմամբ (11 մայիսի 2007թ.) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի երկրորդ պարբերությունը ճանաչվեց՝ դիմումատուի կողմից վիճարկվող ՀՀ Սահմանադրության՝ 1, 3, 5, 6, 18, 19 եւ 102 հոդվածների պահանջներին համապատասխանող:

Ժողովրդավարությունը եւ իրավական պետությունը մարդկության զարգացման կարենուագույն ձեռքբերումներից է, որը ամրագրվել է նաև ՀՀ Սահմանադրությամբ:

Նվազ կարենություն չի ներկայացնում նաև մարդու իրավունքների եւ ազատությունների գերակայությունը, մասնավորապես ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը ամրագրում է, որ. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները ու ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Այսինքն, դա խոսուն փաստարկ է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պետության կողմից պաշտպանվածության վերաբերյալ: Սույն մոտեցումը ամրագրած պետությունը չի կարող այն կիրառել մասամբ՝ ելնելով իրավիճակային փոփոխություններից: Այս նորմ-սկզբունքը՝ ամրագրված լինելով ՀՀ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներում» վկայում է դրանով նախատեսված արժեքների կարենության ու գերակայության մասին մյուս սահմանադրական նորմերի նկատմամբ՝ պետության հիմնական գործունեության արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանի թիվ 701 որոշման (պատճառաբանական մաս) մեջ նշված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերության եւ նույն հոդվածի 16-րդ եւ 17-րդ մասերի դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցվածության մասին: Նշեմ նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-րդ մասի 2-րդ պարբերությունը եւ նույն հոդվածի 17-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածների, մասնավորապես, 3-րդ հոդվածին, քանզի նախապատվությունը տրվում է պետության եւ հանրության շահերին:

ՀԱՏՈՒԿ ՔԱՐՏՔ

Հաշվի առնելով այն հաճագամանքը, որ մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք գերակայող են և սահմանափակում են մարդու իրավունքները խախտող եւ ոտնահարող պետության ցանկացած գործունեություն, գտնում եմ, որ նշված հոդվածի վիճահարույց 15 մասի 2-րդ պարբերությունն ու 17-րդ մասը պետք է ճանաչվեն ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ խնդիր է, եթե վերոհիշյալ մասերում, կառուցվածքային տեսանկյունից, նշվեր նախ մարդու իրավունքների պաշտպանությունը, այնուհետեւ՝ պետության եւ հանրային շահը:

ՀՀ ՍԴ անդամ՝**Կ. ԲԱԼԱՎՅԱՆ****21.05.2007թ.**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՅԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԲԻ 231.2. ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 3-ՐԴ
ԵԽԹԱԿԵՏԻ, ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԲԻ 300 ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

15 մայիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով՝ Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ դիմոների, դիմող Ա. Սաֆարյանի ներկայացուցիչ՝ Ռ. Սաֆարյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետ Ա.Խաչատրյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Զաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Հ. Հակոբյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրի 300 հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Հ. Հակոբյանի՝ 05.03.2007թ. դիմումն է սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետազոտելով վիճարկվող նորմերը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐՁԵՑ**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Դիմելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականության հարցով, դիմողները սահմանադրական դատարան են ներկայացրել Երեւանի Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 2006թ. մարտի 24-ի, ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի 2006թ. մայիսի 3-ի վճիռները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2007թ. հունվարի 31-ի՝ վերջնական դատական ակտեր հանդիսացող որոշումները: Քաղաքացիներ Երանիկ Հակոբյանի եւ Արայիկ Սաֆարյանի միջև 23.10.2003թ. կնքած գործարքը վավեր ճանաչելու մասին հայցն Աջափնյակ եւ Դավթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի վճռով մերժվելուց հետո, վերաբննիչ բողոքի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանն այդ գործարքն որակելով որպես առուվաճառքի պայմանագիր, հետեւարար, նաև նոտարական վավերացման ենթակա (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562 հոդված), կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի կանոնը, այն վավեր է ճանաչել: Արդյունքում, միաժամանակ ճանաչվել է Ե. Հակոբյանի սեփականության իրավունքը Երեւան քաղաքի Բաշինջաղյան փողոցի թիվ 184 շենքի հարեւանությամբ գտնվող, սույն գործով դիմողների սեփականությունը հանդիսացող առեւտրի սրահի համապատասխան մասի նկատմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատն իր՝ 31.01.2007թ. որոշումներով վերադարձրել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաբննիչ դատարանի վերոհիշյալ վճռի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

2. Դիմողները միաժամանակ վիճարկում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի դրույթների սահմանադրականությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի սահմանադրականության վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի ապրիլի 9-ի UԴՈ-690 որոշումը, ուստի հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի եւ 60 հոդվածի 1-ին մասի դրույթները, սույն գործի վարույթը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի սահմանադրականության մասով՝ ենթակա է կարճման:

3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածը սահմանում է.

«Հոդված 300. Գործարքի նոտարական ձեւը չպահպանելու հետեւանքները

1. Գործարքի նոտարական ձեւը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առողջն է:

2. Եթե կողմներից մեկը լրիվ կամ մասնակի կատարել է նոտարական վավերացող պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գոր-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ծարքի նոտարական վավերացումից, դատարանն իրավունք ունի գործարքը կատարած կողմի պահանջով այն վավեր ճանաչել: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

3. Գործարքի նոտարական վավերացումից անհիմն խուսափող կողմը պետք է մյուս կողմին հատուցի գործարքը կնքելու ուշացման հետ կապված վնասները»:

Դիմող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին, 31 հոդվածի 1-ին և 2-րդ մասերին:

Դիմող Ա. Սաֆարյանի ներկայացուցիչ Ռ. Սաֆարյանը, մինչեւ սույն գործով դատաքննությունն սկսվելը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47 հոդվածի համաձայն միջնորդել է նաև քննել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի սահմանադրականության հարցը:

Այդ հոդվածը սահմանում է.

«Հոդված 289. Գործարքի հասկացությունը

Գործարքները քաղաքացիների եւ իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն»:

Դիմողը գտնում է, որ անորոշ ձեւակերպման հետեւանքով վերոհիշյալ հոդվածի դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 2-րդ մասին:

Դիմողներն իրենց դիրքորոշումը պատճառաբանում են հետեւյալ փաստարկներով.

ա/ քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքներից են հանդիսանում կողմերի իրավահավասարությունը եւ քաղաքացիական գործարք կնքելու կամավորությունը: Գործարքն ունի կատարման մի շարք փուլեր: Նոտարական վավերացում պահանջող գործարքի կատարման փուլերից մեկն էլ հանդիսանում է նոտարական գործողությունների կատարմանը մասնակցելը: Գործարք կնքելու կամավորության սկզբունքից բխում է նաև գործարքի կնքումից հետագայում ցանկացած պատճառով իրաժարվելը, այդ թվում՝ նոտարական գործողությունների կատարմանը չմասնակցելը: Նման պայմաններում օրենքը հնարավորություն է տալիս դատարանին գործարքը ճանաչել վավեր, ինչը չի բխում իրավահավասարության եւ կամավորության՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սկզբունքներից, որոնք գերակայություն ունեն օրենսգրքի մյուս սկզբունքների նկատմամբ: Այդ պայմաններում գործարքը վավեր ճանաչելը կարող է մյուս կողմին հարկադրաբար սեփականությունից զրկելու (այդ թվում նաև՝ համասեփականատիրոջը) հետեւանք առաջացնել,

թ/ ՀՀ Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք, առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եթի Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ չվերապահելով այն նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այդպիսի սահմանափակում կարող է տեղի ունենալ օրենքով նախատեսված դեպքերում՝ բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթներն իրավախախտման կամ պայմանագրային պարտավորության չկատարման դեպքերի բացակայության պայմաններում անհիմն կերպով հնարավորություն են ընձեռում դիտարկելու անձին սեփականությունից զրկելը նաև որպես պատասխանատվությունից չբխող հարկադիր գործողություն: Իրավական անորոշության հետեւանդով չի երաշխավորվում գույքի նկատմամբ համասեփականատերերի իրավունքի պաշտպանությունը, հնարավորություն ընձեռելով դատական կարգով անձի վրա դնելու՝ Սահմանադրությամբ չսահմանված պարտականություններ:

4. Առարկելով դիմող կողմի պնդումների դեմ, պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Ըստ պատասխանողի՝ օրենսդրը նոտարական վավերացումը չի ճանաչում որպես գործարքի կատարման, պայմանագրի կնքման փուլերից մեկը: Նոտարական այդ գործողությամբ սուլ վավերացվում է պայմանագիրն ստորագրողների ինքնությունը, պայմանագրի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վավերապայմաններին համապատասխանությունը: Օրենսդրը պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում բոլոր նախատեսվելու դեպքում: Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթի շրջանակում պայմանագիրը դիմողը կմրել է ինքնուրույն, առանց որեւէ հարկադրանքի, հետեւարար, դրանով իսկ իրացրել իր՝ որպես սեփականատիրոջ իրավագործությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տօրինելու և կտակելու իր սեփականությունը, ուստի սեփականության իրավունքից գրկման մասին խոսք լինել չի կարող: Ընդունելի չեն նաև դիմողի բերած պատճառաբանությունը համասեփականատիրոջ համաձայնության պարտադիր լինելու վերաբերյալ:

Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմի վերլուծությունը՝ ՀՀ Սահմանադրության 18, 19, 91 և 94 հոդվածների համատեքստում վկայում է, որ օրենսդրը դատարանին ընձեռել է որոշում կայացնելու դիսպոզիտիվ հնարավորություն, ինչը պայմանագրված է վիճարկվող նորմի բնույթով, այսինքն՝ դատարանը յուրաքանչյուր գործով պետք է գնահատի գործի բոլոր հանգամանքները, համադրելով ինչպես օրենսգրքի նորմերի պահանջները, այնպես էլ քաղաքացիական իրավունքի ընդհանուր սկզբունքները:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հիմք ընդունելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ և 9-րդ մասերի պահանջները, անհրաժեշտ է համարում պարզել եւ գնահատել.

ա/ քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների սահ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մանման, փոփոխման եւ դադարման հարաբերությունները կարգավորող իրավական ակտի պահանջվող տեսակը,

թ/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող նորմում, ինչպես նաև գրավոր գործարքների նոտարական վավերացման գործող կարգում, մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների (այդ թվում՝ սեփականության) ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման երաշխավորվածությունը, այդ իրավունքների ու ազատությունների սահմանափակումների բույլատրելիությունը,

գ/ Վիճարկվող նորմի հետ համակարգային առումով փոխկապակցված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այլ նորմների դրույթների սահմանադրականությունը,

դ/ Վիճարկվող նորմում դատարանին վերապահված լիազորության համապատասխանությունն արդարադատության իրականացման՝ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքային պահանջներին,

ե/ Վիճարկվող նորմի մեկնարանման եւ կիրառման վերաբերյալ դատական պրակտիկան:

6. ՀՀ Սահմանադրության 3, 8, 14, 14.1., 18, 19, 31 եւ քազմաքիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների եւ ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում.

- Փիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը,

- Փիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի եւ այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային եւ այլ պարտավորությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերը եւ կարգը:

Քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն ուղղված՝ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց գործողություններն անմիջականորեն կարգա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վորփում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հիմքերորդ բաժնի 18-րդ գլխում ներառված նորմերով, այդ թվում նաև՝ սույն գործով վիճարկվող նորմեր պարունակող 289 եւ 300 հոդվածներով:

Անձանց իրավունքների իրականացման եւ պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների ծագման հիմքերը (10 հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները եւ պաշտպանության եղանակները (11, 12, 14, 16 հոդվածներ), գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընդհանուր կարգը (135 հոդված), սեփականության իրավունքի եւ այլ գույքային իրավունքների պաշտպանության եւ այդ իրավունքների դադարման կարգը (273-288 հոդվածներ), պարտավորության հասկացությունը, կողմների պարտավորությունների կատարումը (345-367 հոդվածներ), ինչպես նաև պարտավորությունների կատարման ապահովման եւ դրանց խախտման դեպքում՝ պատասխանատվության կարգը, դեպքերը (24-րդ եւ 26-րդ գլուխներ):

Սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը զնահատելիս սահմանադրական դատարանը ելնում է այդ նորմը պարունակող հոդվածի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ մյուս հոդվածների (նորմերի) իրավական բովանդակության համադրումից:

7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10 եւ 289 հոդվածների համաձայն՝ քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների ծագման հիմք են օրենքով նախատեսված պայմանագրերը եւ այլ գործարքներ, կամ այն գործողությունները, որոնք ուղղված են այդպիսի իրավունքներ եւ պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն։ Օրենսդիրը հստակեցրել է քաղաքացիական իրավունքների ազատ իրացման շրջանակը (թույլատրելի սահմանները), համաձայն որի՝ անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ, պայմանվ, որ այդ իրավունքների իրականացումը չպետք է վճար պատճառի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներին ու օրինական շահերին։

Վերոհիշյալ նորմերի բովանդակությունից հետեւում է, որ քաղաքացիական հարաբերություններում անձի հայեցողական այդպիսի ազատ գործողությունների արդյունքում են ծագում, փոփոխվում են դադարում քաղաքացիական իրավունքներ եւ պարտականություններ, ինչը, քննության առարկայի շրջանակներում բխում է ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին մասի եւ 42 հոդվածի 2-րդ մասի դրույթներից, հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի սահմանադրականության վիճարկումը հիմնավոր չէ։

8. Քաղաքացիական իրավական հարաբերություններում անձի հայեցողական ազատության եւ դրա՝ օրենքով նախանշված շրջանակներում իրականացնելու սկզբունքից է անմիջականորեն բխում պայմանագրերի եւ այլ գործարքների (բովանդակության, ձեւի) նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված ինչպես ընդհանուր (289-317, 436-469 հոդվածներ), այնպես էլ հատուկ կանոնները, որոնցից է գրավոր ձեւով կնքող գոր-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ծարքների նոտարական վավերացումը (234, 263, 562, 572, 595, 610, 620, 678, 686, 959, 1203-1208, 1245 հոդվածներ): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296 և 299 հոդվածների համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումն լստ ձեւի կատարվում է գործարքի բովանդակությունն արտահայտող եւ գործարք կնքող անձանց (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ստորագրությունները պարունակող փաստաթղթի վրա նոտարի կամ նոտարական գործողության կատարման իրավունք ունեցող պաշտոնատար անձի կողմից վավերացնող մակագրությամբ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված դեպքերում, կամ կողմերից որևէ մեկի պահանջով, իսկ օրենսգրքի 300 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի նոտարական ձեր չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության եւ առողինչ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է, որ պարտադիր նոտարական վավերացման են ենթակա հիմնականում երկկողմ եւ բազմակողմ այն գրավոր գործարքները (պայմանագրերը), որոնք ուղղակիորեն առնչվում են անշարժ գույքի օտարման եւ այդ գույքի հավատարմագրային կառավարման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորմանը, իսկ այդ գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման (ՀՀ քաղ. օր.-ի 301 հոդվածի 1-ին կետ), որպիսի պահանջը չպահպանելն օրենսգրքի 302 հոդվածի 2-րդ կետի համաձայն առաջացնում է օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավակարգավորման միեւնույն միջոցների գործադրման հիմքեր եւ նույնպիսի իրավական հետեւանքներ:

Փաստորեն, գործարքի նոտարական վավերացման նախապայմանը վերաբերում է այն դեպքերին, երբ անհրաժեշտ են իրավական լրացուցիչ միջոցներ՝ պետական գրանցման ձեւով նախապես երաշխավորելու, հատկապես՝ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանված իրականացումը (ՀՀ քաղ. օր.-ի 135, 301 հոդվածներ), ինչպես նաև պետության շահերի պաշտպանությունը:

Միաժամանակ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի համաձայն՝ վավերացնելով փաստաթղթը, նոտարը հաստատում է դրա օրինականությունը եւ հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը, որն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն:

Փաստորեն, գրավոր գործարքի նոտարական վավերացմամբ, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգի շրջանակներում նախապես անվիճելի են ճանաչվում իրավաբանական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, ինչպիսիք են:

ա/ գրավոր ձեւով գործարքի կնքումը եւ դրա՝ օրենքով նախատեսված կարգի պահպանումը,

բ/ պայմանագրի կողմերի ինքնության հաստատումը, նրանց իրավագործությունը եւ ազատ կամարտահայտությունը,

գ/ գործարքի պայմանների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին եւ միջազգային պայմանագրերի դրույթներին, ինչպես նաև կողմերի իրական մտադրությանը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Այսպիսով, գրավոր որոշ գործարքների նոտարական պարտադիր վավերացման հնատիտուտը եւ այդպիսի գործարքներից ծագող, փոփոխվող եւ դադարող իրավունքների պետական գրանցման օրենսդրական պահանջը՝ ելեկով նաեւ անձի իրավունքների եւ դրանց երաշխավորված իրացման վերաբերյալ սահմանադրական սկզբունքային դրույթների բովանդակությունից, քաղաքացիական իրավունքների իրականացման ազատության որոշակի սահմանափակում նախատեսելով հանդերձ, կարեւոր երաշխիք է ինչպես անձանց իրավունքների (ներառյալ սեփականության իրավունքի) արդյունավետ իրացումն ու պաշտպանությունն ապահովելու, այնպես էլ պայմանագրի կողմերի ստանձնած պարտավորությունների բարեկիրդ կատարման, հետեւաբար, նաեւ քաղաքացիական (գույքային) շրջանառության երաշխավորված կայունությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը, միաժամանակ արձանագրում է, որ գործի նյութերի համաձայն կողմերի միջեւ կնքվել է ոչ թե առուվաճառքի, այլ՝ փոխառության պայմանագրի, որը պայմանագրային հարաբերությունների այլ ինստիտուտ է եւ կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքի 46 գլուխ նորմերով:

9. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությամբ մեկնաբանությունից բխում է, որ գրավոր գործարքով պայմանավորված անձանց քաղաքացիական իրավունքների ազատ իրականացման եւ սահմանադրութենամբագրված սկզբունքներով դրանց պաշտպանությունը երաշխավորելու համար, օրենսդիրն անհրաժեշտ է համարել հաստատագրել որոշակի փաստերի իրավաբանական նշանակությունը եւ դրանց առկայությամբ պայմանավորված իրավակարգավորման համապատասխան միջոցներ ու կառուցակարգային լուծումներ: Այդպիսիք են.

- գործարքի նոտարական ձեւը չպահպանելը եւ դրա իրավական հետեւանքը,
- նոտարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի կողմից մասնակի կամ լրիվ կատարելը եւ նոտարական վավերացումից մյուսի խուսափելը, այդ դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոցը,
- դատարանի լիազորությունը՝ գործարքը կատարած կողմի պահանջի դեպքում,
- գործարքը դատական կարգով վավեր ճանաչելը եւ դրա իրավական հետեւանքը,
- գործարքի նոտարական վավերացումից խուսափող կողմի պատասխանատվությունը (պարտավորությունները) մյուս կողմի առջեւ՝ կապված գործարքի կմքման ուշացման հետ:

Սահմանելով գրավոր որոշ գործարքների նոտարական վավերացման պարտադիր պայման, օրենսդիրը միաժամանակ հստակեցրել է այդ պայմանի խախտման իրավական հետեւանքները, ինչպես նաեւ խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանության համապատասխան միջոցը: Տվյալ դեպքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի համա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ձայն գրավոր գործարքի նոտարական վավերացման օրենադրական պահանջի կատարումից կողմի խուսափելու այն դեպքում, եթե մյուս կողմը լրիվ կամ մասնակի կատարել է այդ գործարքի պայմանները, վերջինիս համար հիմք են խախտված իրավունքները դատական կարգով պաշտպանելու սահմանադրական իր իրավունքն իրացնելու, իսկ դատարանին՝ իր հայեցողական լիազորության շրջանակներում վավեր ճանաչելու գործարքը, որի արդյունքում գործարքի հետագա նոտարական վավերացում չի պահանջվում:

Փատորեն, խոսքը վերաբերում է ոչ թե պայմանագրային պարտավորության կատարումից կողմի՝ օրենքով նախատեսված կարգով իրաժարվելու ինստիտուտին, այլ՝ սահմանված կարգով իրավաչափ գործողություն կատարելուց խուսափելուն:

10. Սույն գործով դիմումի առարկայի շրջանակներում քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների ծագման, դրանց իրականացման, գործարքների (պայմանագրերի) կնքման, կատարման ու խախտված իրավունքների պաշտպանության, դրա հետ կապված վեճերով դատական հայեցողական լիազորության իրավաչափ շրջանակների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դատական մեկնաբանման, ինչպես նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունից հետեւում է, որ լուծելով նոտարական վավերացում պահանջող գործարքը վավեր ճանաչելու վերաբերյալ վեճ, յուրաքանչյուր դեպքում դատարանի խնդիրն է պարզել.

- գործարքի օրինականությունը (իրավաչափությունը), գրավոր ձեւի պահպանման փաստը,
- գործարքի նոտարական ձեւը չպահպանելը եւ մեղավոր կողմին,
- գործարքի նոտարական վավերացումից կողմի խուսափելը (գործողությամբ կամ անգործությամբ) եւ դրա հիմքերը,
- նոտարական վավերացում պահանջող գործարքը կողմերից մեկի լրիվ կամ մասնակի կատարելու փաստը եւ դրա օրինականությունը (իրավաչափությունը): Ընդ որում, գրավոր գործարքի փաստացի (մասնակի) կատարման հանգամանքի իրավական նշանակությունը դատարանների կողմից համանան քաղաքացիական վեճեր լուծելիս, կարեւորված է նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի՝ 2001թ. սեպտեմբերի 26-ի թիվ 43 որոշմամբ:

Ինչպես վկայում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառական պրակտիկան՝ կապված անձանց գույքային իրավունքների իրականացման բնագավառում պետության միջամտության թույլատրելիության շրջանակների հետ, ապա այդպիսին իրավաչափ է գնահատվում, եթե՝

- իրականացվում է օրենքին համապատասխան,
- պայմանավորված է հանրային շահերով,
- ապահովում է մասնավոր եւ հանրային շահերի հավասարակշռություն:

Սույն գործի շրջանակներում գնահատելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի սահմանադրականությունը, սահմա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նադրական դատարանն արձանագրում է, որ ցանկացած քնույթի՝ ներառյալ նոտարական վավերացում պահանջող գործարքների հետ կապված քաղաքացիական վեճերը քննելիս, դատարանը՝ որպես պետական մարմին պարտադրված է, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, այդ վեճերը լուծել օրենքին համապատասխան, միաժամանակ անխուսափելիորեն պաշտպանելով ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային ու պետական շահերը:

Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետն իր բովանդակությամբ, կիրառման պրակտիկայով եւ օրենսգրքի այլ նորմերի հետ ունեցած համակարգային փոխկազմակցվածությամբ, երաշխավորում է նոտարական վավերացման ենթակա գործարքների կնքման ու կատարման հետ կապված հարաբերությունների (այդ թվում՝ սեփականության իրավունքի) կարգավորման իրավաչափ միջոցների գործադրման, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 3, 8, 14, 14.1., 18, 19, 31 եւ այլ հոդվածներով նախատեսված ու միջազգային իրավակիրառական պրակտիկայում հաստատագրված սկզբունքներով՝ անձի խախտված իրավունքների դատական պաշտպանության հնարավորություն:

Ելենելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. «Քաղաքացիներ Ա. Սաֆարյանի եւ Հ. Հակոբյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելով վերաբերյալ» գործի վարույթը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2. հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի մասով՝ կարճել:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 289 հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**15 մայիսի 2007 թվականի
ՍԴՌ-702**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ԻՄՊԵՂՄԵՆՏ» ԴԱՅԻՆՔԻ, «ՆՈՐ ԺՎՄԱՆԱԿԱՆԵՐ», «ՕՐԻՆԱՑ
ԵՐԿԻՐ» ԵՎ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՉԱԾՈՂՈՎՔԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՎԱՎՈՐՆԵՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԹԻՎ 149-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻճԱՐԿԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

10 հունիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող կողմից՝ «Խմախմենտ» դաշինքի ներկայացուցիչներ Վ. Հովակիմյանի, Ն. Փաշինյանի եւ Վ. Գրիգորյանի,

«Նոր Ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչներ Հ. Սարգսյանի, Ռ. Թորոսյանի եւ Հ. Բաղդասարյանի,

«Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչներ Հ. Մարգարյանի, Ա. Ավոյանի եւ Գ. Սարգսյանի,

«Հանրապետություն» կուսակցության ներկայացուցիչ Ա. Զեյնալյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Ազարյանի, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Բախչագովյանի, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական եւ ծրագրամներողական վարչության պետ Ն. Հովհաննիսյանի, որպես հարակից պատասխանողներ ներգրավված՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Դանիելյանի եւ ՀՀ դատախազության վարչության պետի տեղակալ Գ. Հարությունյանի, ՀՀ արդարադատության նախարարության նախարարության ներկայացուցիչներ՝ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանի եւ ՀՀ արդարադատության նա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խարարի առաջին տեղակալ Գ. Մալխասյանի, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Ա. Մահտեսյանի, ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ներկայացուցիչ՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամալյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի, 101 հոդվածի 9 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 եւ 74 հոդվածների,

դոնքաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց ««Իմպիշմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունների դիմումների հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 149-Ս որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ են հանդիսացել «Իմպիշմենտ» դաշինքի, «Նոր ժամանակներ», «Օրինաց երկիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունների 2007թ. մայիսի 26-ի դիմումները սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի մայիսի 27-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումները, կայացրել է գործերը քննության ընդունելու եւ գործով որպես պատասխանող կողմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներգրավելու վերաբերյալ որոշումներ: Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31 հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով գործը դատարքնության նախապատրաստելու եւ գործի հանգամանքները նիստում շարադրելու համար գեկուցողներ են նշանակվել սահմանադրական դատարանի անդամներ Հ. Դանիելյանը եւ Վ. Հովհաննիսյանը:

Սահմանադրական դատարանը 2007 թվականի մայիսի 29-ի աշխատակարգային նիստում կայացրել է գործերը «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39 հոդվածով սահմանված կարգով միավորելու վերաբերյալ որոշում: Միաժամանակ, դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45 հոդվածով եւ 74 հոդվածի 4-րդ մասով, սահմանադրական դատարանը սույն գործով հարակից պատասխանողներ է ներգրավել ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ ոստիկանությանը եւ ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին:

Լսելով գործող գեկուցողներ՝ ՍԴ անդամներ Վ. Հովհաննիսյանի եւ Հ. Դանիելյանի համատեղ գեկուցումը, կողմերի ներկայացուցիչների բացարությունները, ուսումնասիրելով նրանց կողմից ներկայացված փաստարկներն ու հակաֆաստարկները, ինչպես նաև հետազոտելով դիմումները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններն անցկացվել են 2007 թվականի մայիսի 12-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68 հոդվածում նախատեսված ժամկետում: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 15 հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու եւ քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 1923 ընտրական տեղամաս: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 171 հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորվել է 41 ընտրատարածք: Նոյն օրենսգրքի 31 հոդվածին համապատասխան կազմավորվել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել եւ վերահսկել է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 29 հոդվածով սահմանված կարգով հավատարմագրվել եւ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել վեց միջազգային կազմակերպությունների 768 դիտորդ եւ 54 տեղական կազմակերպությունների 13693 դիտորդ: Դիտորդներին Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 30 հոդվածով նախատեսված գործառույթների իրականացման հնարավորություն է տրվել ընտրությունների ողջ գործընթացում: Ընտրությունների վերաբերյալ եզրակացություններ են ներկայացրել Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների ու նարդու իրավունքների գրասենյակի, Անկախ պետությունների համագործակցության դիտորդական առաքելությունները, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացրած տեղական կազմակերպություններ:

3. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2007 թվականի մայիսի 19-ին ամփոփել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2007 թվականի մայիսի 12-ի ընտրությունների արդյունքները: Համաձայն կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանադրական դատարան ներկայացված ամփոփիչ արձանագրության՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով քվեաթերթիկում ընդգրկված 22 կուսակցություններին եւ կուսակցությունների մեկ դաշինքին կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդիանուր թիվը կազմել է 1.351.423, որը բաշխվել է հետեւյալ համամասնությամբ. Ազգային ժողովրդավարական կուսակցություն՝ 8556 ձայն, «Ազգային համաձայնություն» կուսակցություն՝ 4199, «Ազգային միաբանություն» կուսակցություն՝ 49864, «Քարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 204483, «Դաշինք» կուսակցություն՝ 32943, «Ժառանգություն» կուսակցություն՝ 81048, Ժողովրդական կուսակցություն՝ 37044, «Ժողովրդավարական

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ուղի» կուսակցություն՝ 8351, «Իմպիշմենտ» դաշինք՝ 17475, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ 177907, Հայաստանի դեմքրատական կուսակցություն (ՀԴԿ)՝ 3686, Հայաստանի երիտասարդական կուսակցություն՝ 2291, Հայաստանի ժողովրդական կուսակցություն՝ 22762, Հայաստանի կոմունիստական կուսակցություն՝ 8792, Հայաստանի հանրապետական կուսակցություն՝ 458258, Հայաստանի մարքսիստական կուսակցություն՝ 2660, «Հանրապետություն» կուսակցություն՝ 22288, Միավորված աշխատանքային կուսակցություն՝ 59271, Միացյալ ազատական ազգային կուսակցություն՝ 2739, «Նոր ժամանակներ» կուսակցություն՝ 47060, Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցություն՝ 989, «Քրիստոնեածողովրդական վերածնունդ» կուսակցություն՝ 3433 եւ «Օրինաց երկիր» կուսակցություն՝ 95324: Անձշտությունների թիվը կազմել է 14665:

Վերոհիշյալ արդյունքների հիման վրա եւ ոեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր՝ 2007 թվականի մայիսի 19-ի թիվ 149-Ա որոշմամբ, ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգի համար ՀՀ ընտրական օրենսգրքի 95 հոդվածի 2-րդ կետով նախատեսված թվով 90 մանդատի շրջանակներում, Հայաստանի հանրապետական կուսակցության ընտրական ցուցակից ընտրված է ճանաչել 41, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝ 18, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ 16, «Օրինաց երկիր» կուսակցության ընտրական ցուցակից՝ 8 եւ «Ժառանգություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ 7 պատգամավորության թեկնածուներ:

4. Դիմելով սահմանադրական դատարան՝ դիմողները գտնում են, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» թիվ 149-Ա որոշումը եւ ընտրությունների արդյունքները, իսկ «Օրինաց երկիր» կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել ԿԸՀ-ի նշված որոշումը եւ ըստ քվեարկության արդյունքների վերահաշվարկի՝ ընտրված ճանաչել կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուների:

«Իմպիշմենտ» դաշինքի ներկայացուցիչները համաձայն սահմանադրական դատարան ներկայացված դիմումի, ինչպես նաև գործի դատարձնության ընթացքում պնդեցին, որ

- ընտրությունների կազմակերպման եւ անցկացման ընթացքում խախտվել է ԱԺ ընտրությունների մասնակից կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքի համար հավասար պայմանների ապահովման օրենսդրական պահանջը,

- ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման եւ անցկացման ընթացքում խախտվել են ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 4, 5, 7, 30 եւ 94-րդ հոդվածները, մի շարք միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունները, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը, ՀՀ ընտրական օրենսգրքի բազմաթիվ հոդվածներ,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ընտրությունները կեղծվել են ծրագրված եւ կազմակերպված եղանակով, դրան են ուղղված եղել նաև ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները, արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների համար ընտրական իրավունքի իրացման հնարավորություն չստեղծելը, կեղծ անձնագրերով քվեարկելը:
- ըստ դիմող կողմի՝ խախտվել է նախընտրական քարոզության՝ օրենքով ասհմանված կարգը, կուսակցությունների կողմից բաժանվել են նյութական միջոցներ, տրվել են օրենքով արգելված խոստումներ, մատուցվել են ծառայություններ, մարդկանց ստիպողաբար տարել են հաճախավաքների, որոնց հետեւանքով խախտվել է ընտրողի կանքի ազատ արտահայտման իրավունքը:

«Իմպիչմենտ» դաշինքի ներկայացուցիչները գտնում են, որ մի շարք տեղամասային կենտրոններում քվեարկության խցիկների փոխարեն տեղադրված են եղել քվեարկության պատվանդաններ, որի հետեւանքով ընտրությունները մասնակի վերահսկելի են եղել, քվեարկության օրը եղել են միկրոավտորուսներով ընտրողներին տեղափոխելու մասսայական դեպքեր, տեղամասային կենտրոններում հաշմանդամների համար չեն ապահովվել իրենց ընտրական իրավունքն իրացնելու անհրաժեշտ պայմաններ:

Կողմը գտնում է, որ ԿԸՀ-ն սահմանադրական նարմին չէ եւ իրավասույթի կազմակերպել ընտրություններ, միաժամանակ գտնում է, որ ԿԸՀ-ն կամայականորեն է մեկնաբանել օրենքների դրույթները եւ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ է անփոփել ընտրությունների արդյունքները:

Իրենց փաստարկները հիմնավորելու համար «Իմպիչմենտ» դաշինքի ներկայացուցիչները ՀՀ սահմանադրական դատարան են ներկայացրել դիմումներ՝ ուղղված ՀՀ արդարադատության նախարարին, ՀՀ գլխավոր դատախազին, կենտրոնական, ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներին, ինչպես նաև ամփոփիչ արձանագրություններ, դիմում-քողոքներ, դատական ակտեր, համապատասխան իրապարակումներ ունեցած թերթերի ցանկ եւ այլ փաստաթղթեր:

5. «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչները գտնում են, որ.

- ԿԸՀ-ն, խախտելով ՀՀ ԸՕ 632 հոդվածի 3-րդ, 115 հոդվածի 1,2 եւ 7-րդ կետերի պահանջները, նիստում չի քննարկել եւ հաշվի չի առել ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի ունեցած՝ ՀՀ ԸՕ այնպիսի խախտումներ, որոնք կարող են ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Կողմը գտնում է, որ ԿԸՀ-ն ուժը կորցրած ճանաչելով ԿԸՀ-ի 12.03.03թ. թիվ 41-Ն որոշումը, վերացրել է նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների եւ ծախսերի հաշվառման գրանցամատյան վարելու իրավական հիմքերը, որով ԿԸՀ-ն զրկվել է նախընտրական հիմնադրամի միջոցները գերազանցած թեկնածուների գրանցումներն ուժը կորցրած ճանաչելու պահանջով ՀՀ ԸՕ 25 հոդվածի 7-րդ կետի հիմքով դատարան

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դիմելու հնարավորությունից, այն դեպքում, եթե մի շարք կուսակցություններ, որոնց կողմից կատարված ծախսերը գերազանցել են իրենց նախընտրական հիմնադրամի միջոցները, մասնակցել են քվեարկությանը և ընտրվել ԱԺ կազմում:

Ըստ դիմողի՝ ՀՌ-ԱՀ-ն եւ ԿԸՀ-ն խախտել են «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածը եւ ԿԸՀ-ի 14.03.07թ. թիվ 48-Ն որոշմամբ սահմանված Կարգի 11-րդ կետը՝ թույլատրելով հեռուստաընկերություններին հեռարձակել քաղաքական եւ քարոզական հաղորդումներ՝ առանց համապատասխան լուսագրերի՝ եթերաժամերի արժեքների բացակայության պայմաններում:

Դիմողի կարծիքով՝ ընդհանուր իրավասության դատարանները խախտել են ՀՕ-ի 40 հոդվածի 8-րդ մասը՝ ըստ էության չընելով ոչ մի դիմում՝ տարաբնույթ հիմնավորումներով մերժելով դրանք, խախտելով սահմանված 5-օրյա ժամկետը: Դիմողը միաժամանակ գտնում է, որ.

- ԿԸՀ-ն խախտել է ՀՕ-ի 102 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ կեղծ փաստարդերի հիման վրա գրանցելով ՀՀԿ, ԲՀԿ եւ ՀՅԴ կուսակցությունների թեկնածուների ցուցակները,
- ՀՀ Վարչապետը խախտել է ՀՕ-ի 221 հոդվածը՝ մասնավորապես, նախընտրական քարոզություն իրականացնելով պաշտոնական պարտականությունները կատարելիս, ԶԼՄ-ների միջոցով լուսաբանելով իր գործունեությունը, արգելված վայրերում քարոզություն իրականացնելով եւ այլն,
- ՀՀ Նախագահը խախտել է օրենքը՝ Հ1-ի եթերում պարզաբանելով ՀՕ-ի պահանջները եւ իրականացնելով հակաքարոզություն,
- տեղի են ունեցել ՀՕ-ի 22 հոդվածի 3-րդ կետով սահմանված սոցիոլոգիական հարցումների արդյունքների հրապարակման կանոնների խախտումներ,
- տպագրվել են սաղրիչ նյութեր «Նոր ժամանակներ» կուսակցության եւ նրա նախագահի վերաբերյալ՝ դրանով իսկ խախտելով ՀՕ-ի 21 հոդվածի 7-րդ մասի պահանջները,
- ՀԸՀ-ներում թույլ են տրվել ելակետային տվյալների փոփոխություններ՝ դրանով իսկ խախտելով ՀՕ-ի 63 հոդվածի 1-ին մասի պահանջները,
- Խախտվել է ՀՕ-ի 48 հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ ընտրողներին պարտադրելով նշումներ կատարել տարբեր գույնի գրիչներով,
- նույն անձինք քվեարկել են մեկից ավելի անգամներ՝ դրանով իսկ խախտելով ՀՕ-ի 10 հոդվածի 2-րդ մասի եւ 55 հոդվածի 1-ին մասի պահանջները:

Իր փաստարկները հիմնավորելու համար «Նոր ժամանակներ» կուսակցությունը ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացրել դիմումներ՝ ուղղված կենտրոնական, ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներին, ամփոփիչ արձանագրություններ, ընտրական գործընթացի արդյունքներն արտացոլող սեփական դիտարկումներ, դիմում-բողոքներ, դատական ակտեր եւ այլ փաստաթղթեր:

6. «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչները համաձայն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սահմանադրական դատարան ներկայացված դիմումի, ինչպես նաև գործի դատաքննության ընթացքում պնդեցին, որ

- մի շաբթ ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների ամփոփման ընթացքում տեղի են ունեցել ՀՀ ՀՕ 6, 141, 15, 271, 401, 402, 44, 53, 56, 60, 61, 62, 63 հոդվածների, ՀՀ ԿՀՀ-ի 22.06.06թ. թիվ 19-Ն, 20-Ն, 21-Ն որոշումների խախտումներ:

«Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչները գտնում են, որ թիվ 32/40 ընտրատեղամասը կազմավորվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 15 հոդվածի պահանջների խախտմամբ, առանձին ընտրատեղամասերի գործավարության մատյաններում քվեարկության արդյունքների ելակետային տվյալները չեն արձանագրվել, առկա գրառումները չեն համապատասխանում սահմանված կարգին, որոշ ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ընթացքում իրականացված գործողությունների մասին արձանագրություններ չկան, տեղ են գտել ընտրական փաստաթոթերի հետ օրենքով նախատեսված գործողությունների իրականացման բազմաթիվ խախտումներ, կատարվել են արձանագրությունների տվյալների՝ օրենքով չնախատեսված փոփոխություններ:

«Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչները գտնում են նաև, որ ընտրությունների արդյունքներն ամփոփվել են իրավասու անձանց դիմում-բողոքներին ընթացք տալու կարգի խախտմամբ, ընդհանուր իրավասության դատարանները չեն ապահովել քաղաքացու արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, իսկ ԿՀՀ-ն անրավարար է կատարել ընտրական օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունները, իրաժարվել է իր գլխավոր պարտականությունից՝ ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնելուց:

Իրենց փաստարկները հիմնավորելու համար «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչները ՀՀ սահմանադրական դատարան են ներկայացրել դիմումներ՝ ուղղված ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներին, ամփոփիչ արձանագրություններ, ընտրական գործընթացի արդյունքներն արտացոլող սեփական դիտարկումներ, դիմում-բողոքներ, դատարանների որոշումներ եւ այլ փաստաթոթեր:

7. «Հանրապետություն» կուսակցության ներկայացուցիչը գտնում է, որ.

- «Դաշինք» կուսակցության համամասնական ընտրական ցուցակով առաջադրված Սամվել Անդրանիկի Բարայանը ԿՀՀ կողմից գրանցվել է՝ ի խախտումն ՀՀ Սահմանադրության 64 եւ ՀՀ ՀՕ 101 հոդվածների,
- ՀՀԿ-ն իր նախընտրական քարոզությունն սկսել է ՀՀ ՀՕ սահմանված ժամկետից վաղ՝ 2007թ. հունվարից՝ Հայկական բանակի հիմնադրման 15-ամյակի պատրվակով, մատնանշելով, որ Հայկական բանակի հիմնադրման 15-ամյակին նվիրված գովազդը ՀՀԿ-ի կողմից իր քարոզական հիմնական պաստառով նույնացվել է նրա ղեկավարի՝ ՀՀ պաշտպանության նախարար, այնուհետեւ ՀՀ վարչապետ, ՀՀԿ համամասնական ցուցակը գլխավորող Ս. Սարգսյանի հետ,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- նախընտրական քարոզարշավի ընթացքում ԶԼՄ-ների կողմից «Հանրապետություն» կուսակցության նկատմամբ դրսեւորվել է խտրական վերաբերմունք,
- հեռուստարձնկերությունների կողմից խախտվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի 2-րդ մասը, մասնավորապես, հաղորդումների հեռարձակումը չի ուղեկցվել «քաղաքական գովազդ» լուսագրով, որի արդյունքում, դիմողի կարծիքով, ոչ թափանցիկ է դարձել փաստացի այդպիսին հանդիսացող գովազդի ֆինանսավորումը,
- «Հանրապետություն» կուսակցության նախընտրական միջոցառման կազմակերպման և անցկացման համար Օվերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճը չտրամադրելով և այն ՀՀԿ-ին համանման միջոցառման համար տրամադրելով՝ խտրական մոտեցում է ցուցաբերվել «Հանրապետություն» կուսակցության նկատմամբ,
- դիմումում մատնանշված՝ օրենքով արգելված մի շարք գործողություններ ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են ունեցել ընտրական գործընթացի և ընտրությունների արդյունքների վրա,
- արտասահմանում գտնվող ՀՀ դիմանագիտական ներկայացուցություններում և հյուպատոսական հիմնարկներում ընտրական տեղամասեր չստեղծելն ուղղակիորեն կարող էր ազդել ընտրությունների արդյունքների վրա, քանի որ անհայտ բվով ՀՀ քաղաքացիներ գրկվել են իրենց ընտրելու իրավունքից: Ընտրություններին նշված անձանց շմասնակցելը կարող էր ազդել այն կուսակցությունների ընտրվելու փաստի վրա, որոնք ընդամենը մի քանի հազար ձայն չեն ստացել ընտրվելու համար,
- առկա են փաստեր այն մասին, որ որոշ ընտրատեղամասերում ընտրողներին բաժանվել կամ խոստացվել են ընտրակաշառք և ծառայություններ, ինչը կարող էր ազդել այդ ընտրատեղամասերի ընտրողների կամարտահայտության վրա,
- իրավասու ընտրական հանձնաժողովներին ուղղված բազմաթիվ բողոքներին հիմնականում արվել են անհիմն պատասխաններ, իսկ որոշ դեպքերում վերջիններս ընդհանրապես խոսափել են պատասխաններ տալուց: ԿԸՀ-ն գրեթե բոլոր դեպքերում համապատասխան դիմումների հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի հարուցել վարչական վարույթ և չի ընդունել վարչական ակտ: Դեռ ավելին, ԿԸՀ-ին՝ որպես կուեզիալ մարմնի, հասցեագրված դիմումներին մշտապես պատասխանել է ԿԸՀ-ի նախագահը՝ իր գրությամբ:

8. Պատասխանող կողմի՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները դիմու կողմի ներկայացրած փաստարկների առնչությամբ գտնում են, որ 2007 թվականի ԱԺ ընտրությունների ժամանակ տեղի չեն ունեցել այնպիսի ընտրախսախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, եւ դիմումները պետք է մերժվեն, քանի որ պատասխանող կողմի կարծիքով.

- դիմու կողմի փաստարկներն ունեն խիստ սուբյեկտիվ բնույթ, իին-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Ված են օրենսդրության կամայական մեկնաբանությունների վրա եւ դիմումներին կից ներկայացված նյութերով հիմնավորված չեն,
- արտասահմանում ընտրական տեղամասեր չստեղծելը չի կարող դիտարկվել ընտրությունների արդյունքների վրա ազդող հանգամանք, քանի որ ՀՀ ընտրական օրենսգիրքը չի նախատեսում քվեարկության կազմակերպում եւ անցկացում Հայաստանի Հանրապետության աշխարհագրական տարածքից դուրս,
 - ընտրողների ցուցակները՝ ցուցակներում անձշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց ըննարկման կարգի եւ պայմանների մասին կից տեղեկանքներով, ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում փակցվել են տեղամասային կենտրոններում, հատկացվել ընտրական հանձնաժողովներին, տեղադրվել ԿԸՀ-ի ինտերնետային կայքում՝ նաև ըստ տեղամասերի, ցուցակների ճշգրտման արդյունքում ընտրողների թիվը նվազել է մոտ 40.000-ով, այդ թվում ցուցակներից հանվել է 9607 մահացածի անուն-ազգանուն,
 - ոստիկանության ծառայողների համար լրացուցիչ ցուցակ չկազմելու վերաբերյալ դիմոն կողմից պնդումը հիմնազորկ է եւ առնչություն չունի իրականության հետ,
 - «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի համաձայն՝ նախարարի պաշտոնը քաղաքական պաշտոն է: ՀՀ օրենսդրությունը որեւէ տարրերակում չի սահմանում պաշտպանության նախարարի եւ այլ քաղաքական պաշտոններ գրադեցնող անձանց միջեւ, ուստի վերջինս ընդհանուր հիմունքներով կարող է առաջադրվել եւ գրանցվել որպես Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու: Առկա է ԲՀԿ-ի հիմնադիր փաստարութքը, իսկ ՀՅԴ-ի գրանցված է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրում, հետեւարար՝ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի ընտրական ցուցակների գրանցումը դատական կարգով ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ պատասխանող կողմից պնդումն անհիմն է,
 - «Դաշինք» կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված պատգամավորության թեկնածու Սամվել Բաբայանի հետ կապված հարցն իր լուծումն է ստացել ՀՀ վճռաբեկ դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ:

Պատասխանող կողմը, անդրադառնալով նախընտրական քարոզության փուլում կատարված իրավախսայումների վերաբերյալ դիմումների փաստարկներին, գտնում է, որ

- բարձրացված հարցերը քննարկվել են ԿԸՀ-ում եւ դիմումներին պարզաբանվել են, որ մինչեւ նախընտրական քարոզության պաշտոնական մեկնարկը, համաձայն ՀՀ Սահմանադրության, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի՝ կուսակցությունն իրավունք ունի օրենսդրությամբ սահմանված կարգով պատորեն տեղեկություններ տարածել իր գործունեության վերաբերյալ, քարոզել իր նպատակները եւ խնդիրները: Նշված գործունեությունը, եթե նույնիսկ պարունակի էլ քարոզության տարրեր, չի կարող նույնացվել նախընտրական քարոզության հետ,

ՀԱՅՍՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Հայկական բանակի 15-ամյակին նվիրված միջոցառումները եւ պատառները չի կարելի նույնացնել նրա ղեկավարի գործունեության հետ, քանի որ տեղադրված գովազդային փահանակները չեն կարող նույնացվել որեւէ աևճի հետ եւ իրենցում որեւէ նախընտրական քարոզության տարր չեն պարունակում: Բացի դրանից, նախընտրական քարոզությանն առնչվող հարցադրումների վերաբերյալ առկա են առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներ, որոնցով դիմողների կողմից նշված փաստերը չեն գնահատվել որպես ընտրախախտումներ:

Պատասխանող կողմը, անդրադառնալով նախընտրական քարոզության փուլում զանգվածային լրատվության միջոցների գործունեության առնչությամբ դիմողների այն պնդումներին, թե որոշ կուսակցությունների նախընտրական միջոցառումներ ընդհանրապես չեն լուսաբանվել, որոշ դեպքերում առանձին ԶԼՄ-ներ չեն մասնակցել առանձին կուսակցությունների նախընտրական միջոցառումներին, գտնում է, որ

- դիմող կողմի հարցադրումներ՝ ներկայացվածն ընտրախախտում որակելու առումով, հիմնազուրկ են, քանի որ ԶԼՄ-ների իրավունքներն ու պարտականությունները, գործունեության երաշխիքները սահմանված են «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ նախընտրական քարոզության ընթացքում նրանց գործունեության առանձնահատկությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20 հոդվածով, համաձայն որի՝ ԶԼՄ-ները լրատվական հաղորդումներում թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների կողմից իրականացվող նախընտրական քարոզարշավի վերաբերյալ պետք է ներկայացնեն անկողմնակալ եւ գնահատականներից զերծ տեղեկատվություն՝ ապահովելով արդար եւ հավասար պայմաններ: ԶԼՄ-ներին իրենց միջոցառումների վերաբերյալ տեղեկացնելու փոխարեն դիմողներն ընտրել են պետական մարմիններին տարբեր բողոքներ ներկայացնելու ուղին: Ի դեպքում նրանք չեն կցել իրենց հետագա հանդիպումների ժամանակացույցը:

Պատասխանող կողմը, անդրադառնալով «Հեռուստատեսության եւ ռադիոյի» մասին ՀՀ օրենքի 11 հոդվածի խախտումների վերաբերյալ դիմողների հարցադրումներին, գտնում է, որ նշված հոդվածը հակասական, ոչ միանշանակ մեկնարաբանության տեղիք է տալիս, ինչը բարդացնում է հոդվածում ամրագրված դրույթների կիրառումը՝ շատ դեպքերում այն դարձնելով անհնարին, քանի որ անհասանավի է, թե որն է հանրաքենների եւ ընտրությունների քարոզությանը նախորդող ժամանակաշրջանը:

Հեռուստատելիքանի վրա «քաղաքական գովազդ» լուսագրի պարտադիր ցուցադրման առնչությամբ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները գտնում են, որ այդ հարցը կարգավորված է Եվրախորհրդի նախարարների կոմիտեի R (99) 15 հանձնարարականում, որի 5-րդ կետում նշված է, որ լուսագիրը պարտադիր է վճարովի գովազդի համար: Անդրադառնալով առանձին հեռուստաընկերությունների առանձին հե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ղինակային հաղորդումներին այս կամ այն կուսակցության ներկայացուցիչներին չիրավիրելու հանգամանքներին, պատասխանող կողմի կարծիքով՝ դրանք ընտրախախոռում դրակվել չեն կարող, քանի որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն արգելվում է զանգվածային լրատվության միջոցի նկատմամբ որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն նպատակառուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանք կիրառելը:

Պատասխանող կողմը, անդրադառնալով պաշտոնատար անձանց կողմից նախընտրական քարոզություն իրականացնելու վերաբերյալ դիմող կողմի պանդումներին, գտնում է, որ ընդունելի չէ «պաշտոնական պարտականություններ» եւ «աշխատանքային ժամեր» հասկացությունների բովանդակային ծավալների նույնացումը:

Ըստ պատասխանող կողմի՝ դիմումները կուսակցությունների բնականուն գործունեությանն ուղղված ֆինանսական միջոցները նույնացրել են նախընտրական քարոզության համար ծախսվող միջոցների հետ, որի արդյունքում հանգել են սխալ եզրակացության: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 2007թ. փետրվարի 1-ի թիվ 27-Ն որոշմամբ ստեղծված վերահսկիչ-վերատուգիչ ծառայության միջոցով, սահմանված կարգով, իրականացրել է նախընտրական հիմնադրամների վերահսկողությունը:

Պատասխանող կողմը, անդրադառնալով նախընտրական քարոզության համար դասիներ եւ այլ շինություններ չտրամադրելու մասին դիմող կողմի հարցադրմանը եւ հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 1-ին կետին, ԿԸՀ-ի 2005թ. օգոստոսի 3-ի որոշմամբ, պարզաբանեց, որ նման պարտականություն ունեն միայն պետական մարմինները, այն էլ միայն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի պահանջով: Մինչեւ դիմումներում չի նշում որեւէ դեպք, երբ սահմանված կարգով ԸԸՀ-ին դիմելուց հետո պետական մարմինների տրամադրության տակ առկա դասիները չտրամադրվեն կուսակցություններին:

Պատասխանող կողմը, անդրադառնալով նախընտրական քարոզության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ընտրողների հարկադրաբար մասնակցության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին, նշեց, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը դեռևս 2007 թվականի մայիսի 10-ին համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ դատախազությանը եւ 29.05.2007թ. ստացել պատասխան այն մասին, որ նախապատրաստվել են նյութեր, իսկ 25.05.2007թ. որոշմամբ քրեական գործ հարուցելը մերժվել է՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառով:

Պատասխանող կողմը, անդրադառնալով ԿԸՀ կողմից դիմում-բողոքների քննարկման առնչությամբ դիմող կողմի պանդումներին, արտահայտեց այն դիրքորոշումը, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր ստացած բոլոր դիմումները քննարկել եւ հասցեատերերին պատասխաններ է ուղարկել ՀՀ ընտրական օրենսգրքի 401 հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում: Ընտրությունների ժամանակահատվածում կենտրոնական ընտրական հանձնաժողովի ավելի քան երկու տասնյակ ակտեր բողոքարկվել են դատարան, որոնցից ուժը կորցրած է ճանաչվել

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ընդամենը մեկը: Ինչ վերաբերում է վարչական վարույթ շարուցելուն, ապա վերը նշված նորմով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդպիսի պարտականություն չունի:

Դատախանող կողմը, անդրադառնալով ընտրակաշառքի եւ ծառայությունների մատուցման վերաբերյալ դիմող կողմի հայտարարությանը, նշեց, որ ՀՀ դատախազության տեղեկանքի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2. հոդվածի հատկանիշներով հարուցվել են քրեական գործեր երեք անձի նկատմամբ:

Դատախանող կողմը, անդրադառնալով բարեգործական ծրագրերի իրականացման վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին, նշեց, որ նինջեւ նախընտրական քարոզության սկիզբը կուսակցությունները կարող են նպաստել բարեգործական ծրագրերի իրականացմանը, քանի որ օրենսդրական համապատասխան արգելվ գոյություն չունի:

Դատախանող կողմը, անդրադառնալով քվեարկության արդյունքների ամփոփման, ընտրական փաստաթղթերի հանձնման կարգի խախտման վերաբերյալ դիմոդ կողմի պնդումներին, գտնում է, որ.

- տեղամասային ընտրական հանձնաժողովները ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով քվեարկության ավարտից հետո 10 ժամվա ընթացքում ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը,

- ընտրական տեղամասերում մեկ քվեարկության արդյունքների ամփոփման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում նիաժամանակ ամփոփել են թե՛ համամասնական եւ թե՛ մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքները, ինչի պատճառով աշխատել են գերծանրաբեռնված, որն առանձին դեպքերում հանգեցրել է ընտրական օրենսգրքի ընթացակարգային որոշ նորմերի չպահպանմանը, թերացումների, որոնք տեխնիկական բնույթի են եւ չեն հանգեցրել ամփոփիչ արձանագրությունների ելակետային տվյալների փոփոխության,

- ամփոփիչ արձանագրություններում թվարանական (ոչ ելակետային) տվյալների սխալներն օրենքով սահմանված կարգով վերացվել են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների /տեղակալների/ եւ /կամ/ քարտուղարների կողմից եւ վավերացվել նրանց ստորագրություններով ու տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքներով,

- «Կողմ քվեարկված քվեարերթիկների ընդհանուր թիվը», «Վավեր քվեարերթիկների թիվը», «Անշտուրթյունների չափը» տողերի տվյալները հաշվարկել են «Ընտրություններ ավտոմատացված համակարգ» ծրագիրը, եւ այդ տվյալների հանրագումարն է ներառվել քվեարկության արդյունքների վերջնական արձանագրությունում,

- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ ամփոփելով ստացված տվյալները, բերել է հանրագումարի, բացահայտ անձտություններ, վրիպակներ, բացքողումներ եւ նմանատիպ այլ թերություններ հայտնաբերելու պարագայում չի ցուցաբերել մեխանիկական նոտեցում, քանի որ ամփոփում է քվեարկության արդյունքները եւ ոչ թե ստացված քվերի մեխանիկական հանրագումարը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Պատասխանող կողմը, անդրադառնալով վերահաշվարկի վերաբերյալ դիմող կողմի հարցադրմանը, գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով եւ ժամկետներում վերահաշվարկի պահանջի մասին դիմումներ են ստացվել միայն թիվ 5, 11, 14, 15 եւ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում կամ՝ թվով 32 տեղամասերի վերաբերյալ, որը կազմում է տեղամասերի ընդհանուր թվի ընդամենը 1,66%-ը: Թվով չորս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների վերահաշվարկն իրականացվել է ողջ ծավալով, իսկ թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում 23 դիմումների առնչությամբ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում հենարավոր է եղել իրականացնել երեք տեղամասերի քվեարկության արդյունքների վերահաշվարկ, ինչն ունի օրյեկտիվ պատճառաբանություն՝ նույն դիմողի կողմից նույն ընտրատարածքում ներկայացվել են նաև մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների թվով 23 ընտրական տեղամասերում վերահաշվարկի պահանջի մասին դիմումներ, - վերահաշվարկների արդյունքում կուսակցություններին տրված ճայների թվի էական փոփոխություններ չեն եղել, սակայն թիվ 14/55, 14/70 եւ 15/16 ընտրական տեղամասերում հայտնաբերվել են առանձին խախտումներ եւ նյութերն ուղարկվել են ՀՀ դատախազություն, փաստերի առթիվ հարուցվել են քրեական գործեր:

9. Գործով որպես հարակից պատասխանող ներգրավված՝ ՀՀ դատախազության ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գ. Դանիելյանը դիմու կողմի ներկայացրած փաստարկների առնչությամբ հայտնեց, որ դիմումներում բերված փաստարկները հիմնավորված չեն եւ չեն կարող հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007թ. մայիսի 19-ի որոշումն անվավեր ճանաչելու համար:

Սիաժամանակ, Գ. Դանիելյանը նշեց, որ.

- դիմուների կողմից մատնանշված իրավախախտումների վերաբերյալ չեն ներկայացվել հիմնավոր փաստարկներ, որի արդյունքում վերջինների եղանակումներում մեծ տեղ է հատկացվել սուբյեկտիվ քնույթի մեկնաբանություններին,
- ընտրական իրավունքի խախտումների, այսպես կոչված, զանգվածային քնույթը չի համապատասխանում իրականությանը, դրանց գերակշիռ մասը քննարկման առարկա է դարձել Հայաստանի Հանրապետության դատախազությունում: Մասնավորապես, դատախազությունում դեռեւ 2007թ. ապրիլի 10-ին ձեւավորվել են երկու հանձնախմբեր, որոնք հանրապետության տարածքում համակարգել են ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների քննարկումը: Այդ հանձնախմբերի կողմից կատարված աշխատանքի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղ են գտել ընտրական իրավունքի տարաբնույթ խախտումներ, սակայն դրանք զանգվածային քնույթը չեն կրել,
- կուսակցությունները, ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելիս, որպես կանոն, բավարարվել

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Են սույկ հաղորդումներ ներկայացնելով եւ միանշանակ հրաժարվել են բացատրություններ տալուց,

- 2007թ. մայիսի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության դատախազությունն ստացել է ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ թվով 80 հաղորդում, որոնցից 41-ը՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից, 39-ը՝ լրատվության միջոցներից: Դրանց քննարկման արդյունքում հարուցվել է թվով 15 քրեական գործ, իսկ 57-ով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Ընդունում, մերժման որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ գերակշիռ մասի հիմքում դրված է հանցադեպի բացակայությունը,
- նախընտրական քարոզչություն կատարելու սահմանված կանոնների խախտման համար պատասխանատվություն է սահմանված միայն Վարչական իրավախասումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 401 հոդվածով, ուստի այդ քնույթի խախտումներ մատնանշող հաղորդումների հեղինակներին հանգամանորեն պարզաբանում է տրվել այդ մասին,
- հաղորդումների ցանկում մեծ թիվ են կազմում այնպիսիք, որոնցում բարձրացված են այս կամ այն ընտրական հանձնաժողովի կամ պետական այլ իրավասու մարմնի կողմից օրենքին հակասող իրավական ակտ ընդունելու կամ դատարանի կողմից ակնհայտ անհիմն դատական ակտ ընդունելու վերաբերյալ հարցադրումներ: Բազմից դատախազության կողմից պարզաբանում է տրվել այն մասին, որ նշված դեպքերում իրավաչափ է հիշյալ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 24-րդ եւ 26-րդ գլուխների նորմերով սահմանված կարգով վիճարկել դատարաններում,
- այս կամ այն իրավախասումն փաստի առնչությամբ դիմող կողմի ներկայացների կողմից Հայաստանի Հանրապետության դատախազություն դիմելու եւ որեւէ պատասխան չստանալու վերաբերյալ պնդումները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ առանց որեւէ բացառության քննարկվել եւ սահմանված ժամկետներում պատասխան է տրվել բոլոր հաղորդումներին:

10. Գործով որպես հարակից պատասխանող ներգրավված՝ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանը կուսակցությունների գրանցման օրինականության վերաբերյալ հարցադրման կապակցությամբ պնդեց, որ դրանց գրանցումն օրինական է:

Անդրադառնալով կուսակցությունների ֆինանսական հաշվետվություններին՝ Դ. Հարությունյանը նշեց, որ ՀՀԿ, ՀՅԴ եւ ԲՀԿ կուսակցությունները ժամանակին եւ պատշաճ կերպով ներկայացրել են իրենց ֆինանսական հաշվետվությունները, եւ օրենքով սահմանված ժամկետում համապատասխան ֆինանսական հաշվետվությունը հրապարակվել է:

11. Գործով որպես հարակից պատասխանող ներգրավված՝ ՀՀ ոստիկանության ներկայացնից՝ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Ա. Մահտեսյանը դիմող կողմի ներկայացրած փաստարկների առնչությամբ հայտնեց, որ դիմումներում եւ դատաքննության ընթացքում հնչած

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պատասխաններում չկա որեւէ հիմնավոր փաստարկ ընտրացուցակները թերի կազմելու մասին՝ այն հաշվով, որ դրանք ազդեն ընտրությունների վերջնական արդյունքների վրա: Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից կազմված՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականի համապետական ընտրությունների ընտրացուցակներում առաջին անգամ գրանցվել է անձտությունների շատ ցածր տոկոս (0.13%:: Ընտրացուցակները վաղօրոք տեղակայված են եղել ինտերնետ կայքում, քաղաքացիներից եւ երկու կուսակցություններից ստացվել են առաջարկություններ դրանցում որոշ ուղղումներ կատարելու վերաբերյալ, եւ որեւէ կուսակցության ահազանգ ամարձագանք չի մնացել:

Ա. Մահտեսյանը դիմող կողմից հարցադրումների առնչությամբ նշեց, որ դիմող կողմից այն վարկածը, որ նախընտրական շրջանում Հայաստանի Հանրապետությունում տպագրվել են լրացուցիչ անձնագրեր՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում ընտրակեղծիքներ կատարելու նպատակով, անհիմն են եւ մինչ օրս նման հայտարարություններ անող անձանց կողմից իրավասու մարմիններին չի ներկայացվել որեւէ փաստ այդ հանգանաճը հաստատելու համար:

Անդրադառնալով դիմոդ կողմից ներկայացուցիչ Ռ. Թորոսյանի այն փաստարկին, որ ըստ Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության «ՀՀ խորհրդարանական ընտրություններ 2007թ. նախնական հայտնաբերումների եւ եզրակացությունների վերաբերյալ» փաստարդի, դիտորդները թիվ 31 ընտրատարածքի մի տեղամասից դուրս տեսել են մարդկանց, ովքեր իրենց անձնագրերում կեղծ էջ են ունեցել (ներառյալ լուսանկարը), որը, ըստ նրանց, վկայում է քվեարկողի անձը հաստատող փաստարդերի առնչությամբ կեղծիքների մասին, Ա. Մահտեսյանը նշեց, որ այստեղ որեւէ կոնկրետ ապացույց չկա, որը կհաստատի կեղծ անձնագրի առկայությունը, երկրորդ՝ ՀՀ գլխավոր դատախազությունը դիմել է դիտորդական առաքելությանն այդ փաստի կապակցությամբ իրենց ներկայացնել դեպքի մանրամասները, սակայն մինչ օրս որեւէ պատասխան կամ փաստարկ չի ստացվել: Կարելի է միայն ներադրել, որ տվյալ պարագայում խոսքը վերաբերում է ՀՀ քաղաքացու անձնագրի ռուսերեն ներդիրին, որի ձեւը եւ նկարագիրը հաստատված է ՀՀ կառավարության 1999 թվականի մայիսի 25-ի թիվ 347 որոշմամբ, համաձայն որի՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը կարող է ունենալ ռուսերեն ներդիր, որը պարունակում է ՀՀ քաղաքացու անձնագրային ռուսերեն տվյալները եւ լուսանկարը:

12. Գործով որպես հարակից պատասխանող ներկրավված՝ ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ներկայացուցիչ՝ ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գ. Ամայանը դիմում կողմից ներկայացրած փաստարկների առնչությամբ՝ կապված հեռուստարաններությունների եւ ռադիոներությունների, դրանց գործունեությունը վերահսկող իրավասու մարմինների կողմից ՀՀ ընտրական եւ հեռուստատեսության ու ռադիոյի մասին օրենսդրության ենթադրյալ խախտումների հետ, որոնք կարող էին ազդել ՀՀ ԱԺ 2007թ. մայիսի 12-ի ընտրությունների արդյունքների վրա, հայտնեց, որ «Հեռուստատեսության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եւ ուղիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ում ամրագրված դրույթները հակասական են եւ տարաբնույթ մեկնաբանության տեղիք են տալիս: Դրանք հաճախ պատճառ են թյուրլմբոնումների եւ շահարկումների: Դիմողների կողմից նշված իրավախախումների գերակշիռ կամ առնվազն զգայի մասը վերագրվում է հենց օրենսդրությունների քարոզությանը նախորդող ժամանակաշրջանին: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007թ. փետրվարի 1-ի թիվ 1-Ա որոշմամբ հաստաված ՀՀ ԱԺ 2007թ. մայիսի 12-ին կայանալիք ԱԺ պատգամավորների հերթական ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հիմնական նիշոցառումների ժամանակացույցի 24-րդ կետի համաձայն՝ նախընտրական քարոզությունն սկսվել է 2007թ. ապրիլի 8-ից եւ ավարտվել մայիսի 10-ին: Այս կապակցությամբ անհիմն է դիմողների կողմից նշված 2006 թվականի կեսերից կամ 2007 թվականի փետրվարին իրավանացված քարոզությունը նախընտրական որակելու հարցադրումը: Այդ օրենքի հոդված 11-ով քաղաքական նյութի եւ քարոզության նույնացումը դիմողների համար հիմք է հանդիսացել հեռուստառադիմունկերությունների կողմից տեղեկատվական, խմբագրական, փաստավակերագրական, հեղինակային կամ մի շարք այլ հաղորդումների՝ առանց անընդմեջ «Քաղաքական գովազդ» կամ «Նախընտրական քարոզական հաղորդում» լուսագրի հեռարձակումն իրավախախումն որակելու համար: Միայն «Հեռուստառեսության եւ ուղիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի երրորդ մասով սահմանված կարգով տրամադրված երերաժամն է, որ պետք է ուղեկցվի «Քաղաքական գովազդ» կամ «Նախընտրական քարոզական հաղորդում» լուսագրելով: Սա է հավաստում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզության լուսաբանման միջոցառումների մասին» 09.09.1999թ. թիվ R (99) 15 հանձնարարականի 5-րդ կետը, համաձայն որի՝ պահանջվում է հանրությանը տեղեկացնել կուսակցություններին եւ թեկնածուներին նախընտրական նպատակներով, վճարովի հիմունքներով տրամադրված երերաժամի եւ դրա՝ վճարովի քաղաքական գովազդ հանդիսանալու մասին:

Անդրադառնալով «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչ այն հայտարարությանը, համաձայն որի՝ հեռուստառադիմունկերությունները չեն ներկայացրել վճարովի երերաժամի արժեքը, բացառությամբ քաղաքական գովազդի համար սահմանված սակագների, Գ. Ամալյանը նշեց, որ ընտրություններին մասնակցող թեկնածուներին, կուսակցություններին եւ կուսակցությունների դաշինքներին նախընտրական նպատակներով վճարովի հիմունքներով տրամադրված երերաժամը նույն քաղաքական գովազդն է: Հայաստանյան թվով ութ հեռուստարենկերություն եւ մեկ ուղիորներություն, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մինչեւ 2007 թվականի փետրվարի 11-ը հրապարակավ հայտնել են վճարովի քաղաքական գովազդի իրենց երերաժամի արժեքը, միաժամանակ նշելով այդ նպատակով տրամադրվող երերաժամի տետղությունը:

13. Գործը քննության նախապատրաստելու ընթացքում սահմանադրական դատարանը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահան-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Չել եւ ստացել է ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները՝ տեղամասերում քվեարկության արդյունքների մասին, ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամների՝ օրենքով նախատեսված հաշվետվությունները, ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ ստացված դիմում-բողոքների քննարկման արձանագրությունները եւ դրանց վերաբերյալ պատասխանները, կազմակրված ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները, ՀՀ կառավարությունից պահանջել է ՀՀ տարածքից դրւս գտնվող ՀՀ քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովից պահանջել եւ ստացել է 2003-2007թթ. իր իրավասության շրջանակներում հաստատված եւ իրականացված բարեգործական ծրագրերի ցանկը, ՀՀ դատական դեպարտամենտից պահանջել եւ ստացել է ՀՀ Ազգային ժողովի 12.05.2007թ. ընտրությունների վերաբերյալ գործերով ՀՀ դատարանների կողմից ընդունված ակտերի պատճենները: Թվարկված բոլոր նյութերը տրամադրվել են դատավարության կողմերին:

14. Սահմանադրական դատարանի հանձնարարությամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ստուգել է «Օրինաց երկիր» կուսակցության մատնանշած քվեարկության արդյունքներով թիվ 14/46, 14/64, 14/72, 15/11, 15/19, 15/28, 15/33, 15/35, 15/53, 15/61, 15/64, 16/19, 16/33, 16/52, 17/30, 17/35, 17/36, 18/21, 18/43, 20/27, 20/35, 20/36, 20/39, 20/45, 20/47, 21/16, 23/12, 23/16, 23/21, 23/22, 23/23, 23/28, 23/32, 23/33, 23/37, 23/39, 23/41, 23/43, 23/50, 23/56, 23/57, 23/58, 23/64, 25/13, 27/16, 27/23, 28/31, 38/22, 40/54, 41/14 տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից կազմված արձանագրությունները, որոնց արդյունքում պարզվել է հետևյալը.

- թիվ 14/46, 14/64, 14/72, 15/11, 15/19, 15/28, 15/33, 15/35, 15/53, 15/61, 16/19, 17/36, 17/35, 17/30, 18/21, 18/43, 20/39, 23/33, 23/37, 23/41, 25/13 27/16, 27/23, 28/31, 41/14 տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրություններում սխալմամբ չեն նշվել կամ սխալ են նշվել ելունդների տվյալները, եղել են նաև այլ վրիպակներ, որոնք շտկվել են՝ հիմք ընդունելով տվյալ տեղամասերի ստացականները: Նշված տեղամասերում քվեարկության արդյունքները վերահաշվարկվել են ԸՀՀ-ների կողմից՝ օրենքով նախատեսված կարգով, եւ արդյունքները չեն փոփոխվել,
- թիվ 15/64, 16/33, 16/52, 20/27, 20/36, 20/45, 23/12, 23/16, 23/21, 23/22, 23/23, 23/28, 23/32, 23/43, 23/50, 38/22, 40/54 ԸՀՀ-ները քվեարկության արդյունքներն ամփոփելիս իրենք են շտկել իրենց կողմից թույլ տրված սխալները, եւ արդյունքները չեն փոփոխվել:
- թիվ 41/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունում ՀՀԿ-ի օգտին տրված ձայների թիվն ավելացվել է՝ 72-ի փոխարեն նշելով 102, ինչը, պատասխանողի կարծիքով, ԸՕ-ի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պահանջների խախտում է: Թիվ 20/35 ընտրական տեղամասում անձ-սուրյունների թիվն ավելացել է 2-ով, թիվ 20/36 ընտրական տեղամա-սում՝ 24-ով, թիվ 23/39 ընտրական տեղամասում՝ 752-ով, թիվ 23/41 ընտ-րական տեղամասում՝ 539-ով, թիվ 23/56 ընտրական տեղամասում՝ 60-ով, թիվ 23/57 ընտրական տեղամասում՝ 330-ով, թիվ 23/64 ընտրական տեղամասում՝ 59-ով, թիվ 41/14 ընտրական տեղամասում՝ 3-ով:

15. Սույն գործով դիմողների ներկայացրած փաստարկների իրավագիւ-հաստման խնդրում սահմանադրական դատարանը ելնում է հետևյալ դիրքորոշումից. եթե դիմող կողմն ընտրությունների նախապատրաստման, անց-կացման եւ արդյունքների ամփոփման գործընթացով պայմանավորված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմնների որոշումները, գործողությունները կամ անգործությունը մինչեւ սահմանադրական դատա-րան դիմելը ՀՀ ընտրական օրենսգրքով եւ իրավական այլ ակտերով նախա-տեսված՝ արտադատական (վարչական) կամ դատական կարգով չի բողոքարկել, այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամ-կետներում չի օգտագործել (սպառել) իր ընտրական իրավունքների պաշտ-պանության՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները, ապա լիարժեք չեն դատնում սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքնե-րով քննվող հանրային-իրավական վեճի շրջանակներում ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր ներկայացնելու եւ դրանցով իր փաս-տարկները հիմնավորելու նրա դատավարական հնարավորությունները:

ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի համաձայն սահմանադ-րական դատարանում վեճի առարկան ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումն է, որը, համաձայն Սահմանադրության 101 հոդվածի 9-րդ կետի՝ դիմող սուրյեկտը քննության առարկա է դարձնում «իրեն առնչ-վող հարցերի» շրջանակում: ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդ-յունքներով իրավասու ընտրական հանձնաժողովների որոշումների իրա-վական հիմնավորվածությունը սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել երկու տեսանկյունից. ինչպես դրանց ընդունման սահմանված կարգի (ընթացակարգի), դրանց՝ օրենքով պահանջվող ձեւի եւ կառուցվածքի պահպանվածության (ձեւական հիմքեր), այնպես էլ՝ դրանցով նյութա-կան իրավունքի նորմերի կիրառման ենթադրյալ սխալների հիմքով, որով ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողովնե-րը սխալ հետեւության են հանգել որտեև կուսակցության (կուսակցություն-ների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թվով թեկնածուների ընտրվելու կամ ընտրվելու փաստի վերաբերյալ (նյութական հիմքեր):

Ընթացակարգային (ձեւական) սխալները որպես իրավագնահատման հիմք սահմանադրական դատարանի կողմից կարող են ճանաչվել միայն այն դեպքում, եթե դիմողն ապացուցի դրանց անմիջական պատճառահե-տեւանքային կապն ընտրությունների արդյունքների հետ: Սահմանադրա-կան դատարանը ելնում է այդ սխալների ոչ թե ձեւական հաստատագր-ման անհրաժեշտությունից, այլ՝ ընտրողների ազատ կամքի եւ դրանով պայմանավորված՝ ընտրությունների արդյունքների վրա դրանց ունեցած ազդեցությունից:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Միաժամանակ, ընտրությունների արդյունքներով իրավասու ընտրական հանձնաժողովի որոշումը սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել միայն այն դեպքում, եթե, դիմողի կարծիքով, հանձնաժողովը պետք է ընդուներ մեկ այլ որոշում, այսինքն՝ ամրագրեր ընտրությունների այլ արդյունքներ, որը եւ պետք է հիմնավորվի դիմողի կողմից: Այդ նպատակով դիմող կողմը սահմանադրական դատարան պետք է ներկայացնի ընտրախախտումների այնպիսի փաստեր, որոնք օրենքով սահմանված կարգով նախապես ներկայացվել են իրավասու ընտրական հանձնաժողովին, որի արդյունքում, իր կարծիքով, կհաստատագրվեին ընտրությունների այլ արդյունքներ: Սահմանադրական դատարան իմաստության մեջ կազմություն է համարվության մեջ կազմություն և առանց ազդեցությունն ընտրությունների արդյունքների վրա: Սահմանադրական դատարանն այդ սկզբունքից ենթելով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ընտրական համակարգի հետագա բարելավման սահմանադրահրավական երաշխիքների ապահովման անհրաժեշտությունից ենթելով է հետազոտել ու գնահատել գործով ներկայացված փաստերն ու փաստարկները:

16. Համադրելով կողմերի փաստարկները, գնահատելով գործում առկա փաստերը, սահմանադրական դատարանը հիմնավոր է համարում, որ.

- ՀՀ ԿՀՀ-ն եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները նախընտրական քարոզության փուլում հիմնականում գերադասել են առաջնորդվել ընտրախախտման վերաբերյալ դիմումի առկայության դեպքում վերահսկողություն իրականացնելու սկզբունքով, որը չի կարող երաշխավորել այդ հանձնաժողովների՝ օրենքով վերապահված լիազորությունների արդյունավետ իրացումը,
- տեղ են գտել քվեարկության օրվա եւ տեղի մասին ընտրողներին ոչ պատշաճ իրազեկելու դեպքեր,
- դեռեւս ցածր է առանձին ընտրական հանձնաժողովների անդամների պատրաստվածության աստիճանը, ինչի արդյունքում եղել են կազմակերպական թերացումներ եւ արձանագրություններ կազմելու ձեւական սխալներ, որի մասին վկայել են նաև միջազգային դիտորդները,
- զգայի բվով տեղամասային կենտրոններում հաշմանդամների համար քվեարկությանը լիարժեք մասնակցելու պայմանները բավարար չեն եղել,
- ընտրությունների արդյունքների ամփոփման ընթացքում տեղ են գտել արձանագրությունների ոչ ճիշտ կազմման, անթույլատրելի փոփոխություններ կատարելու, ինչպես նաև ընտրական փաստաթղթերի կեղծման առանձին փաստեր, որին հատուկ անդրադարձ են կատարել նաև միջազգային դիտորդներն իրենց՝ ընտրություններին հաջորդող միջանկյալ գեկույցում,
- ՀՀ ընտրական օրենսգրքում «արձանագրությունների ելակետային տվյալներ» հասկացության պարզաբանման բացակայության պայմաններում, ընտրական հանձնաժողովները որոշ դեպքերում կամայականորեն են այն մեկնաբանել,
- ՀՀ ընտրական օրենսգրքի 22 հոդվածի 3-րդ կետի պահանջի կատա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բումը՝ սոցիոգիական հարցման արդյունքները հրապարակելու ֆինանսավորման աղբյուրը նշելու վերաբերյալ պահանջի մասով, լիարժեք չի ապահովել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ որոշակի խնդիրներ են առկա նաև ՀՀ ԿԸՀ-ի կողմից նախընտրական քարոզության նկատմամբ վերահսկողության, ընդհանուր իրավասության դատարաններում հատուկ հայցային վարույթի կարգով ընտրական իրավունքի պաշտպանության համակարգի ոչ բավարար արդյունավետության, նախընտրական հիմնադրամի միջոցների ծախսման վերահսկելության ապահովման հարցերում:

17. Չնայած ՀՀ ընտրական օրենսգրքի որոշակի բարեփոխումներին, օրենսգրքում եւ ՀՀ օրենսդրական այլ ակտերում տեղ են գտել այնպիսի անհամապատասխանություններ եւ այլ թերություններ, որոնք խնդիրներ են առաջացնում նախընտրական գործընթացների կազմակերպման, ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հարցերում: Օրինակ, ընտրական օրենսգրքի 40 հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), բացառությամբ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների, կարող են բողոքարկվել վերաբննիչ դատարան»: Նման նորմը հաշվի է առել բողոքի կարեւորությունը եւ առանձնահատուկ բնույթը, այդ բողոքները կոլեգիալ կարգով քննելու եւ դատարանի ակտի նկատմամբ նաև ավելի մեծ վստահություն ապահովելու անհրաժեշտությունը, քանի որ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն «Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու մասին դիմումների վերաբերյալ դատարանները վճիռներ կայացնում են սույն հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետներում: Այդ վճիռները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից»: Փաստորեն, ընտրական վեճները, նաև վերաբննիչ դատարանի միջոցով, պետք է լուծվեն հատուկ հայցային վարույթի կարգով: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը վերաբննիչ դատարանի մասով նման հնարավորություն չի նախատեսել, որի արդյունքում հատուկ հայցային վարույթի կարգով վերաբննիչ դատարանի կողմից ՀՀ ԿԸՀ որոշումները, գործողությունները (անգործությունը) ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված ընթացակարգերով բողոքարկելը հնարավոր չի դարձել:

Իրավակիրառական պրակտիկայում միասնական մոտեցում գոյություն չունի «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի պահանջների ապահովման հարցում: Մասնավորապես, դա վերաբերում է նախընտրական քարոզությանը նախորդող ժամանակահատվածում ԿԸՀ եւ Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից իրենց վերահսկողական լիազորությունների բարեխիլոց իրականացմանը եւ նրանց գործողությունների ու անգործության նկատմամբ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացմանը: Եթեույթին անդրադառնալով հանդերձ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն, ինչ վերաբերում է դատարանների կողմից օրենքի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ դիմումներին,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ապա ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի համաձայն դատական ակտերը սահմանադրական վերահսկողության օբյեկտ չեն, ուստի դրանց բովանդակային գնահատումը դուրս է սահմանադրական դատարանի իրավասության շրջանակներից: Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ընտրությունների ժամանակ թեկնածուների գրանցման շուրջ առաջացած վեճերին, որոնք պետք է լուծվեն նախընտրական փուլում եւ որոնց լուծման իրավասությունը վերապահված է ընդհանուր իրավասության դատարաններին, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա դառնալ չեն կարող, եւ որպես ապացուցողական նշանակության հիմք է ընդունվում ընդհանուր իրավասության դատարանների կողմից ընդունված վերջնական ակտը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը պետք է վերացնի ոչ միայն նշված օրենսդրական անհամապատասխանությունները, այլև ամրապնդի հատուկ հայցային վարույթի ինստիտուտի իրավական հիմքերը՝ առավել հստակեցնելով նման վարույթի իրականացման կարգը ու առանձնահատկությունները: Այս հարցին սահմանադրական դատարանն անդրադարձել է նաեւ իր 2007թ. մայիսի 8-ի UԴ-700 որոշման մեջ: Օրենսդրական հատուկ ձեւակերպումները եւ ներքին անհամապատասխանությունների վերացումը հնարավորություն կտան ընտրական գործընթացի մասնակիցներին առավել արդյունավետ պաշտպանել իրենց իրավունքները:

18. Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքում անկատար է նաեւ ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) եւ առաջարկությունների քննարկման կարգը սահմանող 401 հոդվածը, որն առավելապես պարունակում է այդ փաստաթղթերին ներկայացվող ձեւական պահանջները: Մինչդեռ, ընտրական գործընթացներն արդյունավետ վերահսկելու, ընտրությունների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու առումով անհրաժեշտ է, որպեսզի օրենսդրական փոփոխությունների արդյունքում հստակ նորմատիվ պահանջ ներկայացվի հատկապես ընտրական հանձնաժողովներում դիմումների (բողոքների) եւ առաջարկությունների ընթացակարգային քննարկմանն ու դրա արդյունքում պատճառաբանված որոշումներ կայացնելուն: Դա ծանրակշիռ նախադրյալներ կատեղծի այդ հանձնաժողովների պատասխանատվության բարձրացման, անհրաժեշտության դեպքում այդ որոշումների դատական վիճարկման, իսկ ընտրությունների արդյունքներով պայմանավորված գործընթացներում՝ նաեւ անձանց սահմանադրական իրավունքների դատական արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու ուղղությամբ:

19. Դիմող կողմը ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմնական փաստարկներից մեկը համարում է երկրի սահմաններից դուրս ընտրատեղամասեր չստեղծելը եւ արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման համար բավարար նախադրյալներ չապահովելը: Այս հարցի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ ԿԸՀ-ն գործել է օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, սահմանադրական դատարանն

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

արձանագրում է, որ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի փորձագետները վերլուծելով ՀՀ ընտրական օրենսգրքի 2007թ. փետրվարի 26-ի փոփոխությունները, հանձնաժողովի 2007թ. մայիսի 31-ի 71-րդ լիազումար նիստում կարծիք են ներկայացրել (CDL-EL(2007)014 եւ CDL-EL(2007)015), որն ստացել է հանձնաժողովի հավանությունը, համաձայն որի՝ նման պրակտիկա առկա է տարբեր երկրներում ու համապատասխան պետության կողմից երկրի ներսում ընտրություններ կազմակերպելու ինստիտուտի ընդունումը կամ դրա մերժումն ազգային օրենսդիր մարմինների խնդիրն է:

Միաժամանակ, անձանց իրավունքների պաշտպանության առնչությամբ տվյալ հարցը սահմանադրական դատարանում քննության առարկա կարող էր դառնալ ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների սահմանադրականության հարցը քննության առարկա դառնալու համատեքստում՝ համապատասխան դիմումի առկայության դեպքում եւ օրենքի սահմանադրականության գնահատման ընթացակարգով:

20. Դատաքննության ընթացքում «Խմայիմենտ» դաշինքի ներկայացուցիչ կարծիքով, ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու էական հիմք է այն, որ ՀՀ ԿԸՀ-ն Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմին չէ, եւ այդ մարմնի գոյությունը չի բխում Սահմանադրության 2-րդ եւ 5-րդ հոդվածների պահանջներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը Սահմանադրության նորմերի սուբյեկտիվ մեկնաբանման արդյունք է: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օրինական հիմքով կազմավորված մարմին է, որի պետական կարգավիճակի մասին իր իրավական դիրքորոշումը սահմանադրական դատարանն արտահայտել է 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ ՍԴ-664 որոշման պատճառաբանական մասում:

21. Դիմոդները կարենութել են նախընտրական քարոզության սկզբունքների պահպանումը երաշխավորելու հիմնախնդիրը: Ինչպես նշվում է նաև Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության 13.05.2007թ. նախնական եզրակացությունում՝ «Ընտրական օրենսգիրքը չի սահմանում, թե ինչ է քարոզությունը, թե արդյոք ընտրությունների մասնակիցների կամ երրորդ կողմի քարոզչական միջոցառումների կամ դրամահավաքների անցկացումը բույլատրվում է նախքան քարոզարշավի համար նախատեսված ժամանակաշրջանը»: Միաժամանակ նշվում է, որ «Վաղաժամ եւ անուղղակի քարոզությունն արգելող հստակ դրույթների քացակայությունը եւ կուսակցությունների ու քարոզությանն ուղղված միջոցների վերաբերյալ կանոնակարգման իրազործման հարցում թերությունների առկայությունը գործունեության շրջանակ են թողնում, որպեսզի ընտրություններում մրցակիցները գերազանցեն քարոզչական միջոցների սահմանափակումները»: Գործի քննության արդյունքները վկայեցին նման եզրահանգման ճշմարտացիությունը: ՀՀ ԿԸՀ-ի դիրքորոշումն այն է, որ նախընտրական վաղաժամ քարոզության նկատմամբ վերահսկողության իրականացումն իր խնդիրը չէ, եւ այն առավելապես հասարակական կազմակերպությունների գործառույթ է դարձել:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նախընտրական քարոզչության ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետի նորմերի խախտումների առնչությամբ կողմերի փաստարկների համադրումը, ՀՀ դատախազությունից ստացված պաշտոնական տեղեկատվությունը, գործի նյութերի վերլուծությունը վկայում են, որ դիմողներին չի հաջողվել հետևողական կերպով իրացնել օրենսգրքի 18 հոդվածի 8-րդ կետով իրենց վերապահված իրավունքը: Սահմանադրական դատարանը հասուլ կարենում է ընտրական գործընթացներով պայմանավորված բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ պահանջների կատարումը (պահպանումը) այդ գործընթացի բոլոր փուլերում, որը կայուն իրավական նախադրյալ է ընտրական խախտված իրավունքները սահմանադրական-արդարադատական կարգով պաշտպանելու համար:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական ոչ բավարար կարգավորման են ենթարկված քվեարկությանը նախորդող գործընթացների հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես, հատակ եւ միակերպ ընկալելի կերպով սահմանման կարիք ունի «նախընտրական քարոզչություն» արտահայտությունը, որը, ինչպես վկայում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների 2007թ. գործընթացների հետ կապված պրակտիկան, հաճախ նույնացվել է «քաղաքական գործընթացներ», «քարոզչությանը նախորդող ու դրա անցկացման ժամանակաշրջան» եւ այլ արտահայտությունների հետ: Դրան, նախ, նպաստել է նախընտրական քարոզչության՝ որպես սահմանադրութեն երաշխավորված ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման ինստիտուտի, միաժամանակ եւ իրարամերժ կարգավորումը «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածում եւ ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «նախընտրական քարոզչության» բովանդակության եւ ժամանակի մեջ այդ ինստիտուտը կիրառելու միակերպ (որոշակի) կարգի եւ պայմանների նախատեսումը ՀՀ ընտրական օրենսգրքում, որը երաշխիք է նաև օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետի եւ 19-23 հոդվածների՝ ընտրական գործընթացներով պայմանավորված, սահմանափակումների միարժեք կիրառումն ապահովելու համար:

22. Ընտրական իրավունքի պաշտպանությունը, հատկապես սահմանադրական արդարադատության շրջանակներում, չի ենթադրում ձեւական մոտեցում՝ թե որքանով են խախտվել մարդկանց ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքները: Հարցն ունի ընդգրկման ավելի լայն շրջանակ եւ վերաբերում է ընտրությունների հանրային գործառույթին՝ թե ինչ կերպ եւ ինչպիսի վստահությամբ է ձեռափորկում ներկայացուցչական կառավարման համակարգը, ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը եւ ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, ինչպիսին է անհատների հասարակական վարչագիծն այս գործընթացում: Ուստի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության պարտավորությունն է եւ ոչ թե առանձին քաղաքական միավորումների կամ անհատների: Դրանից

Եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից է բխում նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ «Պետությունը, օրենսդրությամբ վերապահված իրենց լիազորությունների շրջանակում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմիններն ու պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար»։ Ուստի պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի.

- ա) ընտրական օրենսդրությունը գերծ լինի ընտրական իրավունքի արդյունավետ իրացումը խոչընդոտող քերություններից,
- բ) քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից,
- գ) քացառվի քաղաքական ու քարեզործական գործունեության միատեղումը,
- դ) ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը։

ՀՀ Սահմանադրության 2 եւ 4 հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքների համաձայն՝ իրավական պետության համար ելակետայինն ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության օրենտրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը կքացարի առաջնային մանդատով օժտված իշխանության ներկայացուցչական մարմինների ձեւավորման գործում քաղաքական եւ գործարար շահերի անմիջական միահյուսման որեւէ հնարավորություն։

23. «Օրինաց երկիր» եւ «Նոր ժամանակներ» կուսակցությունների ներկայացուցիչներն առաջ քաշեցին քազմաքիվ ընտրատեղամասերում համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների արձանագրությունների ապօրինի փոփոխությունների կամ սխալ լրացման խնդիրը։ Դիմողների ներկայացրած եւ պատասխանող կողմից պահանջված արձանագրությունների վերլուծությունը վկայեց, որ հիմնական հարցը վերաբերում է այնպիսի սխալների, որոնք ընտրական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասի հիմքերով իրավասու էին վերացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունն ստուգելիս։ Միաժամանակ պարզվեց նաև, որ մի շարք ընտրական տեղամասերի անփոփիչ արձանագրություններ փոփոխվել են օրենքի պահանջների խախտմամբ, եւ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, թիվ 18/43, 20/36, 23/39, 20/47, 23/41, 41/14 տեղամասերում անփոփիչ արձանագրությունների փոփոխության եւ գործում առկա այլ նյութերի օրինականությունը պարզելու նպատակով դրամք տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ կազմված արձանագրու-

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

թյունների հետագա փոփոխություններն անվստահություն են առաջացնում ընտրական գործընթացի նկատմամբ և ՀՀ ընտրական օրենսգրքի 63 հոդվածի 1-ին մասում պետք է հստակ ու կոնկրետ նշվեն արձանագրության այն տվյալները, որոնք ոչ մի դեպքում փոփոխության ենթակա չեն: Միաժամանակ, գնահատելով վեճի առարկա արձանագրությունների փոփոխությունները՝ ընտրությունների արդյունքների վրա ազդելու տեսանկյունից, սահմանադրական դատարանը ելուս է այն փաստից, որ անձտությունների վերահաշվարկած չափն ավելանում է շորջ 3 հազարով: ՀՀ ընտրական օրենսգրքի 115 հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ անձտությունների չափը չի կարող հիմք հսնդիմանալ հանձնանական ընտրակարգով ընտրություններն անվավեր ճանաչելու համար: Նոյն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անձտությունների չափն ազդեցություն է ունենում մանդատները բաշխելիս, իսկ 5 կամ 7 տոկոսի սահմանագիծը հաշվարկելիս, եթե այդ չափը նոյնիսկ փոփոխությունների է ենթարկվել, ապա ընտրության արդյունքի որեւէ փոփոխության չի հանգեցրել: ՀՀ սահմանադրական դատարանը քննում է ոչ թե վերացական, այլ կոնկրետ գործ, եւ նշված պարագայում անձտությունների չափն ազդեցություն չի ունեցել դիմողների ստացած քվենների վրա: Բացի դրանից, դիմողների կողմից ներկայացված թիվ 14/46, 14/64, 15/19, 15/61, 15/64, 16/19, 16/33, 16/52, 17/30, 17/35, 17/36, 17/72, 21/16, 23/32, 23/58, 28/31, 36/42, 36/43, 38/22, 40/54 եւ թվով 60-ից ավելի այլ տեղամասերի արձանագրությունների համեմատական վերլուծությունը վկայեց, որ դիմոդների կողմից նշված մասնակի փոփոխությունները կատարվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 63 հոդվածի պահանջների հիման վրա եւ որեւէ ազդեցություն չեն ունեցել կուսակցությունների օգտին տրված ձայների քանակի վրա:

Ընդհանուր առմամբ, ընտրական հանձնաժողովներում ներգրավվել են թվով 17685 անդամներ: Համամասնական ընտրակարգով անցկացված ընտրություններում թվով 22 կուսակցություններ եւ կուսակցությունների մեկ դաշինք ընտրական հանձնաժողովներում ունեցել են թվով 40766 վստահված անձինք: 1923 տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ՀՀ ընտրական օրենսգրքի 402 հոդվածով սահմանված կարգով դիմում ներկայացնելու իրավունք են ունեցել թվով 100 հազարից ավելի անձինք, ընտրախախտումների վերաբերյալ ներկայացվել է թվով ընդամենը 32 դիմում, որոնցից 23-ը՝ դրա անմիջական իրավունքը չունեցող սուբյեկտների կողմից: Ընդունում, «Խմայիչմենու» դաշինքն ունեցել է 336 վստահված անձ, «Հանրապետություն» կուսակցությունը՝ 1222, «Նոր ժամանակները»՝ 803, իսկ «Օրինաց երկիր» կուսակցությունն ունեցել է 3181 վստահված անձ եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներում 1923 անդամ: Այս բոլորից միայն երեք անձ է վերահաշվարկի պահանջ ներկայացրել:

Ինչպես բխում է գործի նյութերից, ընտրությունների նախնական եւ վերջնական արդյունքների միջեւ տարբերությունը՝ ՀՀ ԿԸՀ-ի ամփոփիչ արձանագրության ելակետային տվյալների եւ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) օգտին տրված ձայների քանակով, տատանվում է 0.15-ից 1.5 տոկոսի սահմաններում:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

24. Գործի քննությունը վկայեց միջազգային դիտորդական առաքելության այն եզրակացության հիմնավորվածությունը, որ չնայած տեղ գտած օրենսդրական ու կազմակերպական թերացումներին ու առանձին օրինախախտումներին, «ակներեւ եւ դինամիկ քարոզչություն է նկատվել թե՛ համամասնական եւ թե՛ մեծամասնական ընտրակարգերով առաջադրված շատ թեկնածուների կողմից, որն անցավ բույլատրելի միջավայրում»։ Չնայած նախընտրական քարոզչության ընթացքում իրավական ու կառուցակարգային թերացումներին, առանձին դեպքերում օրենսդրության պահանջների ոչ պատշաճ կատարմանը, այդուհանդերձ, դրանց ծավալն ու բնույթը բավարար հիմք չեն հանդիսացել ՀՀ ԿԸՀ-ի կողմից ընտրությունների արդյունքներով այլ որոշում կայացնելու համար։

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների 2007թ. ընտրական գործընթացներով եւ ընտրական օրենսգրքի փոփոխություններով պայմանավորված էապես փոխվել է ընտրական վեճերի բնույթը, վերացել են երիտասարդ ժողովրդավարական համակարգերին բնորոշ մի շարք ընտրախախտումներ, մեծացել է ընտրողների քաղաքական ակտիվությունը, որի արդյունքում էականորեն խստացավ նաև ընտրախախտումների եւ, մասնավորապես՝ նախընտրական քարոզչության սկզբունքների խախտման քացառման եւ իրավասու պետական մարմինների վերահսկողական գործունեության առավել կանոնակարգման վերաբերյալ հասարակական պահանջը։ Այդ առնչությամբ սահմանադրական դատարանը վերահսկատում է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ընտրական գործընթացի սուբյեկտներին հավասար հնարավորությունների ընձեռումը սերտորեն առնչվում է ընտրողների կարծիքի ձեւավորմանը եւ ենթադրում պետական մարմինների չեզոքություն՝ նախընտրական քարոզչության, զանգվածային լրատվամիջոցների լուսաբանումների նկատմամբ։ Սակայն ընտրական գործընթացների կազմակերպման եւ անցկացման միջազգային իրավական չափանիշների անվերապահ պահպանման անհրաժեշտությունից ելնելով, սույն գործով հարկ է նշել, որ նախընտրական քարոզչության իրականացման արդարության եւ ազատության սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնքան տարածական, որ բացառվի խոսքի, տեղեկատվության ազատության, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների՝ սեփական տեսակետ ունենալու եւ այն ներկայացնելու իրավունքի իրականացումը։

25. Կուսակցության՝ որպես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների համամասնական ընտրակարգով ընտրական գործընթացի սուբյեկտի, գործունեությունը կարգավորվում է նախ սահմանադրախրավական նորմատիվ սկզբունքի մակարդակով։ «Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության իրապարակայնությունը» (ՀՀ Սահմանադրության 7 հոդված)։ Այդ սկզբունքի կիրառման երաշխավորմանն ու ապահովմանն են կոչված «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածում ամրագրված դրույթները։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջիններս կարող են բավարար հիմք հանդիսանալ ընտրական գործընթացներում կուսակցություն-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ների ֆինանսական գործունեության վերահսկողության արդյունավետության օրենսդրական ապահովման խնդրում, եթե վերահսկման մեխանիզմները ներդաշնակ լինեն օրենքի պահանջին: Սակայն գործի քննությունը վկայեց, որ այդ հարցում առկա են օրենսդրական ու կառուցակարգային թերացումներ: Մասնավորապես, վերահսկման կարիք ունի ՀՀ ընտրական օրենսգրքի 18 հոդվածի 7-րդ կետը, որը պետք է վերաբերի ոչ միայն նախընտրական քարոզությանը, այլ ընդհանուրապես կուսակցություններին արգելվի անօրինական ցանկացած գործողության կատարումը: Միջազգային պրակտիկան վկայում է, որ թափանցիկ եւ արդյունավետ վերահսկողության միջոցը կուսակցությունների ֆինանսական գործունեության պարբերական ու անկախ հաշվեքննության կազմակերպումն է: Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է ակտիվ քայլեր ձեռնարկել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. ապրիլի 8-ին ընդունած՝ «Քաղաքական կուսակցությունների եւ ընտրական գործնքացների ֆինանսավորման ընթացքում կոռուպցիայի դեմ միասնական կանոնների մասին» հանձնարարականի դրույթները ներպետական օրենսդրության մեջ համակարգային ձեռվ ամրագրելու ու երաշխավորելու ուղղությամբ:

26. Սահմանադրական դատարանը գտնում է, որ համամասնական ընտրակարգով ՀՀ ԱԺ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված յուրաքանչյուր վեճ պետք է քննության առարկա դառնա կոնկրետ ընտրական իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ հաշվի առնելով ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղ գտած՝ ՀՀ ընտրական օրենսգրքի եւ սահմանադրական իրավունքների այնպիսի խախտումները, որոնք կարող էին հիմք ծառայել այլ որոշում կայացնելու համար: Խոսքը վերաբերում է ընտրական գործնքացում տեղ գտած եւ ժամանակին բացահայտված ու իրավաբանորեն անհրաժեշտ հիմնավորմամբ ներկայացված այնպիսի խախտումներին, որոնք, պահիվ ընտրական իրավունքի պաշտպանության հարցով ներկայացված ընտրական վեճի դեպքում, վկայում են այդ իրավունքի պատշաճ իրացման հնարավորության բացառման մասին: Սույն գործի քննությունը վկայում է, որ այդ հնարավորությունները հիմնականում երաշխավորված են եղել: Սիամամանակ, սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն օրենքով սահմանված կարգով հաստատված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա եւ վկայեին ընտրության արդյունքներն ընտրողների իրական կամարտահայտմանը չհամապատասխանելու մասին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի հիմքերով գնահատելով սույն գործով կողմերի ներկայացրած դիրքորոշումներն ու փաստարկները, վերլուծելով դիմող, պատասխանող կողմերի եւ հարակից պատասխանողների՝ սահմանադրական դատարան ներկայացրած նյութերը, կոնկրետ ընտրական վեճի շրջանակներում գնահատելով

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կողմերի ներկայացրած ապացուցողական նշանակություն ունեցող փաստերը եւ գործի քննության ընթացքում ձեռք բերված մյուս ապացույցները, սահմանադրական դատարանը գտնում է, որ ԿԸՀ-ի կողմից ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2007թ. մայիսի 12-ի ընտրությունների արդյունքներով այլ որոշում ընդունելու հիմնավոր պատճառներ չեն եղել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 74 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007թվականի մայիսի 19-ի թիվ 149-Ս որոշումը բողնել ուժի մեջ:

2. Թիվ 18/43, 20/36, 20/47, 23/39, 23/41, 41/14 տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրություններում փոփոխությունների եւ այլ նյութերի օրինականությունը պարզելու նպատակով դրանք տրամադրել ՀՀ դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**10 հունիսի 2007 թվականի
ՍԴԱ-703**



ԵՐԵՎԱՆՅԱՆ 12-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸԸ

Հոկտեմբերի 5-ից 6-ը կայացավ Երևանյան 12-րդ միջազգային խորհրդաժողովը՝ «Մարդու իրավունքների պահպան և պաշտպանության բնագավառում սահմանադրական դատարանների և մարդու իրավունքների պաշտպանների համագործակցության միջազգային փորձը» թեմայով:

Այս տարի խորհրդաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցներ» եվրոպական հանձնաժողովը և «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս» կազմակերպությունը:

Խորհրդաժողովին մասնակցում էին Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար Զ. Բուրիբիոն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ Ժ.Պ. Կոստան, 30-ից ավելի երկրների սահմանադրական արդարադատության մարմինների, միջազգային միշարք հեղինակավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայաստանից՝ ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, իրավունքի ոլորտի մասնագետներ, նախարարներ, պատգամավորներ, դատավորներ, դատախազության աշխատակիցներ, գիտնականներ, դասախոսներ, քաղաքական գործիչներ, լրագրողներ:

ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանն իր բացման խոսքում կարևորելով թեմայի արդիականությունը մասնավորապես նշեց, որ իրավական, ժողովրդավարական պետության կայացման առաջնահերթ գրավականը իրավունքի գերակայության երաշխավորումն է, որը հնարավոր է իրականացնել այնտեղ և այնքանով, որտեղ և որքանով երաշխավորված, ապահովված ու պաշտպանված են մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Խսկ սահմանադրական արդարադատության մարմինները և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որքան էլ որ յուրահատուկ առաքելություն ունեն մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության ոլորտում, լնդիանրականն այն է, որ այս ինստիտուտների սերտ համագործակցությունն անհամեմատ ավելի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ամուր նախադրյալների է ստեղծում իրավունքի գերակայության երաշխավորման համար:

Այս ինստիտուտների համագործակցության կարևորությունն իրենց բացման խոսքում շեշտեցին և՝ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար Զ. Բուրժիփոն, և՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանը, այն դիտարկելով որպես ժողովրդավարական պետություն կառուցելու անհրաժեշտ պայման:

ՀՀ ԱԺ նախագահ Տ. Թորոսյանն իր ողջունի խոսքում մարդու իրավունքների պաշտպանի և սահմանադրական արդարադատության ինստիտուտի համագործակցությունը գնահատեց որպես փոխարացնող գործառույթ, որը կարևոր դեր ունի նաև ներպետական մյուս կառույցների համար, մարդու սահմանադրական իրավունքների անհարկի սահմանափակումներ առաջացնող իրավական ակտերի կանխարգելման տեսանկյունից:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախագահ Ժ. Պ. Կոստան և Մարդու իրավունքների պաշտպանի միջազգային ինստիտուտի Եվրոպական տարածքային նախագահ Պ. Կոստելկան կարևորելով խորհրդաժողովում քննարկման դրված թեման, արդյունավետ աշխատանք և հաջողություն մաղթեցին խորհրդաժողովի մասնակիցներին:

Խորհրդաժողովի չորս նիստերի ընթացքում, աշխատանքներն առավել արդյունավետ ու գործնական դարձնելու համար, նախատեսված էր մասնակիցների գեկուցումները լսել ըստ երկրների: Թե՛ տվյալ երկրի մարդու իրավունքների պաշտպանը և թե՛ սահմանադրական արդարադատություն իրականացնող կառույցի ներկայացուցիչը այս սկզբունքով կարողացան ավելի ամբողջականորեն ներկայացնել քննարկվող ոլորտի իրենց երկրում առկա իրավիճակը:

Բազմաթիվ երկրների ներկայացուցիչներ խորհրդաժողովի մասնակիցներին տվյալ երկրի փորձը մատուցելուց բացի, նրանց հաղորդակից դարձրեցին գոյություն ունեցող հիմնախնդիրներին ու անդրադարձան դրանց լուծման իրենց մոտեցումներին:

Խորհրդաժողովում կարդացված գեկուցումները, մեկ անգամ ևս ակնհայտ դարձրեցին այն փաստը, որ երես եվրոպական մի շարք կայացած երկրներում պետական տարրեր կառույցների ներդաշնակ ու շահագրգիռ համագործակցության շնորհիվ ծնավորվել են մարդու սահմանադրական իրավունքների իրավական պաշտպանության որոշակի երաշխիքներ, ապա անցումային երկրներում, ուր անբավարար է իրավական ու քաղաքական մշակույթի մակարդակը, հասարակության իրավագիտակցությունը, խեղաքյուրված են ժողովրդավարական արժեքները, անկատար են օրենսդրական ու կառուցակարգային համակարգերը՝ ավելի շատ են լուծում պահանջող հիմնախնդիրները:

Ավանդական դարձած երևանյան միջազգային խորհրդաժողովները, որոնք թե՛ կազմակերպական և թե բովանդակային առումով բարձր գնահատականների են արժանանում յուրաքանչյուր տարի, մեծ հնարավորություն են ընձեռում մասնակիցներին ոչ միայն հաղորդակցվելու այլ երկրներում կուտակված դրական փորձին, այլև, բազմաթիվ տեսական ու

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

գործնական բնույթի հիմնախնդիրների քննարկումները նպաստում են իրենց երկրում նմանատիպ իրավիճակներն ավելի դյուրին շտկելու: Երևանյան 12-րդ խորհրդաժողովը, նույնականացնելու հիմք ստեղծեց գտնելու հիմնահարցերի պատասխաններն ու արդյունավետ լուծման մոտեցումները և ավելի ճիշտ կողմնորոշվել մարդու իրավունքների իրացման համար նախադրյալներ ապահովելու, սահմանադրական իրավունքի անմիջական գործողությունը երաշխավորելու հարցում:

Խորհրդաժողովը անդրադարձավ ոչ միայն մարդու խախտված իրավունքների վերականգնման հիմնախնդիրներին, այլև մարդու իրավունքների երաշխավորման ու ապահովման մեխանիզմների կատարելագործմանը:

Մարդու իրավունքների պաշտպանները ներկայացրեցին թե՛ կոնկրետ, և թե՛ վերացական հսկողության որոշ դրվագներ իրենց աշխատանքային փորձից, նշեցին ներպետական տարրեր կառույցների հետ ունեցած բազմաբնույթ հիմնախնդիրները, կարևորեցին գործողության մեջ դրված, բայց մարդու իրավունքների խախտման հնարավություն պարունակող, այս կամ այն օրենքի մեջ եղած բացքողումները ժամանակին նկատելու և հետագա գործողությունը կասեցնելու ճանապարհով մարդու իրավունքների խախտման կանխարգելումը:

Ինչպես հայտնի է, Հայաստանում միայն 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ներդրվեց անհատական դիմումների ինստիտուտը, բացի այդ, մարդու իրավունքների պաշտպանը հնարավորություն ստացավ դիմելու սահմանադրական դատարան: Սակայն, յուրաքանչյուր երկիր օրենսդրական տարրեր լիազորություններ է ամրագրում մարդու իրավունքների պաշտպանի և Սահմանադրական արդարադատությունի իրականացնող կառույցի համար:

Օրինակ, Հայաստանում չնայած մարդու իրավունքների պաշտպանին Սահմանադրությամբ վերապահված է և՝ կոնկրետ, և՝ վերացական վերահսկողության իրավունքը, սակայն նա կարող է դիմել Սահմանադրական դատարան միայն նորմատիվ իրավական ակտերի սահմանադրությանը համապատասխանելու խնդիրը պարզելու հարցով, այն դեպքում, եթե քաղաքացիների իրավունքներն, ավելի հաճախ, ուսնահարվում են անհատական իրավական ակտերով: Թե այս, և թե խորհրդաժողովում արծարծված բազմաթիվ հիմնախնդիրներ¹, մասնակիցների համոզմամբ, յուրաքանչյուր երկրում իրենց լուծումները կգտնեն միայն իրավունքի գերակայության երաշխավորմանը պետական ու հասարակական շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու պարագայում, որն ամենազորեղ լծակն է պետական ու հանրային մարմինների գործառնական լիազորությունները հստակեցնելու և կառուցակարգային անհրաժեշտ լուծումներ գտնելու համար:


Գ. Ռ-ՀԱՅՈՒՆԻ

¹ Երևանյան 12-րդ խորհրդաժողովի նյութերն ամբողջությամբ կտպագրվեն 2007 թվականի «Ալմահան»-ում

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ



**2007 թվականի հոկտեմբերի 15-ին
լրացավ ՀՀ սահմանադրական
դատարանի անդամ
Կիմ Բալայանի ծննդյան 60-ամյակը:
ՀՀ սահմանադրական դատարանը,
աշխատակազմը և տեղեկագրի
խմբագրական խորհուրդը ջերմորեն
շնորհավորում են
Կիմ Բալայանին ծննդյան 60-ամյակի
առթիվ, ցանկանում
քաջառողջություն, երջանկություն,
անսպառ եռանդ ու հաջողություններ:**

Հունիսի 11-15-ը Սահմանադրական
իրավունքի միջազգային ասոցիացիայի
7-րդ Վեհաժողովը կայացավ Արենքում՝
որին մասնակցում էին 70 երկրների մոտ
500 պատվիրակներ:

Հիմնական թեման էր «Սահմանադրա-
կան իրավունքի սահմանների վերահմաս-
տավորումը»:

Որպես Վեհաժողովի լիիրավ անդամ, աշ-
խատանքներին մասնակցում էր ՀՀ սահմա-
նադրական դատարանի նախագահ, իրավա-
գիտության դրկտոր, պրոֆեսոր Գագիկ Հա-
յրուրյանը: Քննարկումներն անցկացվե-
ցին 4 լիազումար եւ 16 սեղիոն նիստերում:

Լիազումար նիստերի թեմաներն էին.

1. Սահմանադրությունը հակասության
եւ կայունության միջեւ

2. Փիլիսոփայական հակադրությունների
սպառնալիքը սահմանադրականությանը

3. Կրոն, պետություն եւ հասարակու-
թյուն

4. Սահմանադրական իրավունքի մի-
ջազգայնացումը

Սեղիոնն նիստերը գումարվեցին հետեւ-
յալ թեմաներով՝

1. Սահմանադրության ստեղծմանը հա-
սարակության ներգրավումը

2. Սահմանադրությունը եւ արտակարգ
իրավիճակները

3. Ընտրական համակարգեր. լեզվա-
մության եւ քաղաքական անկայունության
միջեւ հավասարակշռության հաստատումը

4. Եվրոպական Սահմանադրությունը եւ
ժամանակակից սահմանադրագիտությունը

5. Քաղաքական առումով դյուրազգաց
հարցերի դատական վերահսկողությունը

6. Ինչպիսի սահմանադրական կառու-
ցակարգեր կարող են օգտագործվել պե-
տության մեջ առճակատումները հաղթա-
հարելու համար

7. Սահմանադրական տեսության ու
դրկտինայի վերջին տարրերակները

8. Սահմանադրությունները եւ գլոբալ
ահարեկչությունը

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

9. Սահմանադրությունը վերափոխելու Հյուրերին հետաքրքրում էին սահմա- նադրական վոփիոնություններից հետո ՀՀ
10. Սահմանադրական երաշխիքները սահմանադրական դատարանի գործունե- սեփականաշնորհման ոլորտում ության հետ կապված հարցերը, մասնավո-
11. Վերազգային սահմանադրություն- րայես անհատական դիմումների ընդուն- ները դաշնային սահմանադրական պետու- ման եւ քննության ընթացակարգը, ինչպես թյուններում նաև սահմանադրական դատարանի գոր-
12. Սեկուլյարիզմը եւ սահմանադրակա- ծակցությունը Եվրախորհրդի «Ժողովրդա- նությունը
13. Սոցիալական իրավունքների արդա- կան հանձնաժողովի (Վեմետիկի հանձնա- րացի բնույթը ժողովը) հետ:
14. Սեռային հավասարությունը, կրոնա-
կան ազատությունը եւ մշակույթը
15. Հավասարակշռությը եւ համաս- տարանը եւ Սահմանադրական իրավունքի նությունը սահմանադրական վերահսկողու- կենտրոնը ավանդաբար ամենամյա ընդու-
թյունում նելություն են կազմակերպում՝ նվիրված ՀՀ
16. Սահմանադրություններ, կոռուպցիա Սահմանադրության ընդունման օրվան: Հու-
թիվ 4-ին ՍԴ Շահամիրյանների անվան

Հունիսի 21-ին հրաժեշտի այցով սահ- սրահում հյուրնկալվել էին պետական մանադրական դատարանի նախագահ բարձրաստիճան պաշտոնյաններ, ԱԺ մշ- Գ. Հարությունյանի հետ հանդիպեց Հա- տական հանձնաժողովների նախագահներ, յաստանում Գերմանիայի Դաշնային Հան- քաղաքական գործիչներ, իրավագետներ: բազետուրյան արտակարգ եւ լիազոր դես- Ընդունելով հյուրերին, Սահմանադրա- պան տիկին Հայկ Ռենատե Փայշեն: Հա- կան իրավունքի կենտրոնի խորհրդի նախա- յաստանում իր պաշտոնավարման երեք օահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր տարիների ընթացքում (2004թ. օգոստոսից) Գագիկ Հարությունյանը բոլորին շնորհավո- տիկին Փայշեն մի քանի անգամ այցելել է բեց ՀՀ Սահմանադրության ընդունման օր- սահմանադրական դատարան, պարոն Հա- վա՝ հունիսի 5-ի առթիվ, ապա հանդես եկավ րությունյանի հետ զրույցներ վարել Հայաս- հակիրճ գեկուցումով: Զեկուցումը նվիրված տանում սահմանադրական բարեփոխում- էր Սահմանադրական իրավունքի միջազ- ների, ընտրական օրենսգրքի ստեղծման, գային ընկերակցության 7-րդ միջազգային ընտրական համակարգի կատարելագործ- կոնքեսին, որը հունիսի 11-16-ը անցկացվել ման, սահմանադրական արդարադատու- էր Արենքում:

թյան եւ այլ հարցերի շուրջ: Երկուստեք Կոնգրեսին մասնակից Հայաստանի հույս հայտնեցին, որ հայ-գերմանական պատվիրակության համար, անշուշտ, հա- համագործակցությունը հետայսու էլ զար- ժամանակակից կատարելագործ- կան իրավունքի միջազգային ընկերակցու-
թյան նախագահ պատվիրակության պատվիրակության համար, անշուշտ, հա- կան իրավունքի միջազգային ընկերակցու-
թյան նախագահ պատվիրակության պատվիրակության համար, անշուշտ, հա- թյան նախագահ պատվիրակության պատվիրակության համար, անշուշտ, հա- թյան նախագահ պատվիրակության պատվիրակության համար, անշուշտ, հա-

Հունիսի 3-ին սահմանադրական դա- թյան նախագահ, պրոֆեսոր Շերիլ Սանդեր- տարանի նախագահ Գագիկ Հարություն- սի հաշվետու գեկուցման մեջ հատկապես յանն ընդունեց Եվրոպայի խորհրդի ար- առանձնացված այն դիտարկումը, ըստ որի տարին գործերի նախարարների կոմիտեի վերջին չորս տարիներին միջազգային միջո- մոնիտորինների՝ Ազոյի հանձնախմբի պատ- ցառումներից երկուսն են առանձնանում. վիրակությանը՝ ԵԽ-ում Շվեյցարիայի դեսպան մեկը՝ վերոնշյալ կոնքեսի նախապատ- Պեր Սյոգրենի գլխավորությամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

նադրական դատարանի ստեղծման 10-ամ- Ընդունելությունը Շահամիր եւ Հակոբ յակի կապակցությամբ երեւանյան միջազ- Շահամիրյանների անվան սրահում էր, եւ գային կոնֆերանսի (2006թ.) կազմակերպու- զրոյցը հենց հայ օրենսգիրների մասին մը: Հայաստանի սահմանադրական դատա- պատմությամբ էլ սկսվեց: Շահամիրյան- րանի եւ ՀՀ սահմանադրական իրավունքի ներն իրենց երազած ապագա Հայաստա- կենտրոնի դրական փորձը նկատի ունենա- նի համար գրել են «Որոգայր փառաց» ան- լով, կարեւորվեց Հայաստանի հետ հետագա վամբ Սահմանդրությունը, որը 14 տարով համագործակցության անհրաժեշտությունը: նախորդում է ԱՄՆ Սահմանադրությանը:

Շարունակելով ներկայացնել Արենքում Զրոյցը շարունակվեց հարց ու պա- անցկացված 7-րդ կրնգրեսի աշխատանքնե- տասխաններով, եւ ուսանողները հեռա- րը, սահմանադրական դատարանի նախա- ցան՝ իրենց բոլոր հարցերի սպառիչ պա- գահը համառոտ անդրադարձավ այն քն- տասխաններն ստանալով:

նարկումներին, որոնցում արծարծվել են աշ- խարհում սահմանադրային զարգացումների հիմնական միտումները:

Հուլիսի 24-ին ՍԴ նախագահ Գ. Հարու- թյունյանն ընդունեց ԱՄՆ-ի տարածաշրջա- նային ավագ դատավոր Զոն Մ. Ուոքերին:

Հյուրի խնդրանքով պարուն Հարություն- անվան սրահում ՍԴ նախագահ Գ. Հարու- յանը ծանոթացրեց ՍԴ կազմավորման թյունյանը ողջունեց հյուրերին եւ հանդիպ- պատմությանն ու գործունեությանը, ներկա- ման մասնակից ՍԴ կազմին ներկայացրեց յացրեց Հայաստանում սահմանադրական նրանց: Պարուն Սայերը ներկաներին պատ- արդարադատության իրականացման մեխա- մեց ԵԴ գործունեության, ստացված մեծա- նիզմները, դրանց իրականացման ուղիները: քանակ դիմումների (որոնց մեջ մեծ թիվ են նային ավագ դատավոր Զոն Մ. Ուոքերին:

ՍԴ-ի կողմից գործի քննության մեխա- կազմում նաեւ Հայաստանից ստացվածնե- նիզմներով հետաքրքրված հյուրի համար ըն) հետ տարբեր աշխատանքների մասին, մանրամասնվեց, որ ՍԴ որոշումները բաղ- կացած են երեք մասից՝ նկարագրական, կազմում նաեւ Հայաստանից ստացվածնե- նիզմներով հետաքրքրված հյուրի համար ըն) համար, պարուն Հարությունյանը կարեւու- րում արտահայտված իրավական դիրքորոշ- րեց ազգային համակարգում մարդու իրա- ումները իրավունքի իրացման աղբյուր են վունքների պաշտպանության խնդիրների դառնում, օգնում սահմանադրական արդա- լուծումը, որի արդյունավետ գործունեու- րադատության իրացման գործում:

Պարուն Ուոքերին իրազեկվեց նաեւ հոկ- յաստանից ԵԴ դիմումների քանակը:

տեմբերին կայանալիք միջազգային խորհր- դաժողովի մասին:

Հուլիսի 30-ին սահմանադրական դա- տարանի նախագահ Գ. Հարությունյանը տուրքան նորանշանակ դեսպան տիկին հյուրընկալեց ԱՄՆ-ի Հայկական Համագու- մարի կողմից իրենց արձակուրդի օրերին Անդրեա Վիկտորինին:

մարդի կողմից իրենց արձակուրդի օրերին Երկուստեք կարեւորվեց հայ-գերմա- Հայաստանում երկամսյա աշխատանքի նական համագործակցության ամրապն- եկած ուսանողների խմբին:

Օգոստոսի 29-ին ՍԴ նախագահ

Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստա- նում Գերմանիայի դաշնային Հանրապե- տարանի նախագահական դաշնային Հանրապե- տարանի տուրքանշանակ դեսպան տիկին

մարդի կողմից իրենց արձակուրդի օրերին Երկուստեք կարեւորվեց հայ-գերմա- Հայաստանում երկամսյա աշխատանքի նական համագործակցության ամրապն- եկած ուսանողների խմբին:

ՏԵՂԵԿԱԾՎՈՒԹՅՈՒՆ

պանների գործունեությամբ եւ այսօր պահմանադրական դատարանների գործունքանց արդյունավետ շարունակությունը նեության շուրջ, որը դիմումների ընդունման, տեսանելի է: Դրա վկայություններից մեկն գործերի քննության եղանակների ծանոթուայն է, որ շուտով՝ սեպտեմբերի 16-22-ը, թյան ու փորձի փոխանակման մեծ հնարավրատանի եւ Աղբեջանի ՍԴ նախագահների հետ, Հարությունյանը հրավիրված է Գերմանիա՝ հանդիպումներ ունենալու պետական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Հյուրին հետաքրքրում էին ՍԴ-ի միջազգային կապերը, որոնք ներկայացնելով, պարոն Հարությունյանն առավելապես շեշտադրեց Երեւանյան միջազգային խորհրդաժողովների ավանդական լինելը, որոնց, ՍԴ նախագահների մակարդակով, մշտապես մասնակցում է մոտ երեսուն երկիր:

- Մենք Սահմանադրությունից սահմանադրական արդարադատության անցնելու խնդիր ենք լուծում, - պատմելով Հայաստանում սահմանադրական արդարադատության իրականացման միջոցների մասին, -ասաց պարոն Հարությունյանը, - շատ կարեւոր է, որ հասարակությունն իրազեկվի, սովորի, համակերպվի այն սկզբունքի կիրառմանը, որ Սահմանադրությունն ապրու արժեք է, արժեքային համակարգ:

Սեպտեմբերի 16-ից 22-ը «Իրավական և դատական բարեփոխումներ Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակ-մագործակցության ընկերության (GTZ) հրավերով Գերմանիա էին հրավիրվել Հայաստանի, Վրաստանի եւ Աղբեջանի սահմանադրական դատարանների նախագահները:

Գերմանիայի տարբեր քաղաքներում հանդիպումներ, զրոյցներ ու արդիական խնդիրների շուրջ քննարկումներ կայացան Դաշնային Գերագույն դատարանում, Դաշնային Սահմանադրական դատարանում (քաղաք Կարլսրուե): Այս-տեղ քառակողմ քննարկում կայացավ

սահմանադրական դատարանների գործունքանց արդյունակության շուրջ, որը դիմումների ընդունման, գործերի քննության եղանակների ծանոթուայն ու փորձի փոխանակման մեծ հնարավրատանի Աղբեջանի ՍԴ նախագահներին:

Պարոն Հարությունյանը Գերմանիայի ՍԴ նախագահ պարոն Յուրգեն Պավիլերիին առաջարկեց ՍԴ դատավորների կազմով այցելությունը գալ Հայաստան, որը սիրով ընդունվեց վերջինիս կողմից: ՀՀ ՍԴ-ն փոխայցելությունների այս գործելատն արդեն ավանդական է դարձել (ՍԴ կազմով այցելությունը Վրաստան եւ Վրաստանի ՍԴ կազմին հյուրիսկալելը, նույնը՝ Լիտվայի եւ Խոստանիայի սահմանադրական դատարանների առումով):

Կովկասյան երեք պետությունների ՍԴ նախագահների հանդիպումները շարունակվեցին Գերմանիայի Դաշնային արդարադատության, Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություններում, Դաշնային Նախագահի նախավայրում (ք. Բեռլին):

Այցելության ընթացքում եղան նաև ճանաչողական այցելություններ գերմանիայի տեսարժան վայրեր, պատմամշակութային կենտրոններ, քանգարաններ:

Սեպտեմբերի 27-ին ՍԴ նախագահ

Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Եզիփտոսի Արաբական Հանրապետության նորանշանակ դեսպան Վահիդ Էյդին Խսմայիլ Գալային:

Դեսպանին շնորհավորելով նշանակման առջիվ, պարոն Հարությունյանը ծանոթաց- բեր սահմանադրական դատարանի ստեղծման պատմությանը, գործունեությանն ու այն կարեւոր առաքելությանը, որ իրականացնում է ՍԴ-ն՝ երկրում սահմանադրական արդարադատության հաստատման համար: Նա շեշտեց, որ Սահմանադրական բարեփոխումներից հետո զգալիորեն բարձրացել է ՍԴ դերը, ծանրաբեռնվածությունը:

Հյուրի խնդրանքով պարոն Հարությունյանը ներկայացրեց ՍԴ միջազգային կապե-

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ըր՝ շեշտադրելով այդ կապերի խորացմանն Հայաստանից ԵԴ ներկայացված դի-ու աճրապնդմանը նպաստող մի շարք ձեռ- մումների քննության ընթացքին ծանոթաց-նարկումներ, ի մասնավորի՝ տեղեկատվու- թեց պարոն Կոստայի հետ Հայաստան թյունների ակտիվ փոխանակումները, սահ- ժամանակ ԵԴ դատավոր Ալվինա Գյու-մանադրական արդարադատության միջազ- լումյանը:

գային փորձներին նվիրված ձեռնարկների

հեղինակումը, սահմանադրական դատա- Հոկտեմբերի 10-ին ՍԴ նախագահ րանների կազմով փոխայցելությունները եւ Գ. Հարությունյանն ընդունեց Եվրախորհր- հատկապես երեւանյան ամենամյա միջազ- դի Մարդու իրավունքների հանձնակատար գային խորհրդաժողովների անցկացումը: Խոնակ Հանարքերգին եւ Եվրախորհրդի Մեկ շաբաթ անց բացվող եերթական խորհր- Մարդու իրավունքների հանձնակատարի դաժողովին կմասնակցեն 30 երկրների ՍԴ գրասենյակի ղեկավար Ալեքսանդր Գուսե- նախագահներ կամ անդամներ, օմքուսմեն- լին՝ խորհրդականներ Ռ. Չլաստիկի և Ս. ներ, Մարդու իրավունքների Եվրոպական Մինտանետի ուղեկցությամբ:

դատարանի նախագահ Ժան-Պոլ Կոստան, - Մենք Հայաստանում ուսումնասիրում Օմբուդսմենի միջազգային ինստիտուտի ենք արդարադատության համակարգը, - Եվրոպական տարածքային նախագահ ասաց պարոն Համարքերգը, - եւ կուզենայի Պ. Կոստելկան, հայտնի իրավագետներ ու Զեզանից իմանալ ՍԴ-ում քաղաքացիների սահմանադրագետներ:

անհատական դիմումների քննության ըն-

թացքի մասին: Դա մեզ կօգնի առաջիկա-

Հոկտեմբերի 4-ին Սահմանադրական յում ներկայացվելիք մեր առաջարկ-խոր-դատարանում կայացավ Մարդու իրա- Պարոն Հարությունյանը սպառիչ տե- խագահ Ժան Պոլ Կոստայի հանդիպումը ղեկություններ հաղորդեց հանձնակատա- ՍԴ դատավորների եւ աշխատակազմի թիմ՝ ի մասնավորի շեշտելով, որ երբ սահ- ինս: ԵԴ նախագահը Հայաստան էր այցե- մանադրական փոփոխություններից հետո լել ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանի անցյալ տարվա հուլիսի 1-ից քաղաքացի- իրավունքը նախնական պայմանավորվա- ները ստացան ՍԴ դիմելու իրավունք, մի- ծությունը կայացել էր Ստրաֆուրդում՝ Գ. այն մեկուկես տարվա ընթացքում ստաց- Հարությունյանի այցի ընթացքում: Ներկա- վեց 1 200 դիմում, որի 8 տոկոսը քննության յացնելով հյուրին, Գ. Հարությունյանը նախ է առնվել ու դեռ էլի քննության ենթակա դի- շնորհակալություն հայտնեց հյուրին՝ իրա- մումներ կան:

վերն ընդունելու եւ հաջորդ օրը երեւանյան Երկուստեք կարեւորեցին մարդու իրա- միջազգային ամենամյա խորհրդաժողովին փոնքների պաշտպանության խնդիրների մասնակցելու համար: Պարոն Կոստան հա- լուծման առաջնահերթությունը, սահմա- կիր ներկայացրեց ԵԴ գործունեություն՝ նադրական արդարադատության հասնելու ուշադրություն իրավիրելով ազգային դա- համար օրենսդրական դաշտի կատարելա- տական մարմինների աշխատանքի արդ- գործումը:

յունավետության վրա, որի արդյունքում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված շատ խնդիրներ իրենց լուծու- մը կգտնեն այդ ինստիտուտներում, եւ կպակասեն տվյալ երկրից ԵԴ տրվող դի- մումները:

ՍԴ մամուլի ծառայություն

Գրանցվել է << արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կողեզիայի թիվ 37/214 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 588171
Email: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 01. 11. 2007 թ.

Դասիչ՝ 77754
Գրաշափը՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500

*<<ՄԴ լրեղեկագիրը << կառավարությանն
առընթեր բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է
ազիճնախոսությունների արդյունքների
լրագրուման համար ընդունելի
պարբերականների ցանկում*